Մայրենի լեզու

III տարի 1907 թ.

491.99-8
Ա-82

ОГАН АХВЕРДОВ

Ի [illegible] յուշ.
[illegible]
Համալսարանին
1925 թ-ի 6 Փետրուարի

Սարգսոտ[illegible]

491.99-8
Ա-82
1005-10

ՅՈՎՀ. ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

(Պատկերներով)

Допущена Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго Учебнаго Округа къ употребленію въ училищахъ.

Գինը 40 կոպ.

Չորրորդ տպագրութիւն

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ
Տպարան Ա. Մալխասեանցի
1907

7948

20 FEB 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

755-95

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՔԱԺԻՆ

1. ՔՈՅՐ ԵՒ ԵՂԲԱՅՐ

Արամը և Սաթենիկը տանը մենակ էին մնացել։— «Արի, Սաթենիկ,—ասաց եղբայրը,—նայենք-տեսնենք, չենք կարող արդեօք մի համեղ բան գտնել ուտելու»։— «Եթէ դու կարող ես ինձ մի այնպիսի տեղ տանել, որ ոչ ոք չտեսնի մեզ, ինչու չէ, կըգամ»,—պատասխանեց քոյրը։—«Գնանք մառանը, այնտեղ լաւ-լաւ բաներ շատ կան և մեզ ոչ ոք չի տեսնիլ»։—«Ո՛չ, Արամ, այնտեղ մեզ մեր հարևանը կարող է տեսնել. նա դռանը փայտ է ջարդում»։— «Դէհ, ուրեմն գնանք խոհանոցը,—համոզում էր Արամը իւր քրոջը.—այնտեղ մի մեծ կճուճ մեղր կայ. մի-մի կտոր հաց կըվերցնենք, կըթաթախենք և կուտենք։»—«Խոհանոցումն էլ մեր հարևանի կինը կընկատէ մեզ. նա լուսամուտի առաջ նստած՝ թել է մանում»։— «Օ՜, ինչ վախկոտն ես դու,—բացագանչեց փոքրիկ բկլիկը.—եթէ այդպէս է, գնանք նկուղը խնձոր ուտելու. այնտեղ էլ խոմ ոչ ոք չի՞ նկատիլ մեզ»։—«Ա՜խ, սիրելի Արամ, դու կարծում ես, թէ նկուղում մեզ ոչ ոք չի՞ տեսնիլ... Մի՞թէ չըգիտես, թէ կայ Մէկը, Որը պատերի միջով անգամ տեսնում է և Որի աչքից մութ տեղերում էլ թագնուելն անկարելի է»։ Արամը վախեցաւ։—«Իրա՛ւ

ես ասում, Սաթենիկ, - ասաց նա.—Աստուած մեզ տեսնում է և այնպիսի տեղերում, ուր մարդկանց աչքը ոչինչ չի նկատիլ, ուստի թէ առանձին և թէ մութ անկիւններում մենք չպէտք է գործենք այն, ինչ որ չէինք համարձակուիլ անել ուրիշների մօտ և լոյսի առաջ։

2. ՍՏԱՀԱԿ ՈՐԴԻՆ

Մի գիւղացի ունէր մի որդի Աշոտ անունով։ Աշոտը շատ ստահակ տղայ էր և ամենևին ականջ չէր դնում հօր խրատներին։ Մի անգամ հայրը նրան տարաւ իրանց դռան առջևն ընկած գերանի մօտ և ասաց.

– Տես, Աշոտ, ինչքան որ դու ստահակութիւն անես, այնքան մեխ պէտք է խփեմ այս գերանի վրայ և ինչքան որ խելօք լինես, այնքան մեխ պէտք է հանեմ։

Բայց Աշոտը՝ փոխանակ ուղղուելու՝ աւելի ևս ստահակ էր դառնում, այնպէս որ գերանը շուտով ծածկուեց մեխերով։ Անց կացաւ մի ժամանակ։ Մի օր հայրը՝ որդուն խելօք տեսնելով՝ հանեց մեխերից մէկը։ Այնուհետև որդին հետզհետէ խելօքանում էր և հայրն էլ հանում էր մեխերը։

Վերջապէս մի օր հայրն ասաց Աշոտին.

– Ուրախացի՛ր, զաւա՛կս, ահա՛ մի մեխ էր մնացել գերանի վրայ, այն էլ հանում եմ։

Ասաց ու հանեց մեխը։ Սակայն Աշոտը, փոխանակ ուրախանալու՝ սկսեց լաց լինել։

– Ինչու՞ ես լաց լինում, զաւա՛կս, – հարցրեց հայրը. – չէ՞ որ աւելի պէտք է ուրախանաս, որովհետև բոլոր մեխերը հանուած են։ –

– Ա՛խ, հայրիկ, – պատասխանեց Աշոտը. – ճիշտ է՝ մեխերը հանուած են, բայց նրանց տեղերը մնում են։

3. ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Երեք ընկեր անտառի միջով միասին ճանապարհ էին գնում։ Դրանից միքանի օր առաջ այնտեղ զարհուրելի փոթորիկը կոտրատել և արմատախիլ էր արել բազմաթիւ ծառեր. հէնց նոյն իսկ ճանապարհի վրայ միքանի հսկայ կաղնիներ էին ընկած. բայց նրանցից ոչ հեռու՝ միմեանց մօտ կանգնած էին երկու փոքրիկ ծառ։

Ընկերներին սաստիկ զարմացրեց այն, որ փոթորիկը, այդքան մեծամեծ ծառեր տապալելուց յետոյ՝ այդ երկսին անվնաս էր թողել։

— Մօտ գնանք և տեսնենք՝ ինչումն է դրա գաղտնիքը, — ասաց ընկերներից մէկը։

Մօտեցան և սկսեցին նայել։ Այստեղ միայն նրանք նկատեցին, որ այդ փոքրիկ ծառերի արմատներն այնպէս պինդ էին հիւսուել միմեանց հետ, որ ոչ մի փոթորիկ չէր կարող խորտակել նրանց։

— Տեսնում ես, — ասաց միւսը, — թէ որքան մեծ նշանակութիւն ունին մտերմութիւնն ու բարեկամութիւնը։ Միայնակ մարդը, որքան էլ ուժեղ լինի նա, շուտ կընկճուի դժբաղդութեան առաջ. իսկ այն մարդը, որ ունի հաւատարիմ ընկեր ու բարեկամ, շատ թշուառութիւնների կըդիմադրէ։

4. ԵՐԵՔ ԲԱՐԵԿԱՄ

Մարդու մահը մօտեցել էր և նա իմաց արաւ իւր բարեկամներին, որ գան՝ վերջին հրաժեշտը տալու նրան։

Եկաւ առաջին բարեկամը։ - «Մնաս բարեա՛ւ, բարեկա՛մ, ես մեռնում եմ», — ասում է նրան մահամերձը։ — «Երբ մեռնես, ես մոմ կըվառեմ քո հոգու փրկութեան համար», — ասաց առաջին բարեկամը. ուրիշ ոչինչ։

Գալիս է երկրորդը և մահամերձին տեսնելուն պէս՝ սկսում է հառաչել և դառնապէս լաց լինել. փաթաթւում է հիւանդին, համբուրում նրան։—«Ինչո՞ւ ես հեռանում ինձանից, իմ թանկագին,—ասում է նա.—Ինչպէս բաժանուեմ քեզանից. ցաւալի է, շատ ցաւալի։ Չեմ թողնիլ քեզ, մինչև գերեզմանդ կուղեկցեմ»։—«Հարկաւոր է քահանայ հրաւիրել»,—մտածում է ինքն իրան այս բարեկամը։ Մահից մի քարի րոպէ առաջ եկաւ քահանան։ Հիւանդը խոստովանուեց և հաղորդուեց։ Հէնց այդ վայրկենին յայտնւում է և երրորդ բարեկամը և մեղմ ու քաղցր ձայնով շշնջում մեռնողի ականջին.—«Ես քեզանից յաւիտեանս չեմ բաժանուիլ»։

Մեռաւ մարդը և բարեկամներից իւրաքանչիւրը կատարեց իւր խոստումը։ Հարստութիւնը մոմ վառեց նրա համար։ Ազգականներն ու ծանօթները ուղեկցեցին նրան մինչև գերեզման։ Իսկ մարդու առաքինութիւնը նրանից անբաժան մնաց,—նա նրա հետ թէ դէպի երկինք՝ Աստուծոյ մօտ բարձրացաւ և թէ երկրիս վրայ նրա յիշատակը վառ պահեց։

5. ԵՂԲԱՅՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Երուսաղէմ քաղաքի տեղ երբեմն մի մշակուած դաշտ էր և տաճարի տեղը պատկանում էր երկու եղբօր, որոնցից մէկն ամուսնացած էր, միւսը՝ ամուրի։ Հնձի ժամանակ նրանք իրանց խուրձերը կապեցին և երկու հաւասար դէզ բարձրացնելով՝ թողին դաշտումը։

Գիշերն ամուրի եղբայրը մտածում է.—«Եղբայրս կնոջ և որդոց տէր է և նրանց պէտք է կերակրէ, ուստի իրաւացի չի լինիլ, որ նրա և իմ ունեցածը հաւասար լինին. գնամ, իմ բաժնից միքանի խուրձ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նրա բաժնին. եղբայրս չի տեսնիլ և չի ընդդիմանալ ինձ»։—Այս ասելով՝ նա գնաց, իւր մտածածը կատարեց։

Նոյն գիշերը միւս եղբայրն արթնանալով՝ ասաց իւր կնոջը.—«Եղբայրս ինձանից փոքր է և ամուսնացած չլինելով՝ ոչ ոք չունի, որ իրան օգնէ ու մխիթարէ. ուստի իրաւացի չի լինիլ, որ նրա և իմ ունեցածը հաւասար լինին։ Գնամ, իմ բաժնից միքանի խուրձ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նրա բաժնին. եղբայրս չի տեսնիլ և չի ընդդիմանալ ինձ։—Այս ասելով՝ նա էլ գնաց, իւր մտածածը կատարեց։

Հետևեալ առաւօտ եղբայրները դաշտ գնացին և շատ զարմացան, երբ տեսան, որ երկու դէզերն էլ հաւասար էին և անփոփոխ։

Միւս գիշերը դարձեալ նոյնն արին... Եւ այսպիսով նրանց դէզերը ո՛չ պակասում էին, ո՛չ աւելանում։ Վերջապէս, մի գիշեր, այս գաղտնիքն իմանալու համար, երկուսն էլ արթուն մնացին և՝ երբ խուրձերը շալակած տանում էին միմեանց դէզի վրայ դնելու՝ յանկարծ իրար տեսան։

Այս պատճառով մարդիկ օրհնեցին այս երկու եղբայրների արտը և Աստուծոյ տաճարը շինեցին այնտեղ։

6. ՀԱՐԱԶԱՏ ՄԱՅՐԸ

Պաղէստինում մի բնտանիքի մէջ ապրում էին երկու կին։ Դրանցից իւրաքանչիւրը մի-մի ծծի երեխայ ունէր։ Մի անգամ, գիշերը, կանանցից մէկը քնած ժամանակ իւր երեխային տակովն արաւ, խեղդեց։ Արթնանալով և նկատելով այդ՝ նա իւր քնած դրացու մօտից կամացուկ վեր առաւ նրա կենդանի երեխային, իսկ մեռածին դրեց նրա անկողինը։ Առաւօտը, երբ այս վերջինը կամենում էր կերակրել իւր որդուն, յանկարծ տեսաւ, որ երեխան մեռած է, և իսկոյն ճանաչեց, որ դա իրանը չէ։ «Սա իմ որդին չէ,—ասաց դրացուհուն,—այլ քոնն է. տո՛ւր ինձ իմ զաւակը»։—«Սո՛ւտ ես խօսում,—վրայ բերեց միւսը,—այդ քո որդին է, իսկ կենդանին իմն է»։

Եւ նրանք սկսեցին վիճել։ Հաւաքուեցան մարդիկ, բայց ոչ ոք չէր կարող հասկանալ, թէ նրանցից որն է ճշմարիտը։

Այդ ժամանակները Պաղէստինում իշխում էր Սողոմոն անունով մի իմաստուն թագաւոր։ Կանայք վեր առան թէ մեռած և թէ կենդանի երեխաներին և բերին թագաւորի մօտ։

Սողոմոն թագաւորը, լսելով նրանց գանգատը, իսկոյն կանչեց իւր թիկնապահներից մէկին և հրամայեց կենդանի երեխային կէս անել ու բաժանել գանգատաւորներին։ Հէնց որ երեխայի հարազատ մայրը լսեց այս հրամանը, իսկոյն թագաւորի ոտներն ընկաւ և ասաց.— «Տէր թագաւոր, մի՛ հրամայիր սպանել երեխային. տո՛ւր, թող նրան լինի, միայն թէ կենդանի մնայ»։ Իսկ միւս կինն ասաց.— «Թագաւորն արդար դատեց. թող սա ո՛չ քեզ լինի, ո՛չ ինձ»։

Թագաւորն իսկոյն հասկացաւ, թէ կանանցից որն է մանուկի հարազատ մայրը և հրամայեց նրան տալ երեխային։

---

7. ԾՆՈՂԱՍԷՐ ԱՂՋԻԿԸ

Չինաստանում մի հին օրէնք կայ, որի զօրութեամբ կտրում են այն մարդու ձեռքերը, ով որ խաբեբայութեան մէջ բռնուի։ Մի անգամ այդ երկրի իշխաններից մէկին մեղադրեցին այդ յանցանքի մէջ և երբ թագաւորի հրամանով պէտք է կատարուէր պատիժը, յանկարծ պալատը մտաւ դատապարտուած իշխանի մանկահասակ աղջիկը և խնդրեց, որ իրան թագաւորին ներկայացնեն։ Նրան տարան թագաւորի մօտ։ «Մեծ թագաւո՛ր,— ասաց նա.— իմ հայրը շատ իրաւացի կերպով դատապարտուած է պատժի և պէտք է զրկուի իւր ձեռ-

քերից։ Ահա, կտրել տուր սրանք,— գոչեց նա, մեկնելով իւր փոքրիկ ձեռքերը,— այս ձեռքերն էլ պատկանում են իմ դժբաղդ հօրը։ Սրանք ընդունակ չեն կերակրելու հիւանդ մօրս, թոյլ եղբօրս և փոքրիկ քրոջս։ Հրամայիր օրէնքի բոլոր խստութեամբ վարուել սրանց հետ, միայն թէ անվնաս մնան հօրս ձեռքերը, որովհետև միայն նրանք կարող են կերակրել մեր թշուառ ընտանիքը»։ Թագաւորը սաստիկ զգացուեց որդիական այս ջերմ սիրուց և ներեց յանցաւորին։

---

8. ՈՐԴԻԱԿԱՆ ՍԷՐ

Լիւդիայի Կրեսոս թագաւորը մի որդի ունէր՝ Ատիս անունով, որն ի ծնէ համր էր։ Հայրն ամեն ջանք գործ էր դրել բնութեան այս թերութիւնը բժշկելու համար, սակայն բժիշկների բոլոր գիտութիւնը չէր կարողացել մի օգնութիւն բերել։

Մի անգամ պարսիկներն յաղթեցին Կրեսոսի զօրքերին և յարձակուեցան նրա մայրաքաղաքի վրայ։ Ատիսը նկատեց, որ մի զինուոր՝ սուրը ձեռքին՝ վազում է իւր հօր վրայ, որ սպանէ նրան։ Իւր հօրն սպառնացող վտանգը տեսնելով՝ Ատիսը, սարսափահար և սրտադող, մոռացաւ իւր բնական պակասութիւնը, բաց արաւ բերանը և իւր բոլոր ոյժը հաւաքեց, որ գոչէ. Ի՞նչ հրաշքներ կարող է գործել որդիական անկեղծ սէրը. նրա լեզուն կաշկանդող կապանքներն յանկարծ բացուեցան և նա այս խօսքերն արտասանեց բարձր ձայնով.

— Զինուոր, խնայիր հօրս. դա ինքը՝ Կրեսոս թագաւորն է։

Այսպիսով պատանի Ատիսը փրկեց հօր կեանքը վտանգից և ինքն էլ առատ կերպով վարձատրուեց իւր որդիական սիրոյ համար, որովհետև ամբողջ կեանքում մտքերն յայտնելու թանկագին ձիրքն ստացաւ։

9. ԱՆՁՆԱԶՈՀ ԸՆԿԵՐ

Քաղաքի մի հսկայ տան շինութեան բարձրունքների վրայ կանգնած էին երկու քարտաշ, որոնցից մէկը ծեր էր, իսկ միւսը երիտասարդ։ Ներքևը, նրանց ոտքերի տակ, աղմկում էր մեծ քաղաքը, իսկ նրանց շուրջը փըչում, վայում էր սառն քամին։

Քարտաշները սիրով աշխատում էին, ուշադրութիւն չդարձնելով ցրտին ու մռնչող քամուն։ Քամին հետզհետէ սաստկանում էր։ Վերելակները երերում էին և քիչ էր մնում, որ կործանուէին։ Յանկարծ քամու մի ուժգին հոսանք միմեանցից բաժանեց վերելակների կապերը և նրանք դղրդալով ցած թափուեցան։ Անվնաս մնաց միայն մի տախտակ գերանակալի հետ. քարտաշները մի հնարքով կարողացան բռնել այս տախտակից և այդպէս կախուած մնացին բարձրում, օդի մէջ։

Քամին մռնչում էր աւելի ուժգին, տախտակը ճարճատում և կորանում էր մարդկանց ծանրութիւնից։ Այն ժամանակ երիտասարդ քարտաշն ասաց ծերին.

—Երևի մեր վերջը հասել է։ Մինչև մարդկանց օգնութեան հասնելը մենք չենք կարող կախուած մնալ այս տախտակից. գուցէ մեզանից մէկը կարողանայ, բայց երկսով անկարելի է այդ, որովհետև տախտակը շուտով կըկոտրուի։

—Տէր Աստուած,—հառաչեց ծերը,—ի՞նչ կլինի իմ երեխաների վիճակը, եթէ ես մեռնեմ։

— Երեխաներ շա՞տ ունիս։

— Հինգ հատ։

—Իսկ ես մենակ եմ և ոչինչ ու ոչ ոքի չեմ կորցնիլ, եթէ մեռնեմ։ Հարցել չի կարող լինել, թէ մեզանից որը պէտք է մեռնի։ Մնաս բարև, ընկեր։

Եւ երիտասարդ քարտաշն զգուշութեամբ բաց թողեց տախտակն ու թռաւ դէպի ցած։ Նրա մարմինն ուժգին թափով դիպաւ սալայատակին և ջարդ ու փշուր եղաւ։

Իսկ ծերունին, ընտանիքի հայրը, ողջ և անվնաս մնաց և իւր ամբողջ կեանքում երախտագիտութեան արցունքներն աչքերին յիշում էր իւր անձնազոհ ընկերոջը։

10. ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ

Աշնանային մի տաք օր՝ իւր տան առաջ, թումբի վրայ նստել էր ութսուն տարեկան մի ծերունի։ Նրա գլուխը ձիւնի պէս սպիտակ էր, բայց դէմքն առողջ էր և ուրախ. Նրա աչքերի կրակը դեռ չէր հանգել, իսկ ձեռքերը, երևում էր, որ դեռ պիտանի էին ամեն տեսակ աշխատանքի համար։ Ծերունու մօտ, դռանը, խաղում էին նրա առողջ և կայտառ թոռներն ու թոռնորդիները։

Մի նորահաս երիտասարդ, որ նոր էր եկել քաղաքից, մօտեցաւ ծերունուն և հարցրեց, թէ այդ ինչի՞ցն է, որ չնայելով իւր հասակին, նա այդպէս ուժեղ է և առողջ։

Ծերունին ասաց նրան.—«Փոքր հասակիցս սկսած՝ ծագող արևը երբէք ինձ անկողնում չէ տեսել։ Ես պառկում էի քնելու, հէնց որ վրայ էր հասնում գիշերը, որն Աստուած պարգևել է մեզ հանգստանալու համար։ Տեղիցս վեր կենալով՝ ես երբէք չեմ յօրանջել, երբէք չեմ ծուլացել, այլ աշխատել եմ եռանդով։ Աշխատանքն ամրացնում էր մարմինս, իսկ աղօթքը՝ հոգիս։ Ես միշտ ուրախ եմ եղել, որովհետև միշտ հաւատացել եմ Աստուծոյ օգնութեանը։ Ես հաւատացել եմ Աստծուն ու ձեռքերիս,—և նրանք ինձ չեն խաբել։

—Բայց քեզ ո՞վ սովորեցրեց այդ,—հարցրեց երիտասարդը։

Ծերունին վեր կացաւ և տարաւ նրան իւր պարտէզը։ Այնտեղ՝ հասուն պտուղներով ծանրաբեռնուած ծառերի տակ, շարքով դրուած էին մեղուների փեթակները։

— Ահա սրանք սովորեցրին ինձ խելք ու միտք, — ասաց ծերունին, ցույց տալով ծառերն ու փեթակները: — Ես անկեցի, պատուաստեցի և խնամեցի ծառերը, նրանք բուսան իմ աչքի առաջ և բերկրանքով լցրին սիրտս: Զաւակներիս նման սիրում էի այս ծառերը. նրանք ինձ սովորեցրին, թէ որքան ողորմած է Աստուած և թէ ինչպէս է Նա վարձատրում մարդուս աշխատանքի փոխարէն: Իսկ փոքրիկ մեղրաճանճը սովորեցրեց ինձ ջանասիրութիւն, խնայողութիւն և կարգ: Տարիքս անցան հաճելի աշխատանքի մէջ, ուրախ. այդպէս էլ մեծացրի իմ որդիներին և թոռներին:

11. ԲԱՂԴ և ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Մի անգամ մարդիկ խօսում էին բաղդի մասին, — թէ ում ինչպիսի ճակատագիր է վիճակուած: Իհարկէ, այդպիսի դէպքերում գործն առանց նախանձի չի լինիլ. մանաւանդ չքաւորները խիստ նախանձում էին հարուստներին. Նրանք պնդում էին, թէ բաղդը հարստութեան մէջ է կայանում: Մի ծերունի, լսելով դրանց անմիտ դատողութիւնները, հետևեալ առակը պատմեց.

«Ես մի հարուստ մարդ էի ճանաչում. Նա ապրում էր ոսկեզօծ պալատի մէջ, հագնում էր թանկագին շորեր, ուտում-խմում էր հազուագիւտ կերակուրներ ու խմիչքներ. Նրա տանը կարծես միշտ խնճոյք, ուրախութիւն էր:

«Մի անգամ այս հարստի մօտ հիւր եկաւ նրա հին բարեկամը. վաղուց էր, որ նրանք չէին տեսնուել, ուստի հարուստն ուրախութիւնից մեծ խնճոյք սարքեց և շատ հիւրեր հրաւիրեց: Սեղանի վրայ ոսկէ և արծաթէ անօթներով հազուագիւտ կերակուրներ էին դրուած, իսկ բիւրեղեայ շշերի և բաժակների մէջ թանկագին խմիչքները էին փրփուր արձակում:

«Երկար տևեց բարեկամների հացկերոյթը. կերան, խմեցին, շատ ուրախացան: Միայն տանտէրը ոչինչ չըկերաւ, ոչինչ խմեց, թէպէտ ուրախ-ուրախ խօսում էր

բարեկամների հետ: Խնճոյքի վերջը նորեկ հիւրն ասաց հարստին. — «Ես ոչ մի տեղ այնպիսի հարստութիւն, այնպիսի ճոխութիւն չեմ տեսել, ինչպէս այստեղ, քո տանը, և կարծում եմ, որ աշխարհումս քեզ նման երջանիկ մարդ չկայ»:

«Հարուստը հառաչեց, ոսկէ ափսէից վեր առաւ մի խնձոր և տուեց բարեկամին. խնձորը կարմիր էր և արտաքուստ թարմ, բայց երբ կտրեցին, տեսան, որ նրա մէջ որդունք կար: Բոլոր հիւրերը զարմացած նայեցին հարստին, իսկ նա ասաց. «Այս խնձորն ու ես — միևնոյն բաներն ենք. արտաքուստ ես բաղդաւոր եմ երևում, սակայն ոչ ոք չի նկատում, որ որդը կրծում է ինձ»: Այս խօսքերի վրայ նա բաց արաւ կուրծքը և ցոյց տուեց իւր սարսափելի, անբուժելի վէրքը, որ [illegible] է կոչւում: «Ահա իմ բաղդաւորութիւնը, - ասաց հարուստը. — ինչիս են պէտք թանկագին ուտելիքները, քանիոր դրանք քաղցր չեն թւում ինձ. ինչիս են հարկաւոր ոսկի անօթները, քանի որ նրանցով վէրքս չի առողջանալ, ինչ եմ անում փողը, քանի որ նրանով առողջութիւն չի կարելի գնել»: - Եւ այնուհետև էլ չէին նախանձում հարստին»:

12. ՔԱՐ

Մի աղքատ եկաւ հարստի մօտ և ողորմութիւն խնդրեց: Հարուստը ոչինչ չտուեց և ասաց. — «Հեռացիր այստեղից»: Բայց աղքատը չէր ուզում դատարկաձեռն հեռանալ: Այն ժամանակ հարուստը բարկացաւ, մի քար վեր առաւ և նրանով խփեց աղքատին: Աղքատը վերցրեց քարը և գրպանը դնելով՝ ասաց ինքն իրան. — «Ես այս քարը պէտք է մօտս պահեմ այնքան, մինչև որ ես էլ մի անգամ սրանով հարստին խփեմ:

Եւ այդ ժամանակը հասաւ:

Հարուստը մի մեծ յանցանք գործեց. նրանից խլեցին բոլորը, ինչ որ ունէր, և իրան էլ բանտը դրին: Բանտը տանելիս՝ աղքատը մօտեցաւ նրան, գրպանից հանեց

քարը և ձեռքը բարձրացրեց, որ խփէ, բայց յանկարծ միտքը փոխեց և՝ քարը դէն ձգելով՝ ասաց.

—Այսքան ժամանակ իզո՜ւր էի քարը պահում. երբ նա հարուստ էր և զօրեղ, ես կամենում էի վրէժխնդիր լինել նրանից, իսկ այժմ ես խղճում եմ նրան։

---

13. ՄՈՒՐԱՑԿԱՆ

Ես անցնում էի փողոցով։ Ինձ կանգնեցրեց մի ծեր, ույժից ընկած մուրացկան։ Աչքերն արտասուալից, ուռած ու կարմրած, շրթունքները կապտած, հագին լաթեր, մարմնի վրայ անմաքուր վէրքեր։

Օ՜, ինչ այլանդակ կերպով մաշել-կերել էր այդ անբաղդ արարածին աղքատութիւնը։

Նա ինձ պարզել էր իւր կարմրած, ուռած ու կեղտերով ծածկուած ձեռքը։ Նա հառաչում էր, նա խեղդուած ձայնով ողորմութիւն էր աղերսում։

Սկսեցի գրպաններս տակն ու վրայ անել։ Բան չըգտայ—ո՛չ փող, ո՛չ ժամացոյց, ո՛չ էլ նոյն իսկ թաշկինակ. հետս ոչինչ չէի վերցրել։ Իսկ մուրացկանը շարունակ սպասում էր... և նրա կարկառած ձեռքը թոյլ կերպով երերում ու ցնցւում էր։

Ինքս ինձ կորցրած, շփոթուած՝ ես ամուր սեղմեցի այդ դողդոջիւն, այդ կեղտերով ծածկուած ձեռքը.—«Թողութիւն արա, եղբա՛յր, ես ոչինչ չունիմ»։

Մուրացկանն իւր կարմրատակած աչքերն յառեց վրաս։ Նրա կապտած շրթունքները քմծիծաղ տուին, և նա էլ իւր կողմից պինդ սեղմեց իմ սառած մատները։

«Է՜հ, ինչ արած, եղբա՛յր,—ծամծմեց նա,—դրա համար էլ շնորհակալ եմ. այդ էլ մի ողորմութիւն է, եղբայր»։

Ես հասկացայ, որ ինքս էլ ողորմութիւն ստացայ իմ եղբօրից։

---

14. ՕՏԱՐԱԿԱՆԸ

Հին ժամանակները՝ իւր սքանչելի ապարանքում ապրում էր մի հարուստ իշխան։ Նա շատ փող էր ծախսում իւր այդ հոյակապ ապարանքի զարդ ու զարդարանքի վրայ, բայց իւր հարստութիւնից ոչինչ չէր տալիս աղքատներին։ Մի անգամ, երեկոյեան դէմ, իշխանի տունն եկաւ մի ծերունի օտարական և գիշերելու տեղ խնդրեց։ Իշխանը մերժեց օտարականի խնդիրը և հպարտութեամբ գոչեց.—«Իմ տունը հիւրանոց չէ»։ Այն ժամանակ օտարականն ասաց.—«Գոնէ թոյլ տուէք ինձ ձեզ երեք հարց առաջարկել»։—«Հարցրո՜ւ, որքան կամենում ես,—պատասխանեց իշխանը.—քո բոլոր հարցերին ես պատասխան կըտամ»։ Օտարականը հարցրեց.—«Ձեզանից առաջ, իշխա՛ն, ո՞վ էր ապրում այս ապարանքում»։ —«Հայրս»,—պատասխանեց իշխանը։ «Իսկ նրանից առա՞ջ»,—շարունակեց ծերունին։—«Նրանից առաջ ապրում էր իմ պապը»։—«Իսկ ո՞վ պէտք է ապրի այստեղ ձեզանից յետոյ»։—«Յուսով եմ՝ որ իմ որդին»։—«Ուրեմն,—շարունակեց օտարականը,—եթէ ձեզանից իւրաքանչիւրը այս ապարանքում ապրում է մի կարճ ժամանակ և յետոյ իւր տեղը տալիս է միւսին, հապա ո՞վ էք դուք բոլորդ, եթէ ո՛չ հիւրեր, ի՞նչ է ձեր տունը, եթէ ո՛չ հիւրանոց։ Ուրեմն, իշխան, շատ փող մի ծախսէք ձեր ժամանակաւոր կացարանի վրայ, այլ լաւ է՝ բարեգործ և գթասիրտ եղէք դէպի թշուառները»։

Իշխանին շատ դիւր եկան օտարականի խօսքերը. նա տեղ տուեց ծերունուն և այնուհետև միշտ չափազանց կարեկից էր դէպի թշուառները։

15. ԵՐԿՈՒ ՄՈՄ

Մի օր երիտասարդի մէկը հարցրեց իւր հարուստ հօրը.

—Հայրի՛կ, ինչ կերպով դու այդքան հարստութիւն

դիպեցիր։ Ես հազիւ կարող եմ ծայրը ծայրին հասցնել մինչև տարուայ վերջը և միշտ պարտքի մէջ եմ։

Հայրը պատասխանեց.

— Շատ հեշտ բան է, զաւակս, հարստանալը։ Հարկաւոր է միայն բաւականանալ պիտանի բաներով և մի մոմ միայն վառել, երբ կարիք չկայ երկուսը վառելու։

Եւ այս ասելով՝ հայրը հանգցրեց մոմերից մէկը, որոնք այդ միջոցին վառւում էին սենեակի մէջ։

16. ԱՂԲԻՒՐ

Ամառնային մի տաք օր երեք ճանապարհորդ պատահեցան իրար մի մաքուր և սառն աղբիւրի մօտ, որ դուրս էր բղխում գետնից՝ մեծ ճանապարհից ոչ հեռու։ Նրա շուրջը բուսել էին սաղարթախիտ ծառեր և գետինը ծածկուած էր խիտ կանաչով։ Արտասուքի նման պարզ ջուրը, հաւաքուելով քարից շինուած մի խոր գուշի մէջ, դուրս էր հոսում այնտեղից և արագավազ առուակի ձևով վազում մարգագետնի միջով։

Ճանապարհորդները հանգստացան ծառերի ստուերի տակ և ապա աղբիւրի սառն ջրով զովացան։ Աղբիւրի գլխին նրանք նկատեցին մի քար, որի վրայ գրուած էր հետևեալը. «Նմանուիր այս աղբիւրին»։ Ճանապարհորդները կարդացին և սկսեցին մտածել, թէ ինչ է նշանակում այդ։

— Դա մի լաւ խրատ է, — ասաց ճանապարհորդներից մէկը. — այս աղբիւրը հոսում է անդադար, գնում հեռու երկրներ, իւր ջրի մէջ ընդունում է ուրիշ շատ առուակներ և մեծ գետ դառնում. այսպէս էլ մարդը պարտաւոր է անդադար հոգալ իւր գործերը և այն ժամանակ նա յաջողութիւն կունենայ — մեծ հարստութիւն կըդիզէ։

— Ո՛չ, — ասաց երկրորդ ճանապարհորդը. — իմ կարծիքով՝ դա նշանակում է, որ մարդս պէտք է իւր հոգին այս աղբիւրի ջրի նման մաքուր պահէ վատ մտքերից

ու ցանկութիւններից։ Այս ջուրն այժմ զուարթացնում և ոյժ է տալիս նրանց, որոնք մեզ նման գալիս են հանգստութիւն վայելելու նրա շուրջը. իսկ եթէ այս աղբիւրն անցնէր ամբողջ աշխարհը՝ նրա ջուրն էլ կըպղտորուէր, կըփչանար և այն ժամանակ էլ ինչ օգուտ կըտար նա, ով ջուր կըխմէր նրանից։

Երրորդ ճանապարհորդը ժպտաց և ասաց.

— Դրա միտքն այն է, որ աղբիւրն ամեն ժամանակ ձրի ջուր է տալիս ծարաւ մարդկանց և մեզ ուսուցանում, որ մենք էլ բարիք գործենք բոլորին նոյնպէս ձրի՝ առանց վարձատրութեան կամ շնորհակալութեան ակնկալութիւն ունենալու։

17. ԹԱՆԿԱԳԻՆ ՄԱՏԱՆԻ

Հայրն իւր ամբողջ հարստութիւնը բաժանեց երեք որդոց մէջ՝ իւր մօտ պահելով միայն մի շատ թանկագին մատանի։

— Այս մատանին, — ասաց նա, — ես կըտամ ձեզանից նրան, ով մի մեծ բարիք կըգործէ։ Գնացէք օտար երկրներ և ուղիղ մի տարի յետոյ վերադարձէք տուն. և այն ժամանակ կըպատմէք ինձ, թէ ով՝ ինչ է արել։

Անցաւ մի տարի։ Որդիքը վերադարձան և պատմեցին հօրը, ինչ որ անցել էր իրանց գլխովը։

— Մի հարուստ մարդ, — ասաց մեծ որդին, — առանց ստացականի յանձնեց ինձ մի պարկ ոսկի և բացի երկուսիցս ուրիշ ոչ ոքի յայտնի չէր այդ։ Յետով այդ հարուստը մեռաւ։ Ես այդ փողը վերադարձրի նրա այրիին։

— Դու ազնիւ ես գտնուել, որդեակ, — ասաց հայրը։

— Մի օր ես անցնում էի ջրաղացի մօտով, — խօսեց միջնակ որդին, — տեսնեմ՝ մի երեխայ ընկաւ ջուրը և քիչ էր մնում, որ խեղդուէր։ Ես ընկայ ջուրը և ազատեցի նրան։

— Դու, զաւակս, մեծահոգութիւն ես արել, քո կեանքը՝ ուրիշին ազատելու համար վտանգի ենթարկելով։

— Անտառի միջով անցնելիս, — պատմեց կրտսեր որ-

ՀՀ ԳԱՍԵՆԻ
ԱԶԳԱՅԻՆ

գին,—տեսայ, որ երկու աւազակ կողոպտում են մի մարդու. այդ մարդը իմ ամենաոխերիմ թշնամին էր: Բայց ես վազեցի նրան օգնութեան և մենք երկսով փախցրինք այն անպիտաններին:

—Ո՛հ, թանկագին զաւակս, եկ, համբուրեմ ճակատդ,—բացականչեց հայրը.—ահա՛ վեր ա՛ռ մատանին, սա քոնն է: Թշնամիներին ծառայելը—ամենամեծ բարիքն է: Վատութեան դէմ բարութիւն գործելով՝ մարդս Աստծուն է նմանում:

18. ԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Երեք մարդ, միասին ճանապարհորդելիս, գանձ գտան և բաժանեցին իրանց մէջ: Բայց որովհետև նրանց ճանապարհի պաշարը պակասել էր, ուստի իրանցից փոքրին ուղարկեցին քաղաք կերակուր բերելու: Նա գնաց և ճանապարհին այսպէս էր մտածում ինքն իրան.—«Ես այժմ հարուստ եմ, բայց աւելի հարուստ կըլինիմ, եթէ ընկերներիս մասն [illegible] վեր առնեմ: Եւ դա դժուար չէ: Կը[illegible] կերակուրը, որ պէտք է գնեմ, իսկ իմ [illegible] վասեմ, թէ արդէն ճաշել եմ»:

Իսկ միւս ընկերներն այսպէս էին խօսում.—«Ինչու մենք բաժին տանք այն պատանուն. եթէ նրա բաժինն էլ մենք վեր առնենք, աւելի կըհարստանանք: Ուրեմն հէնց որ նա գայ, իսկոյն սպանենք:

Պատանին բերեց թունաւորած կերակուրը: Ընկերներն իսկոյն հանեցին սրերը և սպանեցին նրան, իսկ իրանք էլ՝ կերակուրն ուտելուց յետոյ՝ մեռան թոյնից: Գանձը մնաց անտէր:

19. ՃՆՃՂՈՒԿ

Որսորդութիւնից վերադառնալիս՝ ես անցնում էի պարտիզի միջով: Շունս վազում էր իմ առաջից: Յանկարծ նա իւր քայլերը փոքրացրեց և կամաց ու զգու-

շութեամբ սկսեց առաջ գնալ, կարծես որսի հոտ էր առել:

Ես նայեցի փոքր ինչ հեռուն, ճանապարհի վրայ, և տեսայ մի փոքրիկ ճնճղուկ, որի կտուցի շուրջը դեռ դեղին էր, իսկ գլուխը աղուամազով ծածկուած: Նա ցած էր ընկել բնից (քամին սաստիկ շարժում էր ճանապարհի երկու կողմի ծառերը) և անշարժ ընկած էր միայնակ և անօգնական՝ փռած ունենալով դեռ հազիւ դուրս եկած փոքրիկ թևերը:

Երբ իմ շունը ծանրաքայլ մօտենում էր նրան, յանկարծ մօտակայ ծառի վրայից մի պառաւ, սև կուրծքով ճնճղուկ, քարի պէս նետուելով, ընկաւ ուղղակի նրա առաջը և յուսահատ ու սաստիկ ճռվճռվոցով մի-երկու անգամ թռաւ ուղղակի դէպի շան դունչը: Նա յարձակուեց, որ փրկէ, պաշտպանէ իւր ձագը: Բայց նրա փոքրիկ մարմինը դողում էր երկիւղից, նրա ձայնը կատաղի էր, նա ոյժից ընկնում էր, նա զոհւում էր: Ի՛նչպիսի ահագին հրէշ պէտք է երևար նրան շունը. բայց և այնպէս նա չկարողացաւ հանգիստ նստել բարձր ու անվտանգ ճիւղի վրայ. նրա ոյժն աւելի թոյլ լինելով, քանթէ կամքը, վայր ձգեց նրան այնտեղից:

Շունը կանգ առաւ, յետ քաշուեց... Երևի նա էլ ճանաչեց այդ ոյժը:

Ես շտապեցի շփոթուած շանս յետ կանչել և հեռացայ՝ զգալով իմ մէջ յարգանք դէպի այդ փոքրիկ թռչունը:

20. ՍՊԱՆՈՒԱԾ ԼՈՐԸ

Ա.

Հայրս սաստիկ սիրում էր որսորդութիւն և լաւ եղանակին, հէնց որ ազատ էր լինում տնային գործերից, վերցնում էր հրացանը, ուսին ձգում որսորդական պարկը, կանչում Բօզարին և գնում կաքաւ ու լոր որսալու: Շատ անգամ նա ինձ էլ էր տանում իւր հետ: Ի՛նչպիսի մեծ բաւականութիւն էր այդ ինձ համար: Քրտինքը թափւում

էր երեսիցս, կօշիկներս լցւում էին աւազով, բայց ես յօգնութիւն չէի զգում և ոչ մի քայլ յետ չէի ընկնում հօրիցս։ Իսկ երբ թնդում էր հրացանը և թռչունն ընկնում գետին, ես միշտ թռչկոտում էի և ուրախութիւնից աղաղակում. Օ՜, որքան մեծ զուարճութիւն էր։ Վիրաւորուած թռչունը թաւալւում էր, թափահարում իւր թևերը խոտերի մէջ կամ Բօղարի ատամներում սեղմուած, արիւնը հոսում էր նրանից, իսկ ես, այնուամենայնիւ, ուրախ էի և խիղճս ամենևին չէր տանջում ինձ։ Ես ոչինչ չէի ցանկանալ—միայն թէ ինքս էլ հրացան արձակէի և լորեր ու կաքաւներ սպանէի։ Բայց հայրս յայտնել էր արդէն, որ տասներկու տարեկանից վաղ ես հրացան չէի ստանալու, իսկ այդ ժամանակ դեռ տասը տարեկան էի։

Բ.

Մի անգամ ես հօրս հետ գնացել էի որսի։ Հայրս մտաւ հաճարի արտին կից կաղնու ցածիկ թփերի տակ, որտեղ միշտ լորեր կարելի էր գտնել։ Յանկարծ Բօղարը կանգ առաւ. հայրս կանչեց՝ «բռնիր» և Բօղարի հէնց քթի տակից անցաւ մի լոր ու թռաւ։ Բայց նա տարօրինակ կերպով էր թռչում—թաւալւում էր, պտոյտ-պըտոյտ գալիս, գետին էր գլորւում, կարծես թէ վիրաւորուած կամ թևը ջարդուած լինէր։ Բօղարը մի անգամից յարձակուեց նրա վրայ. նա այդպէս չէր անում, երբ թռչունն իւր սովորական եղանակով էր թռչում։ Հայրս չէր կարող հրացանն արձակել, վախենալով, թէ մի գուցէ շանը դիպչի։ Յանկարծ տեսնեմ՝ Բօղարը վրայ ընկաւ և բռնեց լորին ու բերեց հօրս։ Հայրս վեր առաւ և ոտները դէպի վեր դրեց բռի մէջ։ Ես վազեցի նրա մօտ։ «Ի՞նչ է, վիրաւորուած էր»,—հարցրի։—«Չէ,—պատասխանեց հայրս,—վիրաւորուած չէր. երևի նրա բունն այստեղից հեռու չէ և դիտմամբ վիրաւորուած էր ձևանում, որ շունը կարծէր, թէ հեշտ է իրան բռնելը»։—«Բայց ինչո՞ւ էր այդպէս անում»,—հարցրի ես։—«Որ շանը հեռացնէ

իւր ձագերից. յետոյ նա արագ կըթռչէր։ Միայն այս անգամ նա իւր հաշուի մէջ սխալուեց, չափն անցկացրեց և ընկաւ Բօղարի ձեռքը»։—«Ուրեմն վիրաւորուած չէ՞,—հարցրի կրկին։—«Ոչ, բայց կենդանի չի մնալ. Բօղարն ատամներով սաստիկ սեղմել է նրան»։

Գ.

Ես աւելի մօտեցայ լորին։ Նա, գլուխը կախ ձգած, անշարժ պարկած էր հօրս ձեռքում և իւր մուգ-կարմիր աչիկով նայում էր ինձ։ Եւ յանկարծ ես սաստիկ խղճացի նրան. ինձ թւում էր, թէ նա նայում էր ինձ և ասում.—«Ինչո՞ւ պէտք է ես մեռնեմ, ինչո՞ւ։ Չէ որ ես իմ պարտքս էի կատարում, աշխատելով փոքրիկ ձագուկներիս ազատել, շանը հեռացնել նրանցից,—և այժմ կորած եմ ես։ Անարդարութիւն է դա, անարդարութիւն։ —«Հայրիկ,—բացագանչեցի ես.—գուցէ չմեռնի»,—և ուզում էի շփել լորի գլուխը։ Բայց հայրս ասաց.—Ո՛չ։ Ահա՛ նայի՛ր,—իսկոյն նրա ոտները կըձգուեն, մարմինը կըցնցուի և աչքերը կըփակուեն»։ Ճիշտ այդպէս էլ եղաւ։ Հէնց որ նրա աչքերը փակուեցին, ես սկսեցի լաց լինել։ «Ինչո՞ւ ես լալիս», հարցրեց հայրս։—«Ես դրան խղճում եմ, ասացի,—նա իւր պարտականութիւնն էր կատարում, իսկ մենք սպանեցինք... Դա անարդարութիւն է։ Ա՜խ, այժմ ո՞վ կըկերակրէ նրա փոքրիկ, խեղճ ձագուկներին»։ Հայրս ուշիուշով նայեց ինձ։ «Անհոգ կա՛ց,—ասաց նա.—ձագուկների հայրը կըկերակրէ նրանց։ Բայց սպասի՛ր,—աւելացրեց նա.—Բօղարը նորից պատրաստւում է յարձակուելու... Չլինի՞ բունն է»։ Եւ ճիշտ որ, Բօղարի դնչից երկու քայլ հեռու, իրար մօտ պարկած էին չորս փոքրիկ լորիկներ. նրանք, պարանոցները երկարացնելով, կպչում էին միմեանց և այնպէս արագ-արագ էին շնչում, որ կարծես դողում էին։ Նրանց փետուրներն արդէն դուրս էին եկել, միայն պոչերը շատ կարճ էին։ «Հայրիկ, հայրիկ,—գոչեցի ես, սաստիկ վշտացած,—յետ կանչի՛ր Բօղարին,

եթէ ոչ նրանց էլ կըսպանէ»։ Հայրս ձայն տուեց Բօղարին, և մի կողմ քաշուելով, նստեց մի թփի տակ նախաճաշելու։

Դ.

Ես չուզեցի նախաճաշել և՝ բնի մօտ մնալով՝ գըրպանիցս հանեցի սպիտակ թաշկինակս ու լօրին պարկեցրի նրա վրայ։ «Նայեցէք,—մտածում էի ես,—խեղճ որբիկներ, ահա ձեր մայրը։ Նա իրան զոհեց ձեզ համար»։ Ձագուկներն, առաջուայ նման, արագ-արագ շնչում էին։ Ես մօտեցայ հօրս։ «Դու այդ լօրն ինձ կընծայե՞ս», հարցրի նրան։—«Ինչո՞ւ չէ։ Բայց ինչ պէտք է անես»։—«Կամենում եմ թաղել նրան»։—«Թաղե՛լ»։—«Այո, այստեղ, նրա բնի մօտ։ Տուր ինձ դանակդ, որ նրա համար մի փոքրիկ գերեզման փորեմ»...

Հայրս առանց մի խօսք խօսելու հանեց իւր դանակը և տուեց ինձ։ Ես իսկոյն մի փոքրիկ փոս փորեցի, համբուրեցի լօրի կուրծքը, դրի փոսի մէջ և հողով ծածկեցի։ Յետոյ միևնոյն դանակով երկու փոքրիկ ճիւղ կտրեցի, մաքրեցի կեղևը, խաչաձև կապեցի խոտով և այդ խաչը ցցեցի գերեզմանի վրայ։ Շուտով մենք հեռացանք այդտեղից, բայց ես շարունակ յետ ու յետ էի նայում,—խաչը սպիտակ էր և երևում էր հեռուից...

Այն գիշերը ես մի երազ տեսայ,—իբր թէ երկնքումն եմ և ինչ—մի փոքրիկ ամպի վրայ կանգնած է իմ լօրը, միայն սպիտակ՝ ինչպէս որ խաչն էր. իսկ գլխին ունէր մի ոսկէ պսակ—իհարկէ՝ իբր վարձատրութիւն իւր որդոց պատճառով կրած չարչարանքի համար...

Այդ օրից իմ մէջ մեռաւ որսորդութեան սէրը։

21. ԿԱՐՄԻՐ ԼԱՊՏԵՐ

Ա.

Ով որ երկաթուղով ճանապարհորդել է, նա անշուշտ տեսած կըլինի, որ ճանապարհի երկու կողմում շինուած են փոքրիկ տնակներ, որոնց մէջ պահապաններն են բնակւում։

Այս պահապանները միշտ հսկում են, որ երկաթագծերը և ճանապարհները կարգ ու կանոնի մէջ լինին։ Այդ պատճառով ամէն մի պահապան իւրաքանչիւր օր նայում է իւր տնակից սկսած մինչև հարևան տնակը և երբ տեսնում է, որ ամէն ինչ կարգին է, այն ժամանակ գնացքն անցնելիս կանգնում է իւր տնակի առաջ ցերեկը՝ կանաչ դրօշակը, իսկ գիշերը՝ կանաչ լապտերը ձեռին բռնած։ Իսկ եթէ պահապանը նկատում է, որ մի տեղ կոտրուել է երկաթագիծը, կամ հին գերաններից մէկը փթել է, կանգնում է այնտեղ ցերեկը կարմիր դրօշակով, իսկ գիշերը կարմիր լապտերով և դրանով իմաց տալիս մեքենայավարին, որ ճանապարհը փչացած է։ Մեքենայավարը տեսնում է այդ կարմիր նշանները, հասկանում է, որ վտանգ կայ և կանգնեցնում է գնացքը, որ փորձանք չպատահի և մարդկանց կեանքը վտանգի չենթարկէ։ Աստուած ոչ անէ, եթէ պահապանը կամ մեքենայավարը մոռանան իրանց պարտականութիւնը,—այն ժամանակ վա՜յ գնացքին էլ, ճանապարհորդներին էլ։

Այդպիսի տնակներից մէկում ապրում էր մի պահապան՝ Սարգիս անունով. նա շատ տարիներ էր անցկացրել այդտեղ և բարեխղճաբար կատարում էր իւր դժուար ծառայութիւնը,—իւրաքանչիւր գնացքից առաջ նայում էր ճանապարհի այն մասը, որն իւր հսկողութեանն էր յանձնուած, և միշտ, գիշեր թէ ցերեկ, գնացքների անցնելու ժամանակ, նա կանգնած էր լինում իւր տեղը կանաչ դրօշակը կամ լապտերը ձեռքին։ Ձմեռը, ուշադրութիւն չդարձնելով ոչ ցրտին և ոչ մրրիկին, նա եռանդով աւելում էր ճանապարհի ձիւնը և երկաթագծերը մաքրում սառոյցից։

Բ.

Մի անգամ,—յուլիս ամսին էր այդ,—սաստիկ տաք էր, իսկ երեկոյեան դէմ սկսեցին ամպեր հաւաքուել և երևում էր, որ փոթորիկ պէտք է լինի։ Յանկարծ ծառերն սկսեցին սաստիկ քամուց օրօրուել. լսուեց մի խլացնող

աղմուկ և մութ գիշերը պատեց երկիրը։ Ջրալի անձրևն սկսեց թափուել երկնքից։ Փոթորիկն արմատից պոկում էր ահագին ծառերը, վայր էր գլորում հեռագրական սիւները և կտրատում լարերը։

Հէնց այդ ժամանակ Սարգիսը լապտերը ձեռքին ճանապարհն էր զննում։ Նա արդէն մօտեցել էր իւր տնակին, երբ յանկարծ ամպի սաստիկ որոտը խլացրեց նրան և գետին գլորեց։ Կայծակը խփեց երկաթագծերին, կտոր-կտոր արաւ և ցրուեց այս ու այն կողմ և այրեց խեղճի տնակը։

—Ո՜հ, Աստուած իմ, ի՜նչ կլինի ճանապարհորդների վիճակը, կորած են բոլորը, կորած են,—բացագանչեց նա, քիչ ուշքի գալով և չորս կողմը նայելով։ Վերջապէս նա իւր վերջին ոյժը հաւաքեց ու ոտքի կանգնեց։ Հեռուից լսուեց շոգեկառքի սուլոցը։ Սարգիսը մօտը կարմիր լապտեր չունենալով, շտապով վառեց փոթորկից հանգած հասարակ լապտերը, իւր կարմիր շապկից մի կտոր կտրեց, դրանով փաթաթեց լապտերը, որքան կարելի էր՝ լոյսն աւելացրեց և՝ նստելով երկաթուղու գծի վրայ, բարձրացրեց այդ լապտերը։

Իսկ տնակն այրւում էր, այրւում էր Սարգսի ամբողջ հարստութիւնը․ կրակի երկար լեզուները երևում էին կտուրի արանքներից, քամին տարածում էր կայծերը…

Սարգիսը նայում է դէպի հեռուն, նայում շարունակ․ Նրա սիրտը սաստիկ բաբախելուց քիչ է մնում տրաքուի, աչքերը մթնում են։ Հեռո՜ւ, հեռո՜ւ ճանապարհի վրայ երկու կրակ երևացին—այդ՝ գնացքն է սլանում… «Ահա՛ այս է կըհասնի, դուրս կըթռչի երկաթագծերից, ջարդ ու փշուր կըլինի, բոլորը, բոլորը կըկործանուեն»,—մտածում է Սարգիսը։ Բայց, փառք Աստուծոյ, այդպէս չեղաւ։ Մեքենայավարը նկատեց կարմիր լապտերը և մեղմացրեց ընթացքը, նրանից միքանի քայլ հեռու գնացքը բոլորովին կանգ առաւ, իսկ ուժասպառ Սարգիսը անզգայ փռուեց գետին…

22. ԱՄԵՆԱՊԷՏՔԱԿԱՆ ԲԱՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄՍ

Ա.

Ժամանակով հեռաւոր և ոսկի արևելքում մի խելացի և արդարամիտ թագաւոր է եղել։ Նա ունեցել է երեք որդի։

Եղաւ՝ որ այդ թագաւորը ծերացաւ և ուզեց կառավարութեան ղեկն յանձնել իւր որդիներից նրան, որն աւելի ընդունակ կըլինի այդ մեծ գործին։

Եւ դրա համար նա մի օր կանչեց իւր երեք որդիներին և ասաց․

—Սիրելի զաւակներս, տեսնում էք, որ ձեր հայրը ծերացել է և էլ չի կարողանում երկիրը կառավարել։ Ես վաղուց իջած կըլինէի իմ գահից, եթէ կատարուած տեսնէի այն մեծ միտքը, որը երկար տարիներ պաշարել էր հոգիս։ Եւ այժմ ով որ ձեզանից իմաստուն կերպով լուծէ իմ այդ միտքը, նա՛ կստանայ իմ թագաւորութիւնը, նա՛ կըկառավարէ իմ ժողորուրդը։

—Ապրած կենայ մեր սիրելի հայրը, սո՜ւրբ է մեզ համար նրա վեհ կամքը։ Այդ ի՞նչ մեծ միտք է, որ չէ կարողացել լուծել նրա իմաստուն հոգին։

—Ահա տեսնո՛ւմ էք այդ ահագին և մեծածաւալ շտեմարանը, որ վաղուց շինել եմ տուել։ Իմ ցանկութիւնս էր լցնել դա մի այնպիսի բանով, որ ամենապէտքականը լինի աշխարհիս երեսին և որով կարողանամ բաղդաւորացնել իմ ժողովուրդը։ Այդ շտեմարանը դեռ դատարկ է մնում։ Եւ այժմ ձեզանից ո՛վ որ կըկարողանայ այդ շտեմարանը իւր բոլոր անկիւններով, ծայրէ-ծայր, լցնել աշխարհիս ամենապէտքական բանով, նա՛ թող լինի իմ ժառանգը։ Առէք գանձերիցս, որքան կուզէք, և առանձին-առանձին ճանապարհ ընկէք քաղաքից-քաղաք, երկրից-երկիր, գտէք այդ բանը և լցրէք իմ շտեմարանը։ Ձեզ եօթն անգամ քառասուն օր ժամանակ եմ տալիս։

Որդիքը համբուրեցին հօր ձեռքն ու ճանապարհ ընկան։

Բ.

Ամբողջ եօթն անգամ քառասուն օր նրանք շրջեցին քաղաքից-քաղաք, երկրից-երկիր, տեսան ուրիշ-ուրիշ մարդիկ, ուրիշ-ուրիշ սովորութիւններ և որոշուած ժամանակին կանգնեցին հօր առաջ։

— Բարո՜վ էք եկել, թանկագին որդիներ։ Գտե՞լ էք արդեօք ամենապէտքական բանն աշխարհումս։

— Այո, գտել ենք։

Եւ հայրը վեր առաւ որդոցն ու նրանց հետ գնաց շտեմարանի առաջ։ Այնտեղ հաւաքուած էին բոլոր պալատականներն ու ժողովուրդը։

Թագաւորը մօտեցաւ շտեմարանի դռանը, բաց արաւ և կանչեց մեծ որդուն.

— Ինչո՞վ կլցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդեակ, ի՞նչ բանով, որ աշխարհումս ամենապէտքական բանը լինի։

Եւ մեծ որդին հանեց գրպանից մի բուռը հացահատիկ և պարզելով դէպի հայրը, ասաց.

- Հացով կլցնեմ այս ահագին շտեմարանը, թանկագին հայր։ Ի՞նչ կայ աշխարհումս աւելի պէտքական, քան հացը։ Ո՞վ կարող է առանց հացի ապրել։ Շատ թափառեցի, շատ բան տեսայ, սակայն հացից աւելի պէտքական ոչինչ չգտայ։

Այն ժամանակ հայրը կանչեց միջնակ որդուն և նոյն հարցը տուեց, ինչ որ մեծին։

Միջնակ որդին հանեց գրպանից մի բուռը հող և պարզելով դէպի հայրը՝ ասաց.

—Հողո՜վ կլցնեմ այս ահագին շտեմարանը, թանկագին հայր։ Ի՞նչ կայ աշխարհումս աւելի պէտքական, քան հողը։ Առանց հողի հաց չի լինի, իսկ առանց հացի ո՞վ կարող է ապրել։ Շատ թափառեցի, շատ բան տեսայ, սակայն հողից աւելի պէտքական ոչինչ չգտայ։

Գ.

Ամենից վերջը հայրը կանչեց կրտսեր որդուն։

—Ինչո՞վ կլցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդեակ, ի՞նչ բանով, որ աշխարհումս ամենապէտքականը լինի։

Կրտսեր որդին հաստատուն քայլերով մօտեցաւ շտեմարանին, անցաւ շէմքը և զննեց այդ ահագին, մեծածաւալ և մութն ու խաւար շինութիւնը։ Բոլորը հետաքրքիր նայում էին նրան։

Ապա նա գրպանից հանեց մի փոքրիկ մոմ, հրահանը խփեց կայծաքարին, կայծ հանեց և վառեց մոմը։ Բոլորը կարծում էին, թէ նա ուզում է կրակի լուսով լաւ զննել շտեմարանը։

—Դէհ, ասա, որդի՛, ինչո՞վ կլցնես,—անհամբեր ձայնով հարցրեց հայրը։

—Լոյսով կլցնեմ այս ահագին շտեմարանը, իմաստուն հայր, լոյսով միայն։ Շատ թափառեցի, շատ աշխարհներ տեսայ, շատ բան սովորեցի, սակայն լոյսից աւելի պէտքական ոչ մի բան չգտայ։ Լո՛յսն է ամենապէտքական բանն աշխարհում։ Առանց լոյսի հողը հաց չի ծնի, առանց լոյսի հողի վրայ մարդ չէր լինի։ Շատ թափառեցի, շատ երկրներ տեսայ, շատ բան սովորեցի և գտայ, որ լուսաւորութիւնն ու գիտութիւնն են ամենապէտքական բանը աշխարհում։ Եւ լոյսով կարելի է լցնել ո՛չ միայն այս ահագին շտեմարանը, այլ և ամբողջ աշխարհը իւր բոլոր անկիւններով, ծայրից-ծայր։

—Ապրի՜ս,—գոչեց ուրախացած հայրը.—քեզ է արժանի իմ գահն ու իշխանութիւնը, քանի որ լոյսով ու գիտութեամբ պէտք է լցնես թագաւորութիւնդ և մարդկանց հոգիները։

—Ապրա՜ծ կենայ մեր եղբայր թագաւորը,—գոչեցին միաբերան եղբայրները։ Ուղիղ որ՝ նա գտաւ ամենապէտքական բանն աշխարհումս։

—Ապրած կենայ մեր երիտասարդ լուսաւոր Թագաւորը,—գոչեցին ուրախացած պալատականներն ու ժողովուրդը։

Եւ հայրը գրկեց կրտսեր որդուն, ձգեց նրա ուսերի վրայ շողշողուն ծիրանին և տարաւ, նստեցրեց գահի վրայ։

Ամբողջ ժողովուրդն ընկաւ մեծ ուրախութեան մէջ, երգեց ու պարեց քառասուն օր, քառասուն գիշեր, որ ունեցաւ նորից մի խելացի ու լուսամիտ Թագաւոր։

23. ԵՐԳԻ ՀՐԱՊՈՅՐԸ

(Հէքիաթ)

Մեզնից հազար-հազար տարի առաջ, մեզնից շա՜տ-շա՜տ հեռու՝ կապոյտ ծովերի միւս ափում կար մի աշխարհ։

Այնտեղ ծաղիկներ կային, նախշուն ու սիրուն ծաղիկներ, Թիթեռների պէս փռուած ժայռերի ու դաշտերի վրայ և նրանց անոյշ հոտով լցուել էին այդ աշխարհի սարերն ու ձորերը։

Այնտեղ աղբիւրներ կային, պայծառ ու քչքչան՝ մանուկների պէս, որոնք ուրախ ու զուարթ Թռչկոտում էին քարից քար՝ ծաղիկները համբուրելով։

Բայց այնտեղ մարդիկ չար էին և անգութ։

Մի խեղճ, մի որբ ու աղքատ մանուկ էր ապրում այդ մարդկանց մէջ. նա գիշերը տեղ չունէր գլուխը դնելու, հաց չունէր ուտելու և շոր՝ հագնելու։

Նա մենակ էր, ինչպէս մի Թռչուն՝ ամայի ժայռերի մէջ։

Եւ նա մեծացաւ բոլորի աչքի առաջ՝ անտես և անյայտ. կերակրւում էր դաշտի բոյսերով և պատսպարւում անտառների ու այրերի մէջ։

Բայց բոլոր մարդկանցից ծածուկ՝ նա զննում էր մարդկանց սրտերը և տեսնում, որ քարից են այդ սրտերը, ժեռ քարից։

Եւ երբ բաւական մեծացաւ ու այդ աշխարհի բոլոր մարդկանց սրտերը զննեց ու շօշափեց, վշտացած համոզուեց, որ բոլորի սրտերը քար են, իսկական քար։

Այն ժամանակ նա Թողեց այդ քարասիրտ աշխարհը և ճամպայ ընկաւ մի ուրիշ, լաւ աշխարհ գտնելու համար։

Շատ գնաց, Թէ քիչ, միայն նա հասաւ ծովափին և երբ ափի աւազների վրայ շրջում էր, տեսաւ այնտեղ ընկած մի շատ սիրուն, շողշողուն ձուկը։

Ձուկը նրան որ տեսաւ, դարձաւ, մարդու լեզուով ասաց.

—Բարի տղայ, ծովի ալիքն ինձ դուրս ձգեց աւազների վրայ և ես չեմ կարող գնալ ծովը, քոյրերիս մօտ. խղճա՛ ինձ, վերցրո՛ւ, ծովը ձգիր։

Մանուկը, որ բարի սիրտ ունէր, առանց վախենալու գրկեց ձկանը և զգուշութեամբ տարաւ, ձգեց ծովը։

Եւ երբ ձուկը փաթաթուեց առաջին ալիքին, ասաց բարի մանուկին.

—Ինչ որ սիրտդ ուզում է՝ ասա՛, ես կըկատարեմ քո արած լաւութեան փոխարէն։

Մանուկը մի փոքր մտածեց և ասաց.

—Ինձ մի այնպիսի հնար տո՛ւր, որ մարդկանց կըրծքի տակ քարն իսկական սիրտ դարձնեմ։

—Դու սէր ես ուզում, հրաշալի տղա՛յ, շա՜տ լաւ։ Կըտրիր ծովափի եղեգներից մէկը և սրինգ շինիր, գնա՛ մարդկանց մէջ և երգիր։ Եւ երբ կըտեսնես, որ նրանց աչքերն արցունքով լցուեցին, այն ժամանակ կիմանաս, որ քարը հալուեց, սիրտ դարձաւ....

Այս ասաց ձուկը և իջաւ դէպի ծովի խորքը։

Մանուկն իսկոյն կտրեց եղեգնը, սրինգ շինեց և ըսկսեց սուլել։ Այնպէս հոգեգրաւ ու անուշ դուրս հոսեցին հնչիւնները սրնգի միջից, որ բոլոր Թռչունները կանգ առան և սկսեցին ականջ դնել։

Մանուկն շտապեց մարդկանց մօտ, մտաւ մարդաշատ

քաղաքը, կանգնեց հրապարակի մէջ և սրինգը նուագեց:

Քնքոյշ ու գեղեցիկ՝ ուղղակի մանուկի սրտի խորքից դուրս ցայտեցին երկնային շքեղ երգերը:

Նա երգում էր արցունքով թրջուած հացը աղքատների, ցուրտ, անտուն գիշերները աշնան. Նա երգում էր փակ դռներն ու քար սրտերը մարդկանց, անտէր, անտէրունջ մենակութիւնը որբերի:

Մանուկի երգերը տարածուեցին հրապարակի մէջ, մտան ամեն խրճիթ և տուն, փշրեցին բոլոր սրտերի քարերը և ծորեցին սրտերի խորքերը:

Եւ այդ մեղմ հնչիւնները լցրին մարդկանց սրտերն անհուն սիրով, որը ծովի պէս յուզւում էր և ափերից դուրս թռչում: Մարդիկ ուզում էին դուրս վազել, սիրով ու կարօտով գրկել, փայփայել մի ուրիշ, անծանօթ մարդու, գգուել, համբուրել նրան ու մեռնել նրա համար:

Եւ ահա մարդիկ դուրս թռան տներից, վազեցին հրապարակ, շրջապատեցին մանուկին, առաջին անգամ նկատեցին, որ աղքատ է նա ու մենակ. գրկեցին և համբուրեցին նրան և իրանց կեանքում առաջին անգամ արտասուեցին ու վշտահար հեկեկացին:

Մանուկը նուագում էր աւելի քաղցր, աւելի գգայուն և սրտառուչ, իսկ մարդիկ բոլորը լսում էին հոգեզմայլ և լալիս էին ու լալիս:

Ահա այդ օրուանից աշխարհ եկաւ երգը. երգի միջոցով հալուեցին քար սրտերը և այդ օրուանից՝ սէրը վշտի հետ անբաժան բուն դրեց մարդկանց սրտերի մէջ:

24. ԱՐՑՈՒՆՔ

Շատ ու շատ դարեր սրանից առաջ ապրում էր մի թագաւոր: Նա այնքան բարի և ողորմած էր, որ ժողովուրդը նրան հօր պէս սիրում ու պաշտում էր և ամեն րոպէ պատրաստ էր նրա համար իւր կեանքը զոհել: Պակաս չէր և թագաւորի սէրը դէպի ժողովուրդը: Նա էլ ժողովրդին էր իւր որդու պէս սիրում և գիշեր-ցերեկ

նրա մասին խորհում ու մտածում: Նրա որևէ պակասութիւնը, կարիքը տեսնելիս, կամ մի վշտալի խօսք, մի տխուր պատմութիւն նրա մասին լսելիս՝ Թագաւորի սիրտը ճմլւում էր, հոգին տակնուվրայ էր լինում... Եւ ահա նա մի օր ուզեցաւ այնպէս անել, որ իւր հպատակներից ոչ մինը իրան դժբաղդ չհամարէ և հաստատապէս վճռեց վերջ տալ իւր տէրութեան մէջ գտնուող բոլոր դատապարտեալների արցունքներին: Նա պատուիրեց իւր գլխաւոր դեսպանին շրջել տէրութեան մէջ գտնուող բոլոր երկրները, որոնել անբաղդ մարդկանց և նրանց արցունքները ժողովել մի ոսկէ սափորի մէջ:

Թագաւորական պաշտօնեան առանց մի րոպէ դանդաղելու, ճանապարհ ընկաւ իւր պետի հրամանը կատարելու:

Նա երկա՛ր, երկա՛ր թափառեց դէս ու դէն և սաստիկ յօգնեց, բոլորովին նուաղեց, ուժից ընկաւ:

Նա միքանի անգամ վերադառնում էր այս կամ այն երկիրը, նորից ու նորից ուշիուշով որոնում էր տարաբաղդներին, երկիւղ կրելով, որ մի գուցէ մոռացութեան տուած կամ աչքից թողած լինի մի որևիցէ անկիւն, ուր կարող է ծածկուած լինել մի մարդ, որ տառապում է վշտից ու հոգսերից:

Նա շրջում էր սարերի ու ճանապարհների վրայ, մութ-մութ ձորերում ու ճախճախուտ ճահիճներում, անցնում էր նեղ ու խուլ շաւիղներով, մինչև անգամ մըտնում էր ամայի, չոր ու ցամաք անապատները, սակայն այնտեղ էլ յայտնւում էին անբաղդ, արտասուք թափող մարդիկ: Թագաւորի դեսպանը մխիթարում, սիրտ էր տալիս նրանց բարուոք և երջանիկ ապագայի յուսով և նրանց արցունքները ժողովելով ոսկէ սափորի մէջ՝ առաջ էր գնում: Սակայն ուր գնում էր, ամեն տեղ, ամեն անկիւնում, տարաբաղդաբար, առատութեամբ էր գըտնում այն, ինչ որ ինքը որոնում էր:

Մէկ տեղ մայրն էր ողբում իւր սիրասուն որդոց

մահը, միւս տեղ թոյլ ու սրտամաշ ձայնով որդիքն էին աղաչում, պաղատում հօրը, որ նա մի կտոր հաց տայ իրանց ուտելու, իսկ խեղճ հայրը վշտակոծ և աղիողորմ լալիս էր, որովհետև հաց չկար, ինքը հիւանդ էր, գործելու ոյժ չունէր։ Մի այլ տեղ մանկահասակ և շնորհագեղ կոյսը՝ կանգնած մեծ ճանապարհի վրայ, որտեղով պէտք է պատերազմից վերադառնար նրա անգին և կարօտեալ եղբայրը, անհամբեր և սրտատրոփ սպասում էր իւր հոգու հատորին և արտասուալից աչքով նայում հեռուն։ Այստեղ որդին էր ողբում իւր հօր մահը, այնտեղ մայրն էր հեծկլտում, աղի արցունք թափում իւր դստեր գերեզմանի վրայ... Մի խօսքով՝ ուր էլ որ գնում էր Թագաւորական պաշտօնեան, ամեն տեղ լաց ու արտասուք էր տեսնում, ամեն տեղ ա՜խ ու վա՜խ լսում...

Բայց ահա յանկարծ մի տեղ բոլորովին նոր տեսարան բացուեց նրա աչքի առջև։

Անշուք, բայց մաքուր խրճիթի խորքում, մահուան անկողնի մէջ պառկած էր մի պատկառելի ծերունի և հանգիստ ու անխռով վերջին հրաժարականն էր տալիս իւր երկրաւոր կեանքին։ Մթագնած աչքերով նայում էր նա իւր կնոջն ու որդոցը, որոնք նրա ոտների մօտ կանգնած դառն արցունք էին թափում։ Բայց ահա նա իւր երեսը շրջեց դէպի պատը, որի վրայ կախուած էին նրա սուրն ու նիզակը։ Նա մի խոր հայեացք ձգեց այդ զէնքերի վրայ, որոնք այնքան յաղթութիւններ էին տարել, և մի ակնաթարթում նրա աչքերը պայծառացան, դէմքը վառուեց՝ որպէս ճաճանչափայլ արև։ Ծերունին՝ հաւաքելով իւր վերջին ոյժը, գլուխը մի փոքր բարձրացրեց և մեղմ ձայնով արտասանեց.

—Ես մեռնում եմ հանգիստ և խաղաղ սրտով, որովհետև պատուաւոր կերպով ապրեցի։ Ինձ հետ դագաղ դրէք և իմ զէնքերը, որովհետև ես չունիմ ոչ ոք, որին կարողանամ կտակել իմ այդ փառքն ու պատիւը։ Անարգ որդիս յաւիտեանս արատաւորեց իմ անունը։ Նա արժա-

չէ այդ զէնքերը կրելու։

Այս ասելիս, աղի արցունքները հեղեղի նման թափուեցին ծերունու աչքերից և թրջեցին նրա ձիւնի պէս սպիտակ մօրուքը։ Անշուք խրճիթում մեռելային լռութիւն տիրեց և ծերունու կրծքից դուրս թռաւ մի խորին հառաչանք։

Նրա մաքուր հոգին վերացաւ աւելի գեղեցիկ, աւելի չքնաղ աշխարհ...

Թագաւորական դեսպանը մեծ հոգատարութեամբ ժողովեց վշտահար ծերունու արցուքները և խրճիթից դուրս գալով՝ շարունակեց առաջ գնալ։

Նրա սափորը հետզհետէ լցւում էր։

Նրա մէջ կային և՛ վշտի, և՛ տառապանքի, և՛ ուրախութեան, և՛ անհուն սիրոյ արցունքներ։ Ոսկէ սափորը փակ էր միայն ատելութեան վրէժխնդրութեան արցունքների համար։

Միքանի տարի անցնելուց յետոյ, Թագաւորական դեսպանը դարձաւ իւր պետի մօտ, արցունքներով լի սափորը դրեց նրա առջև և սկսեց պատմել իւր տեսածն ու լսածը։ Թագաւորը խորին կարեկցութեամբ լսում էր դեսպանի պատմածները. բայց երբ դեսպանը վերջացրեց իւր պատմութիւնը, Թագաւորը տխուր ու տրտում նայեց իւր առջև դրուած սափորի մէջ և ապշած մնաց։ Դժբաղդների ամեն մի կաթիլ արցունքը ամենայստակ և զուտ մարգարտի էր փոխուել, միմիայն անարգ որդու վրայ թափած ապաբաղդ հօր արցունքները մի ահագին և ծանր քար էին դարձել։

—Այժմ պարզ տեսնում եմ,—ասաց Թագաւորը,—որ ես կարող եմ լիովին վարձատրել բոլոր տառապեալներին նրանց կրած կորուստների և թափած արցունքների համար, միայն հայրական արցունքներն են, որոնց հնար չկայ ոչ վարձատրելու և ոչ էլ աշխարհիս անհուն գանձով ու հարստութեամբ որևէ հատուցում տալու։

—Այո՛, այո՛,—շարունակեց Թագաւորը,—անպատուած

ծնողների արցունքները ծանր քար դարձած ճնշում են իրանց տակ անարգ զաւակներին և յաւիտեան անփրկելի պատասխանատու են դարձնում նրանց թէ մարդկանց և թէ Աստուծոյ առջև…

25. «ՓՇՈՒՐ ԸՄ Խ՛ԱՑ»

Յունուարի մի ցուրտ, շատ ցուրտ օր էր. թքէիր, գետին չէր ընկնիլ: Սպիտակ էր գետինը, սպիտակ էին տների պատերն ու կտուրները, սպիտակ էին մանաւանդ փողոցների և պարտէզների ծառերը. ձիւնի միատեսակ ճերմակ սաւանը փռուած էր ամեն տեղ, պատել էր ամեն ինչ: Գիշերը խիստ պարզկայ էր, և այժմ սառած ձիւնը անցուդարձ անողների ոտների տակ այնպէս անախորժ ճռճռոց էր հանում, որ մարդու մարմինը փշաքաղւում էր: Արև չկար. մառախլապատ էր երկինքը. սաստիկ ցրտից յանկարծ խտացած գոլորշիները բարակ եղեամներ դարձած՝ խաղում էին օդի մէջ: Ագռաւներն ու աներես ճնճղուկներն անգամ այսօր, սովորականին հակառակ, ճիչ ու աղմուկով չէին թռչկոտում կտրից կտուր, բակից բակ՝ պաշար թոցնելու. նրանք նստոտել էին այս ու այն պատի վրայ, այս ու այն ծառի ճիւղերին լուռ, խղճուկ, կծկուած. սաստիկ ցուրտը սրանց էլ էր նեղել: Ամեն մի անկիւնից, ամեն մի բնից, ամեն մի ապրուկից, ուր որ կենդանի շունչ կար՝ ծուխ էր բարձրանում. մարդիկ կռւում էին ցրտի դէմ, ինչով կարող էին՝ տաքանում էին:

Թէև արդէն առաւօտ էր, բայց Ս…ի փողոցները դատարկ էին և անկենդան. ո՞վ էր գժուել այս կատաղի ցրտին գլուխ դուրս հանել տնից. հազիւ փողոցների այս ու այն ծայրում ստուերների պէս երևում էին մուշտակների, եափունջիների կամ վերարկուների մէջ կոլոլուած մարդիկ, քիթ ու պռունգ փաթաթած, եղեամով ծածկուած. սրանք էլ, ո՞վ գիտէ, որպիսի անհրաժեշտ կարիքից ստիպուած էին թողել իրանց փափուկ բնակարան-

ները, այն էլ ոչ թէ քայլում էին, այլ ակամայից վազում էին, համարեա հևալով:

Այդ ժամին փողոցի հեռաւոր ծայրում յանկարծ, անսպասելի կերպով, երևացին երկու փոքրիկ մանուկներ, եօթը և տասը տարեկան: Խեղճերը այնքան վտիտ էին, որ ասես գերեզմանից դուրս քաշած մեռելներ լինէին. դժուար էր առանց սոսկումի նայել նրանց վրայ: Երկուսըն էլ գլխաբաց, գզգզուած մազերով, որոնց վրայ առատօրէն թափուել էին եղեամների թերթիկներ. յօնքերի և աչքերի թերթերունքների վրայ նոյնպէս նստել էին եղեամներ, տալով մանուկներին մի անօրինակ, մի խղճալի տեսք: Նրանց մարմինների մերկութիւնը հազիւ հազ ծածկուել էր ինչ-որ ծուէններով. անհնարին էր նոյն-իսկ որոշել, թէ ինչ է նրանց հագինը, կամ որն է վարտիքը, շապիկը կամ արխալուղը: Տեղացի չէին նրանք, այլ գաղթականներ հեռու տեղից, տարաբաղդ, արիւնոտ երկրից էին եկել, անհայր, անմայր, անտէր… կատարեալ որբիկներ… Սրի և կրակի ճարակ դարձած իրանց խեղճ հայրենիքի մասին այս փոքրիկ թշուառները քիչ բան գիտէին, կամ գուցէ և շատ բան գիտէին, բայց քիչ էին պատմում:

Խեղճերը գիշերները քնում են մի աստուածածնի գոմում. այնտեղ շատ անասուններ կան, տաք է… Առաջ փորձեցին մեծ գոմէշների մսուրի մէջ քնել. բայց նրանք այս տարօրինակ մարմինները տեսնելով՝ խրտնեցին. թըշուառները վախեցան և փախան, մտան մի փոքրիկ, խղճուկ հորթուկի մսուր, որ նոյնպէս նիհար էր, նոյնպէս տխուր, նոյնպէս թշուառ՝ որպէս երկու որբիկները: Խեղճի մայրը հէնց նոր էր մեռել. նրան ծիծ տուող չկար, ուստի կերակրում էին չոր խոտով. բայց նա դեռ ուտել չէր կարողանում, սովոր չէր. մէկ-մէկ վերցնում էր, ծամծմում և վեր ածում. նա միշտ սոված էր, միշտ էլ տխուր, գլուխը կախած, օր աւուր նիհարում էր ու նիհարում:

«Թշուառին թշուառն է միշտ մխիթար»․ որբ հորթուկը սիրով հիւրընկալեց որբ մանուկներին․ Նրանք բարեկամացան և սիրեցին իրար․ և երբ գիշերները երկու որբիկները ճիտ-ճիտ արած, իրար պինդ խառնած քնում էին մսուրի մէջ՝ հորթուկն էլ իւր փոքրիկ դունչը դնում էր նոյն մսուրի շրթին, քնում էր, իւր տաք շունչը մանուկների երեսին փչելով։ Գոհ էին մանուկները․ միայն փոքրիկ որբը գիշերները շուտ-շուտ վեր էր թռչում, ճըւում, ճչում, լաց լինում, ապա զարթնելով, գանգատւում էր մեծին, թէ գալիս են… տանում են… մորթում են… գոմի խաւարի մէջ սարսափում էր դևերից, չարքերից։ Եղբայրն այդ ժամանակ աւելի պինդ էր գրկում նրան, հանգստացնում էր, և նրանք կրկին քնում էին։

Լաւ էր գոմը նրանց համար, շա՜տ լաւ․ տաք էր… Առաւօտները վաղ զարթնում էին և իրանց վայելած հիւրընկալութեան փոխարէն նախ աւելում, մաքրում, չորացնում էին հորթուկի տակը, գուրգուրում էին նրան, ապա կրում, թափում էին մնացած անասունների աղբը և դուրս էին վազում փողոցներում թափառելու… Այսպէս էին ապրում նրանք, և գոհ էին—«զուլում» չկար։

Սրանից առաջ էլ համարեա ամեն օր նրանք շրջում էին փողոցներում. տեղացիք տեսնում էին նրանց նոյն ցնցոտիների մէջ, նոյնպէս ոտաբոբիկ, նոյնպէս գլխաբաց, գզգզուած, որպէս այսօր, և ոչ ոքի խիղճը չէր վրդովւում։ «Դէհ, եղանակը տաք է, «եթիմն» էլ աներես կլինի, հաւաքելով կապրեն, է՜լի», մտածում էին նրանք և խիղճը հանգստացնում։ Բայց այսօ՜ր… որբերը դարձեալ փողոցումն են։ Այս լաւ չէ, անտանելի ցուրտ է։ «Օձի ճուտն էլ այս ցրտին թող դրսում չմնայ, մեղք է», մտածում էին անցորդները… «ախր այդ ի՞նչպէս են բոբիկ, դողդողալով վազում և ի՞նչ կարիք կար այսօր էլ անպատճառ դուրս գալ… Ա՛խ, աներես լակոտներ»…

—Վա՜յ, վայ, սրանց մտիկ տուր, սրանց,—ասաց մի մուշտակաւոր պարարտ մարմին իւր հետ գնացողին՝

երկու վազող որբերի վրայ ցոյց տալով․—օ՜ֆ, հոգիս մըղկըտաց, կրակ մաղուեց գլխիս, կրակ… ինչպէս են դողում, Աստուած իմ․ ախր այս ցրտին ո՞ւր էին դուրս գալիս իրանց բնից»… Եւ նա ի սրտէ ցանկացաւ, որ այդ որբերն այսօր գոնէ դուրս եկած չլինէին կամ գոնէ ինքը չտեսնէր նրանց դողդողալիս․ հանաք չէ, մարդու հացը հարամ եղաւ…—«Եթէ ճաշին միտս ընկնին՝ դժուարութեամբ կըճաշեմ»,—մտածեց նա և դէմքը կնճռեց։

Խօսակիցը հասկացաւ ընկերոջ խղճին հասած վիրաւորանքը և կամեցաւ նրան դուրս հանել այդ անախորժ վիճակից։

—Է՜հ, իզուր ես այդքան անհանգիստ լինում նրանց մասին, բարեկամ․ նրանք սովոր են, կըտանեն․ ա՜յ, այլ բան է, Աստուած չանէ, եթէ իմ և քո երեխաներին մի բան պատահի․ գիտե՞ս, իմ Օսիկին որ «եօրղանով» էլ հիմա դուրս հանես, տեղն ու տեղը կըսառի, հաւատա՛, կըսառի․ սրանց բանն ուրիշ է, սրանք կըտանեն…

Փաստաբանութիւնը խելացի էր, պարարտ մարմինն ու խօսակիցն անցան…

Իսկ որբերը… Նրանք շարունակեցին առաջ գնալ փողոցով և ամենևին չէին էլ զարմանում, որ իրանք այս անտանելի ցրտին փողոցումն են, մինչդեռ իրանց հասակակից ո՛չ մի ուրիշ երեխայ չի երևում. Նրանք մի բան միայն գիտէին, որ թէև սաստիկ ցուրտ է, թէև իրանք էլ մերկ են, ոտաբոբիկ, գլխաբաց, դողդողում են՝ բայց և այնպէս պէտք է գտնեն ընկնեն, որ հաց ճարեն, շատ են սոված, երէկ ճաշից սկսած բան չեն կերել…

—Վա՜խ, Գալօ, էս իմա՜լ ցուրտ ա, եամա՜ն,—ասաց փոքրիկը ձեռները իւր կապտած շրթունքներին մօտեցնելով և ոտները խշխշացող ձիւնի վրայ վերև-ներքև անելով։

—Խա՛, Մըտօ, շատ ցուրտ ա, մըմուռ մարդու ջի-

գեար կուտայ, շուտ արի։

— Ախր «փագեախը» (գոմ) տաք էր, — շարունակեց փոքրիկը լացակումած. արցունքների խոշոր կաթիլները կախուեցին արտեւանքներից, բայց առանց ընկնելու սառան։

— Տաք էր, ապա որ անօթի ենք, ի՞նչ էնինք... Փոքրիկը լռեց, կծեց շրթունքները, փչեց մատներին — քո՜ւհ, քո՜ւհ, քո՜ւհ։

Ահա նրանք կանգ առան մի մեծ դարպասի առաջ, որ բաց էր։ Բակի ներսում սաստիկ ցրտից կծկուած քնած էր մի մեծ գամփռ. նա չէր նկատում մանուկներին, որոնք վախվխելով, ձեռք ձեռքի տուած, անվստահ քայլերով ներս մտան բակը և մի փոքր առաջ գնալով՝ տեսան ահաւոր շանը։ Մեծը կանգ առաւ, չհամարձակուելով աւելի առաջ գնալ։

— Ախր անօթի եմ, մխիմ, էլ գ՞ր երթանք, — մրմնջաց փոքրիկը. էս տուն ճոչ ի, փշուր ըմ խաց ուզենք, էլ ման վազենք փագեախ. ցուրտ ա, փետացանք...

Նրանք մի փոքր էլ առաջացան, յուսալով անձայն, անշշուկ անցնել շան մօտից և տանը հասնել։ Բայց ձիւնի ճռճռոցը զարթեցրեց շանը. նա, գլուխը բարձրացնելով, տեսաւ երկու գզգզուած մանուկներին. մի կատաղի ոստիւն գործեց և վրաները յարձակուեց։ Վտանգն զգալով՝ խեղճ մանուկները ճչացին, իրար գրկեցին և վայրկենապէս նստեցին ձիւնի վրայ։ Այսպէս են պաշտպանւում շների յարձակումից մուրացիկ մանուկներն ու կանայք։ Ասես իրանց յաղթահարուած ցոյց տալով՝ այդ թոյլ արարածներն ուզում են գազանի սրտում գութ զարթեցնել։ Եւ արդարև, շունը կանգ առաւ. կենդանու կատաղութիւնը զսպուեց որբերի անպաշտպանութեան առաջ. նա մի փոքր հեռու պառկեց, գլուխը թաթերի վրայ դրած, կարծես հսկելով երկու թշուառների վրայ, որ չլինի թէ վեր կենան, փախչեն։ Սրտաճմլիկ, արտասուալի տեսարան էր. երկու ոտաբոբիկ, գլխաբաց,

ցնցոտիների մէջ դողդողացող մանուկներ, կապտած շրթունքներով, իրար կպած, կծկուել, նստել էին ձիւնի վրայ և լալիս էին. եղեամի թերթիկները խաղում էին ցուրտ օդի մէջ և պտըտուելով թափւում էին նրանց գզգզուած մազերի վրայ։ Կատաղած շունը նստել էր նրանց կողքին մռմռալով, կարծես սպասում էր, որ թշուառները վեր կենան թէ չէ՝ վրայ պրծնի, կտոր-կտոր անէ։ Բակում ոչ ոք չկար։ Մանուկները շարունակում էին յուսահատ լալ ու ճչալ, սարսափած աչքերով նրանք նայում էին մէկ շանը, մէկ էլ տան դռանը, այնտեղից օգնութիւն սպասելով։ Ահա վերջապէս տան դուռը ճռռալով բացուեց և շեմքի վրայ երևաց մի կին։

«Փշուր ըմ խա՜ց», — պոռացին մանուկները միասին դողդողջիւն ձայնով։

— Աներե՜ս լակոտներ. ասում էի՝ սրանք կըլինին, — մրթմթաց նա և ներս մտնելով՝ բերաւ մի կտոր հաց, տուաւ սարսափած մանուկներին, իսկ ինքը յետ դարձաւ։

Մանուկները խլեցին հացի պատառը և մինչ պատրաստւում էին շտապով դուրս թռչել դռնից՝ շունը վեր թռաւ նրանց յետևից, վրայ պրծաւ, փոքրիկ որբի ոտքից բռնեց կատաղի հափոցով։ Սարսափած մանուկը ճչաց և երեսի վրայ ընկաւ հացը ձեռքին, մինչդեռ մեծը շշկլուած՝ չգիտենալով օգնութեա՞ն վազել, թէ փախչել, կանգնած մնաց ու լաց էր լինում։ Տանտիկինը վազեց, հալածեց կատաղած շանը և երբ ձեռքից բռնելով վեր կացրեց որբիկին՝ երեխան ծանր տնքաց։ Գազանի սուր ժանիքները պատռել էին նրա փոքրիկ ոտքը, կաթ-կաթ արիւնը ծորում էր նրա վէրքից և թափւում ձիւնի վրայ։ Երեխան ձեռք տուաւ ոտքին. ձեռքը ներկուեց արիւնով. նա զարհուրած յետ քաշեց ձեռքը, նայեց ափին, նայեց վիրաւոր ոտքին և էլ աւելի բարձր ձայնով լալ սկսեց։ Այնուամենայնիւ նա կռացաւ, վերցրեց հացի պատառը և կաղալով ու տնքալով հետևեց իւր եղբօրը։ Արիւնը շարունակում էր կաթել նրա ոտքից, և երկուսով լալիս

էին, տեսնելով կարմիր կաթիլները…

Բայց և այնպէս՝ քաղցած, դողդողացող մանուկները կխեցին հացի արիւնոտ պատառը և մի կտոր կրծելով՝ առաջ գնացին։

Դեռ երբէք հացի մի պատառն այսքան թանկ չէր գնուել…

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

26. ԱՌԱՒՕՏ

Առաւօտ է։ Ամենքը շարժողութեան մէջ են։ Գիւղացիներն արդէն զարթնել են այն փոքրիկ թռչնիկի ձայնից, որ գալիս, նստում է երդիքների վրայ ու կանչում. «Լծէ, լծէ»։ Նրանք արդէն լծել են իրանց եզներն ու գոմէշները և բաւական վարել են գետինը։ Տների մէջ մատակներն ու կովերը կթել են։ Ոչխարների հօտն էլ դաշտումը մատղաշ արօտներից արդէն մի քաղցր նախաճաշ է արել։ Տանտիկինն էլ կովերն ու հորթուկներն է դուրս հանում։

Գիւղի աղջկերքը խումբ-խումբ գնում են դէպի կանաչ մարգագետինը, ծաղիկները կոխելով, ծաղիկներ քաղելով և իրար վրայ ածելով, ծիծաղելով, խայտալով։ Նրանք հանդիպում են կաքաւների երամին, լորին, արտուտիկին, որոնք խոտերի տակից թռչկոտում են թփից թուփ, ուզենալով իրար նմանուել. դու ասա՛՝ աղջկե՞րքը թևաւոր թռչուններին, թէ՞ թռչունները ոտաթուկ աղջկանց։ Նրանք անցնում, գնում են առաջ՝ բանջարներ ժողովելու և կանչելու, աղջկերքը «քա՛, քա՛», կաքաւները՝ «գա՛, գա՛»։

Կռունկը երամով կարաւան է կազմել սլաքաձև, օդի բարձր տեղերովն անցնելով՝ «կռու—կռու» է կանչում։ Ծառայ եմ ձայնին։

Երկարասրունք արագիլը, կտուցը սրած՝ բնից դուրս է եկել, «հօդ—հօդ» ձայնելով դէպի դաշտն է վազում ջրի ու ցամաքի օձերը բռնելու և սպանելու։

Ջկնկուլը գետերի ափերն է վազում ու «ձը՛կ—ձը՛կ» կանչելով՝ ձուկ-մուկ է որոնում՝ կուլ տալու։

Բադն ու սագը ջրերի վրայ նստած՝ կայտառ նաւավարների պէս թիվըռում են ու երգում։

Սանրակատար յոպոպն անհանգիստ ոստոստում է և անդադար աղաղակում՝ «յո՛պ-յո՛պ»։

Դեղնապորտիկը փափուկ ու մաքուր, ճերմակ ու դեղին շորեր հագած՝ փոքրիկ մացառների ու թանձր խոտերի միջից գլխիկը ցոյց տալով ու թագցնելով իւր ձայնն է լսեցնում։

Սոխակի ձայնն էլ լսւում է բոլոր երգողների ձայների հետ և ամեն լսողի ուշքն ու միտքը վերացնում։

Բարբարոս բազէն որոտացող ձայնով վեր ու վար է սլանում՝ մի անմեղ ու անզգոյշ աղաւնի կամ տատրակ պատառոտելու։

Անգղները, ձրի ապրող աւազակների պէս, մի սպանուածի հոտ առել, գնում են դիակի մսերը կողոպտելու։ Ահա արծիւն էլ երևում է. Նրա հզօր թևերի բախումից օդը շառաչելով պատռւում է. բոլոր թռչունները միանգամից լռում են, մինչև անցնի, հեռանայ այդ ահեղ ու փառահեղ թագաւորը։

27. ԳԱՐՆԱՆ ՍԿԻԶԲԸ

Գարուն է։ Լեռների ձիւնն սկսեց հալուել. դաշտերը վաղուց ժպտում են գեղեցիկ կանաչով։ Օդը՝ լցուած անուշահոտ ջերմութեամբ, կեանք է սփռում ամեն կողմ։ Ապրիլ ամիսը բերել է իւր հետ աւելի տաք ու պայծառ

օրեր։ Լեռների վրայ կարմիր, դեղին և սպիտակ շուշանները վաղուց արդէն ծաղկել են և հայ աղջիկները նրանցից փնջեր են կազմում։ Սունկը, բոխին, ծնեբեկը, սիպեխը և լեռնային զանազան բանջարեղէններն առատութեամբ աճում են։ Ձորերի միջից վազում են հարիւրաւոր աղմկալի վտակներ և օձապտոյտ ընթացքով տարածւում են հովտի մէջ։ Նորեկ ծիծեռնակը հրաւիրում է մշակին դէպի դաշտ։

Հայ գիւղացիք արդէն սկսել են դաշտում իրանց վարը վարել։ Աշխատութիւնն սկսուել է ամեն տեղ։ Գիւղերում մի անգործ մարդ չի կարելի գտնել։ Ամեն ոք զբաղուած է իւր մշակութիւններով։

28. ԳԱՐՆԱՆԸ

Ա.

Մայիս ամիսն է. գարունը իւր բոլոր փառահեղութեամբ ամեն շնչաւորի վրայ իւր տպաւորութիւնն ներշնչել։ Վարդահոտը՝ բարակ զեփիւռի շնորհիւ՝ ամեն կողմ հետդ ման է գալիս. լեռ ու դաշտ կանաչներով, սեզերով և սիրլի-սիրլի համեստ երեքտերևեան խոտերով զարդարուել են. հազարաւոր գոյնզգոյն ծաղիկներ երեսիդ ծիծաղում, խնդում են և առհասարակ մի բուռը հող եղած տեղը բուսական թագաւորութիւնը իւր գահն է դրել։

Քարափների ծերպերիցն էլ կեանք է արտադրւում. մի կտոր կոշտ ընկած տեղն էլ կանաչի գլուխ է դուրս ցցուել. էլ ապառաժ ու մերկ գետին չէ մնացել։ Սքանչելի է մայիսը։ Թռչուններն իրանց աղուամազ ձագերի համար կերակուր են տանում։ Ո՞ւր է վազվզում օդի մէջ ծլվլալով ծիծեռնակը։ Նայիր այն ճնճղուկի, փայտափորի բներին. ինչպէս քնքուշիկ ձագուկները՝ դեղին երիզը կտուցի չորս կողմը, բաց են անում իրանց բերանները և լեզուիկները հանած, ճիչ ու ծլվոց բար-

ձրացած՝ կերակուր են խնդրում իրանց մօրից. ինչ քաղցր ճռուողիւն են բարձրացրել:

Սակայն այնպէս չէ կարգադրել բնութեան ամենագէտ Արարիչը. Թող ինչքան ուզում են՝ սիրուն ճուտիկները միմեանց առաջ կտրեն. մայրը իւր կարգը լաւ գիտէ. նա հերթը չի կորցնում, իւր հաշուի մէջ չի սխալւում. նա լաւ գիտէ, թէ առաջ կերակուրը որի բերանն է դրել. նա դեռ այն էլ է հասկանում, թէ իւր ընկեր արուն որին է կերակրել: Նա ուրախանում է իւր նախշունիկների վրայ. մի րոպէ էլ կանգ է առնում բնի մօտ, քրքրում է կտուցիկով ձագերի դեղին, փափուկ բուրդը, փափկացնում է նրանց անկողինն ու թռչում կրկին դէպի դաշտ:

Բ.

Ի՜նչ axորժալուր է հովուական սրնգի ձայնը մայիս ամսին, երբ նա մի քարի վրայ նստած, կամ լեռան գլխին թեկնած՝ սուլում է ինքնագոհ: Դուք չկարծէք, թէ նա միայն իւր սրտի ուրախութեան համար է ածում. ո՛չ, նա դրանով հասկացնում է իւր սիրելի հօտին, թէ ժամանակ է ժողովուել իւր չորս կողմը և գնացքն ուղղել դէպի փարախը, ուր սիրունիկ գառներն սպասում են լսելու իրանց մայրիկների մայիւնը:

Ո՜հ, ինչ հրաշալի տեսարան է, ինչ քաղցր րոպէ: Գառները լսում են հեռուից մօր ձայնը և անհամբերութիւնից ուզում են կոտրատել դըվռւկի (ցանկապատ փարախ) դուռը, դուրս թափուել՝ դիմաւորելու ամենաթանկագին մօրը, որ իրանց համար կուրծը լի axորժահամ կաթն է բերում: Մինչև հովիւը բաց կանէ դըվռւկի դուռը, ուլերը՝ այդ ճարպիկ պստիկ սատանաները, քիչ է մնում՝ որ բարձրանան նրա ուսերը:

Նախանձելի է հովուի դրութիւնը հօտի վերադառնալու ժամանակ: Ուլերի ու գառների մկրկոցը, այծ ու

ոչխարի հարայ-հրոցը նրա սրտի վրայ անպատմելի տպաւորութիւն են գործում: Ոչ ոք չի կարող բոլոր ցաւերը չմոռանալ այն միջոցին, երբ գառնուկներն իրանց փափլիկ դմակները շարժելով և ուլերն իրանց անհանգիստ պոչիկները խաղացնելով իրար գլխով են դիպչում:

Գառն ու ոչխարը իրար են խառնւում և նրանցից իւրաքանչիւրն աշխատում է գտնել իւր մօրը կամ ձագին: Բաւական է, որ մաքին մի փոքր հոտոտէ, իսկոյն յետ է խփում իրան մօտեցող օտար գառանը և հոտոտելիքը դէպի վեր բռնած՝ ցատկում է այն կողմը, ուր իւր սիրելի հարազատն է: Մօր անոյշ մայիւնը և խանդաղատական ակնարկը թափանցում է անմեղ գառնուկի սիրտը և վստահութիւն է տալիս նրան վազելու դէպի ինքը եկող ոչխարի կուրծը. իսկ վերջինս իսկոյն ոտքերը յետ է բաց անում և թոյլ է տալիս ամենասիրելի զաւակին փշփշալով ծծել մօր պտուկները: Եւ սրտի ուրախութիւնն ու մայրական քաղցր զգուանքն աւելացնելու համար՝ նա անդադար լիզում է փոքրիկ գառնուկի թաւշանման մորթը:

Անխիղճ են այդ միջոցին մարդիկ. նրանք, իրանց կենսական պէտոյքը հայթայթելու համար, խլում են խեղճ գառան բերնից նրա մօր պտուկը և կաթի մեծ մասը իրանք են կթում: Անբան անասունն, իհարկէ, լաւ գիտէ մարդկանց անիրաւութիւնը. ինչքան էլ նրանք կթեն, նա իւր զաւակի բաժինը թաքցնում է կուրծի մէջ:

Ուշադրութեան արժանի է նաև կթողների իրարանցումը: Գալիս են մանկահաս հարսները և մատաղահաս աղջիկները. նրանք լաւ գիտեն ճաշուայ կթի ժամանակը: Գիւղական փարախներն առհասարակ շինուած են լինում գիւղից մօտիկ, մի ձորամիջում կամ բլրի ստորոտում, քամուց և տօթակէզ արեգակից ապահով: Եւ ահա մեր ամօթխածներն ուսում են կամ շալակում կովկիթն ու կճուճը, գլուխներին են դնում կաթ-քամիչն ու մաղը և գիւղից միասին դուրս գալիս՝ երեք-երեք, չորս-չորս,

խումբ-խումբ բաժանուած՝ խնդալով, կատակներ անելով գալիս են փարախը և սպասում են հօտի վերադառնալուն արօտից։

29. ԳԻՒՂԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԸ

Առաւօտ է։ Ծերունի Խաչօյի տանը թոնիրները վառւում են։ Մէկի վրայ դրուած են պղնձէ ահագին կաթսաներ և կաւէ մեծ-մեծ պտուկներ ու կերակուր են եփում, միւսի մէջ հաց են թխում։ Հարսները, աղախինները, հաւաքուած թոնիրների շուրջը, ընդհանուր շարժողութեան մէջ են։ Տունը՝ լցուած կերակուրների անուշահոտ շոգիով՝ ներկայացնում է մի ահագին խոհանոց, որտեղ, տեսնողը կըկարծէր, թէ ճաշ է պատրաստւում մի ամբողջ բանակ կերակրելու համար։ Եւ իրաւ. բացի ծերունու ահագին գերդաստանից, նրա սեղանից կերակրւում են բազմաթիւ հովիւներ, մշակներ իրանց ընտանիքներով, որոնք ծառայում են նրա տանը։ Ամեն օր վառւում են նոյն թոնիրները, ամեն օր պատրաստւում է կերակուրների նոյն քանակութիւնը։ Եւ ծերունու ժրաջան հարսները մի րոպէ հանգստութիւն չունին։

Բացի դրանից՝ կային տնտեսական և ուրիշ շատ հոգսեր։ Ահա այնտեղ, բակում, հարսներից մէկը կովերն ու ոչխարներն է կթում. միւսը օջախի վրայ կաթ է տաքացնում՝ մածուն շինելու համար. երրորդը պանիր է մակարդում. չորրորդը հարում է խնոցին՝ կարագ պատրաստելու համար։ Նրանց շուրջը վազվզում են բազմաթիւ երեխաներ և խաղում են նորածին գառների ու հորթերի հետ։ Մանուկ և գառնուկ՝ երկուսն էլ աճում են միասին. դրանք են այն երկու հարստութիւնները, որոնցով ուրախանում, պարծենում է գիւղացին։

Բակի արևահայեաց կողմում, պատի տակ, մէկը միւսի վրայ կարգով շարուած են մի քանի հարիւր փեթակ։ Ապրիլի արեգակը թափում է այնտեղ իւր ջերմ ճառագայթ-

ները։ Մինչդեռ հարսները միւս կողմում զբաղուած են իրանց գործով, ծերունի Խաչօն այստեղ բաց է անում փեթակների դռնակները։ Ճանճերն ուրախ-զուարթ դուրս են թափւում ծակերից, սաւառնում են նրա ալեոր գլխի շուրջը, բզզբզում, վժժվժում, թռթռում են և օդը թնդում է միլիոնաւոր միջատների ձայնից։ Գտնւում են նրանց մէջ և այնպիսի չարաճճիներ, որ կծու համբոյրներ են տալիս ծերունու խորշոմած երեսին։ Բայց նա ամենևին ցաւ չէ զգում, միայն ձեռքով քշելով՝ ասում է. — «Ա՛յ չար սատանայ, ինչ վատութիւն է արել քեզ Խաչօն»։

30. ՍԵՐՄՆԱՑԱՆ

Գիւղացին բեռը շալակած գնաց դաշտ, կանգնեց իւր ցելի մօտ. ծանր բեռը ցած դրեց, գոգնոցը կապեց, երկինքին նայեց։ «Կապո՛յտ երկինք, ուղիղ սրտով քեզ եմ կանչում, միայն քեզ, որ դու արև, անձրև շատ տաս իմ այս սերմին՝ սրբի պէս։ Դու լաւ գիտես, թէ քանի՜ մարդ աչք կըդնի ցանածիս, քանի պարտքեր ու պատուհաս միշտ կըսպասեն սերմածիս»։ Այսպէս ասաց ու երեսը խաչակնքեց դողալով, սերմը լցրեց գոգնոցի մէջ՝ սկսեց ցանել իւր բռնով։

Յանկարծ մի մուկը վազեց, թռաւ, նրա առջև ծըվծըվաց. «Մեզ համար էլ սերմ ցանիր, որ չկորենք ողջ սերմած»։ — «Ահա, այս ձեր ցեղին լինի, պողաբերուի ձեզ համար. միայն ցանքիս ձեռք չտաք, մեղք եմ, մուկի՛կ, ու անճար»։ Երկրորդ բուռը դեռ չէր ցանել, մի մեծ մորեխ երևաց. — «Մեզ էլ մաս տուր քո սերմից, որ չլափենք կանաչած»։ — «Այս էլ ահա ձեզ եմ տալիս, թող շատանայ ձեզ համար, կանաչ արտիս վնաս չտաք, խեղճ եմ, աղքատ ու անճար»։ Երրորդ բուռը դեռ չէր ցանել, մէկ էլ տեսնես՝ մի մրջիւն. — «Մեզ էլ մաս տո՛ւր, թէ չես ուզում սերմդ կրենք մի անկիւն»։ — «Ձեզ շատ լաւ

եմ ես ճանաչում, այ մրջիւններ, անկուշտ էք. ահա այս էլ թող ձեզ լինի, ողջ սերմածս չկրէք»: Յետոյ յանկարծ կաչաղակը թռաւ, եկաւ նրա մօտ.—«Պարո՛ն, մեզ էլ մարդատեղ դիր, մենք գողեր ենք, չենք երկչոտ»:— «Ահա՛ այս էլ թռչնոց դասին, դուք չունենաք քէն ու ոխ. իմ ցանածը չժողովէք, մեղք եմ, խեղճ եմ, պարտքակոխ»:

Վերջին անգամ խեղճը յիշեց աղքատներին լալ աչքով և տէրտէրի, օտարների մասը սերմեց սուրբ սրտով: Ապա կանգնեց ակօսի մէջ, աչքը դցեց երկինքին.—«Ինչ էլ մնաց, այն ինձ տուր, Տէր, հնձեմ, կալսեմ, տամ պարտքին»...

31. ՍԱՐ ԳՆԱԼԸ

Երբ գարունը բացւում է, գիւղացիք սարն են տանում տաւարը: Աղբիւրների գլխին, ծաղիկների մէջ, վրաններ են տնկում և տաւարը ներս անում այս անմահական դրախտը: Առաւօտը, երբ անկողնուցդ վեր ես կենում, հազար սարի ծայրի ամպն ու ծուխը միմեանց խառնուած՝ երկինք են բարձրանում ու ցօղն անձրևի հետ նստում է մարդկանց շորերի և երեսների վրայ: Կանայք կթի տաւարի հետ են—կաթն են ժողովում, իւղ ու պանիր շինում. տղամարդիկ տաւարն արօտ են քշում, բուրդն ու գործուածքը, իւղն ու պանիրը տանում են փողոց, ծախում, իրանց պակասը լրացնում:

Էլ ինչ ասել կուզէ, որ հարս ու աղջիկ այստեղ կուչ ու ձիգ անելով չեն ման գալիս կամ երեսները ծածկում, ինչպէս տանը: Այստեղ բոլորը մէկ ընտանիքի պէս են և ում վրանը մտնես, ամենքը առողջ, ուրախ ու զուարթ են. այն օդի ու ջրի մէջ, այն ծաղկի ու կանաչի հոտն ու համն առնողի հոգին ու գոյնը ինչ կըլինի հապա: Երբ սարումը հիւր է պատահում, էլ շաբաթով ու ամսով չեն թողնում, որ հեռանայ. աղբիւրների քըչքըչոցը, ջրերի խըշխըշոցը ծառերի սըվվըլոցը, թռչունների

ծըլվըլոցը, հովուի սրինգը, գառան, ոչխարի և տաւարի բառաչը,—այս բոլորը կարծես ասում են քեզ. «Դրախտ ես ուզում՝ այստեղ կա՛ց, այսպէս կա՛ց,—սիրտդ անմեղ, միտքդ խառակ»:

32. ՄԱՅԻՍՈՒԱՅ ՓՈԹՈՐԻԿԸ

Կէսօրն անցաւ:

Սարի գլխին երկար ժամանակ անշարժացած ամպը, լայնանալով, հետզհետէ սկսեց բռնել երկնքի արևմտեան մասը. Նրա հսկայական ստուերն ընկել էր ամեհի սարերի և դաշտերի վրայ: Յանկարծ հեռուից մի թոյլ դղրդիւնի ձայն լսուեց: Շուտով տեսանելի եղաւ նաև կայծակի թոյլ լոյսը:

Սկսւում էր մայիսուայ փոթորիկը:

Փչեց մի հանդարտ, բայց ցուրտ քամի: Դաշտային ծիծեռնակները բոլորովին գետնի վրայով էին թռչում: Դիմացի սարը ծածկուեց մի բարակ մառախուղով, որ՝ արագ-արագ ցած իջնելով՝ տարածուեց ամեն կողմ: Երկինքը բոլորովին սևացաւ. որոտն աւելի և աւելի մօտենում էր. կայծակի կոմաններն այժմ աւելի երկար էին և պայծառ: Բայց այդ իսկ րոպէին երկնքի արևելեան մասը բոլորովին պարզ էր և գեղեցիկ ժպտում էր:

Յանկարծ անձրևի խոշոր կաթիլներն սկսեցին մինը միւսի յետևից սաստիկ արագութեամբ թմբկահարել ծառերի տերևներին: Ապա մի րոպէ բոլորովին դադարեց անձրևը, մինչև անգամ ամպերի մէջ երևեցաւ մի փայլուն շերտ, կարծես շուտով այդտեղից պիտի նայէր արեգակը:

Բարակ մառախուղն արդէն հասել էր բլրի ստորոտներին: Միևնոյն ժամանակ հեռուից աւելի և աւելի պարզ էր լսւում անձրևի աղմուկը: Մի րոպէ չանցած՝ սկսեցին փայլել ահռելի կայծակներ: Օդն աւելի և աւելի թանձրանում էր, դժուարանում էր շնչառութիւնը: Որոտոցները, մինը միւսից սարսափելի, սկսեցին ան-

պէս յաճախ կրկնուիլ, որ այլեւս անկարելի էր որոշել, թէ երբ էր մէկը վերջանում և երբ միւսն սկսւում։ Մառախուղի բարակ քօղը պատեց ծմակն ու արօտատեղին, ամենայորդ անձրևն սկսեց շըրշըռալ։ Մի րոպէում գոյացան փոքրիկ գետակներ, որոնք աղմուկով վազում էին դէպի ձորից անցնող գետակը։

33. ՓՈԹՈՐԿԻՑ ՅԵՏՈՅ

Պայծառ արևը ծագեց մեծ, սևաթոյր ամպի յետևից։ Երկիրը զարդարուեց բիւրաւոր գոյնզգոյն գոհարներով։ Այդ գոհարները կազմուել էին այն ջրերի կաթիլներից, որոնք կախուել էին ամեն մի տերևից, ամեն մի խոտից։ Մրսացնող հողմիկը կարծես թէ չէր եղել ամենևին. նրա տեղ օդի մէջ տիրեց մի սքանչելի զովութիւն։ Ամեն ինչ կեանք առաւ, ծմակի միջից լսելի եղան մենաւոր թռչնակի դայլայլիկները, որոնցով կարծես փառաբանում էր արեգակի կրկին երևալը։

Ո՜րքան սիրուն, գեղեցիկ էր աշխարհը։ Երկինքը դարձեալ կապոյտ, արեգակը նոյնպէս գեղաժպիտ։ Մի կտոր ամպ մնացել էր արևելքում և այդ կտորի վրայ կամարաձև ոլորուել էր գեղեցիկ ծիածանը…

34. ԱՆՏԱՌԻ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

Որքա՜ն հրաշալի է խիտ անտառի տեսքը կէսօրին, որքա՜ն զով է նրա մաքուր օդը և հաճելի տերևների սօսափիւնը, երբ մեղմ զեփիւռը հանդարտ շոյում է ծառերի գագաթները… Խորհրդաւոր մութը պատել է ներսը։

Ծառերի ճղներին, կանաչ տերևների հովանու տակ, ապրում են տեսակ-տեսակ նախշուն, գեղեցիկ թռչնակներ և այս փոքրիկ թևաւոր երգիչները թնդացնում են օդը իրանց ձայներով և խանգարում անտառի լռութիւնը։ Ծառերի վրայ և փչակներում նրանք իրանց համար բներ են հիւսում, ձուաններ ածում և ձագուկներ հանում. նրանց հանգիստ, ուրախ կեանքը խանգա-

րում են երբեմն գիշատիչ գազաններն ու թռչունները, որոնք՝ գաղտագողի յարձակուելով նրանց վրայ, տանում, լափում են խեղճերին…

Մեծ, խիտ անտառներում խոտն ու ծաղիկները առատ չեն լինում. ծառերի մշտական ստուերը թոյլ չի տալիս աճելու, զօրանալու այդ բոյսերին, որոնց անհրաժեշտ են լոյսը և արեգակի ջերմութիւնը։ Ամենից շատ աչքի են դիպչում վայրի շուշանի կանաչ տերևները և անտառային շահպրակի բարձր ցօղունները. սունկերի խոնաւ հոտը բռնել է օդը։

Այցելեցէք այդ դրախտանման անտառը. նրա տեսքից հրճւում է այցելուի սիրտը, ուրախութեամբ և երջանկութեամբ լցւում է նրա հոգին։ Ո՞ւմ ասես, որ չի գրաւիլ այդ գեղեցկութիւնը։

Մանուկը պատրաստ է այստեղ ամբողջ օրը խաղալ, վազվզել թիթեռների, բզէզների և այլ հազար ու մի տեսակ միջատների յետևից։ Այստեղ ծերունին կըմոռանայ իւր ծերութիւնը, հիւանդը կեանք կըստանայ, կամրապնդուի և շուտափոյթ կըբժշկուի իւր մաշող ցաւերից… Այստեղ աշխատանքից յոգնած, վաստակած մարդը իւր ոյժերը նորոգող հանգստութիւն կըգտնի։

35. ԱՆՏԱՌԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ

Եղանակը գարնանային էր և կէսօրից առաջ աշխարհի բոլոր երգեցիկ թռչունները, կարծես խօսք մէկ արած, հաւաքուել էին ծառերի վրայ, որ մի ընդհանուր նուագահանդէս սարքեն և իրար հետ մրցեն։ Մէկը իւր սրինգն էր փչում, միւսը իւր փողը, բայց յաղթութիւնը խօսողն էր տանում։ Սոխակն էր այդ խօսողը, — սիրող սրտերի միակ մխիթարիչը։ Նա որ սկսում էր նուագել իւր քնարը, իսկոյն լռում էին միւսները և ականջները սրած՝ նրան էին լսում և նրա դայլայլիկի բիւրաւոր ելևէջներից դաս առնում։ Մէկը սովորում էր նրա ծըլվըլոցը, միւսը նրա կըլկըլոցը, մէկը շըվշըվոցը, միւսը

սուլելը· և մէկ էլ յանկարծ բոլորը միասին միախառն ձայնով սերտում են իրանց սովորած եղանակները։

36. Ա Մ Պ

Ա.

Յուլիսի տօթային օրերից մէկն էր։ Արեգակն անխնայ կերպով այրում էր։ Հրաբորբոք օրն անտանելի էր· ամեն առարկայի վրայ տիրում էր թմրութիւն և տաղտկութիւն։ Թռչունները լռել էին· ծառերը ցած էին թողել իրանց ոստերը· թառամել էին սիրուն խոտերը և կպել էին գետնին։ Այլևս լսելի չէր լինում դաշտային ծաղիկների ուրախ շշնջիւնը· նրանք խոնարհեցրել էին իրանց գլխիկները և կամաց կամաց մեռնում էին ծարաւից։ Կովերը, ձիանները, այծերը հազիւ-հազ շարժւում էին։ Չորս կողմում ամեն ինչ լռութեան մէջ էր· ո՛չ մի ձայն չէր լսւում…

Մի կողմում՝ օդի ջերմութեամբ լցուած տարածութեան վրայ երևում են խրճիթներ· այնտեղ մարդիկ տխրութեամբ նայում են դէպի ժլատ երկինքը, որ նրանց անձրև չի տալիս։ Այդ սգաւոր գիւղերի մէջ այլևս լսելի չեն լինում ո՛չ ծիծաղ, ո՛չ հանաքներ և ո՛չ ուրախ երգեր։ Մինչև անգամ երեխաները, թուլացած օրուայ տապից, մոռացել էին իրանց խաղը և սիրելի փողոցները, սուս էին կացել և թաքնուել էին մարագներում։

Բ.

Երաշտութիւնը սարսափելի դժբաղդութիւն է շինականի համար, որն ապրում է միայն դաշտային դառն աշխատանքով։ Երաշտութի՛ւն,—դա մի դանդաղ մահ է հազարաւորների համար, մահ աղետալի և սովատանջ։ Նա աղքատացնում է մինչև անգամ նրանց, որոնց մօտ փոքրիշատէ պահուել էր ուտեստի հին պաշարից… Շինականները հասկանում են այդ և տրտմութեամբ նայում են դէպի երկինք։

Ամբողջ երկու ամիս նրանք ողորմութեան են սպասում երկնքից՝ բայց դեռ ոչ մի կաթիլ անձրև չկայ։ Այրուեց խոտը՝ այրուեցան անտառները, նիհարեցին, լղարեցան տաւարները։ Մարդիկ յուսահատուած թափառում են՝ ինչպէս ուրուականներ…

Արդէն մի քանի անգամ բարի քահանան՝ սուրբ մասունքներ, խաչ ու պատկեր իւր հետ տանելով, անդաստան կատարեց անտառների և դաշտերի շուրջը, Աստծուց անձրև խնդրելով։ Շինականների ջերմեռանդ բազմութիւնը հաստատ հաւատով և արտասուախառն աղօթքներով շրջապատել էր նրան։ Զօրաւո՛ր է հաւատը այդ խեղճ, համբերող մարդկանց մէջ։

Գ.

Ահա բաց-կապտագոյն երկնքի վրայ երևաց ամպի մի փոքրիկ, թափանցիկ պատառ։ Նա նմանում էր մի սպիտակ թաշկինակի, որ հազիւ է նշմարւում։ Նա կամաց-կամաց լողում է, կարծես վախենալիս լինի… Տառապեալ շինականները տեսան նրան և նրանց վշտալի սրտերում ծագեց յոյսի մի պայծառ նշոյլ… Մօտ էր փրկութիւնը սովատանջ մահից… Բայց փոքրիկ էր ամպիկը, մի գուցէ մի րոպէից յետոյ նա անհետանայ երկնքի անսահման կապուտակութեան մէջ… Ո՛չ, նա չի դաւաճանիլ, նա կըցօղէ երկիրը բարեբեր անձրևով։

Սպիտակ ամպիկը մեղմ սիրով նայում է անբաղդ գիւղերի, տխուր խրճիթների վրայ և հետզհետէ աճում, հաւաքում է իւր ոյժերը, որ փրկէ սովատանջներին։

—Իզուր ես աշխատում,—փաղաքշելով ասում է նրան արեկագի կիզող ճառագայթը։— Թող նրանք տանջուեն· դու ինչո՞ւ ես հոգ տանում նրանց կեանքի համար։ Դու կանգնած ես բարձրում, փայլում ես ոսկու մէջ, իսկ նրանք այնտեղ, ներքևում, թաւալւում են փոշու մէջ։ Քեզ ի՞նչ պէտք են նրանք։ Դու կըոչնչանաս, կըմեռնես՝ նրանց ազատելով։ Միթէ աւելի լաւ չէ՞ քեզ

համար լողալ երկնքի կապուտակութեան մէջ, խաղալ մեզ հետ, սլանալ հողմի թևերի վրայ և զուարճանալ կեանքով։

—Թո՛ղ այդ մտադրութիւնդ,—թոթովեց թեթև հողմիկը,—թող նրանք մեռնեն սովից, դու ինչո՞ւ ես հոգում նրանց մասին. եկ, ուրախ լողանք արեգակի հրապուրիչ ճառագայթների մէջ։

Դ.

Սպիտակ ամպիկը դէմքը խոժոռեց և դժգոհութեամբ երեսը շուռ տուեց թէ՛ ուրախ ճառագայթից և թէ՛ զբօսասէր հողմիկից։ Նա սկսեց աճել և մթին գոյն ստանալ։ Վերջապէս բոլորովին ծածկեց արեգակի շողշողուն ճառագայթները և ականջ չդրեց նրանց ձանձրալի խրատին, թէ՝ «կըմեռնես, կըոչնչանաս... ինչո՞ւ ես դու հոգ տանում ուրիշների համար. մտածի՛ր միայն քո մասին, ապրի՛ր միայն քեզ համար»։

Շուտով նա այնքան աճեց, որ դարձաւ մի ահագին սև մէգ, որը սիրալիր կերպով ցած էր իջնում թշուառացած դաշտերի և տխուր ծառերի վրայ։ Լսելի եղաւ մի խուլ դղրդիւն, որը՝ հետզհետէ սաստկանալով, սկսեց որոտման մի հարուածը միւսի յետևից աւելի բարձրաձայն տարածել նիհար անտառների, հեռաւոր լեռների մէջ,—և օձի նման գալարուելով՝ նշմարուեց կայծակը... մի անգամ ևս... մի անգամ ևս... Տեղաց առատ, զովացուցիչ անձրև։ Երկար թափւում էր նա, ոռոգելով ամեն մի արմատը տոչորուած խոտերի, տխուր խնձորենու, համբերատար ընկուզենու, սգաւոր ուռենու, և նրանք ագահութեամբ ծծում էին նրա զովացուցիչ կաթիլները։ Ծառերն սկսեցին ազատ շունչ առնել, խոտերը կանաչ գոյն ստացան, ծաղիկները վեր բարձրացրին իրանց գլխիկները, թռչուններն սկսեցին ծլվլալ, երեխաները դուրս թափուեցան դէպի փողոցները և սկսեցին լճակներ կազմել ջրերից։ Շատ հեռուից լսելի էր լինում նրանց ուրախաձայն ծիծաղը։ Կեանք ստացան գիւղերն ու դաշտերը...

Ե.

Ամպը՝ կատարելով իւր բարի գործը, ճշմարիտ է, մեռաւ, ցած թափուելով փրկարար անձրևի ձևով, բայց մեռաւ հաճելի մահով։ Նրա կեանքը սպառւում էր ժպտալով, երբ նայում էր զուարթացած ծառերին, պայծառ խոտաբոյսերին, ուրախ ծաղիկներին։ Եւ նա, կորչելով երկնքի ընդարձակ տարածութեան մէջ, զգում էր, որ մեռնում է ո՛չ առանց օգուտ բերելու. կանաչած խոտը, յարութիւն առած բնութիւնը, շինականների ուրախ դէմքերը—նրա գործն էր։ Այնուհետև ամպը բարակ շերտով սկսեց առաջ լողալ. թռչունների ուրախ ձայները, ծաղիկների և դաշտային խոտաբոյսերի սօսափման անուշ մեղեդին առաջնորդում էին նրան, մինչև նա աննկատելի կերպով անհետացաւ երկնքի անսահման կապուտակութեան մէջ։ Նա կորաւ այնտեղ, վերևում, իսկ կաթիլների ձևով սկսեց ապրել այստեղ, ներքևում, ամեն մի թփի, ամեն մի բոյսի, ամեն մի մեծ ու փոքր կենդանու մէջ։

37. ԿԱՐԿՈՒՏ

Ա.

Անցել էր գարուն, ամառը եկել, բիւր անթիւ բարիք գիւղացուն բերել. կանաչ արտերի ցորենն ու գարին, կորեկն ու հաճար ուռել ու լցուել, ոսկեգոյն ներկուել և այգիների խնձորն ու տանձը, դամբուլն ու ծիրան հասել, կարմրել, ծառերը բռնել. իսկ սեխաստանի սեխն ու ձմերուկ, դդումն ու գազար փորերն ուռցրել, մեղրի համ առել...

Գետը պարզուել էր, խոտը երկարել, հօտեր, նա-

խիրներ դաշտերը փռուել, ծառերի գլխին և կամ արտերում թռչունք բոյն դրել, ձագուկներ հանել։

Սողում էր օձը խոտերի միջից, մեղուն թռչկոտում ծաղկից դէպ ծաղիկ. կրիան էլ՝ վիզը հանած պատեանից՝ քաշւում, քաշկրտւում թփերի տակից։

Պայծառ էր օրը, պայծառ էր երկինք, ուրախ են թռչունք, անասունք, մարդիկ։

Բ.

Բայց այն ի՞նչ ամպ է, որ սարի գլխից կամաց գալիս է և իրան յետքից՝ կարծես շղթայած՝ քաշում է, բերում մեծ ու սև ամպեր՝ ամեն տեղ փռում...

Մի րոպէ և — խորին մթութիւն ամեն ինչ պատեց. որոտաց երկինք, երկիր դղրդաց. փայլակն ու կայծակ իրար հետ խառնուած՝ մարդկանց սրտերն ահ ու դող գցեց։ Մռնչաց քամին, շարժուեցին ծառեր. կաթեց, կաթկաթեց, յորդ անձրև թափեց. անձրևի յետքից սառցէ գնդակներ, չըրը՛խկ ու շըրը՛խկ, երկիր գլորուեց։ Թափւում է, թափւում, սար ու ձոր ծածկում, ո՛չ դաշտ է հարցնում, ո՛չ այգի ասում։ «Ա՜խ, կարկո՛ւտ, կարկո՛ւտ, կանչում են մարդիկ, — այս ի՞նչ պատիժ է, խնայէ՛, երկինք»...

Գ.

Ծերը ծնկաչոք, արտասուքն աչքին, Աստուած է կանչում խնայել երկրին. պառաւը, հանած երկթէ կասկարան, բակն է շպրտում և նզովք կարդում. հարս ու աղջիկներ՝ պատի տակ շարուած՝ սուր դանակներով կարկուտ են կտրում, երկնքին նայում. իսկ նրանց մօտ մշակ երկրագործն յուսահատ կանգնած, ձեռը իւր ծոցում, ա՜խ-վա՜խ է քաշում, գլուխը շարժում...

Բայց հանդերի մէջ այս ի՞նչ շփոթ է և իրարանցում... Հօտը ցրուել է, նախիրը փախել, ձիերը խրտնել, դէսուդէն ընկել. Թռչուններ թռել, բնի մէջ պահուել, հովիւ,

հորթարած, փայտահատ, կովարած, — ամենքն էլ իրանց գործերը թողած՝ թփերի տակին մնացել են սառած...

Դ.

Դադարեց կարկուտը, որոտը լռեց. ամպերի ճեղքից արևը նայեց, երկիրը ժպտած, նորից փայլ առաւ, բայց տխուր փայլ էր, որ նա ստացաւ։

Այգեպանը վազեց, իւր այգին մտաւ, դէսուդէն նայեց, մնաց քարացած, — ծառեր տերևաթափ, ճիւղեր կոտրուած, բոլոր պտուղներ կարկտահար եղած։ «Վա՜յ իմ աշխատանք, ափսո՛ս իմ այգի», — ասաց ու գնաց՝ աչքերը լցուած...

Արտատէրը գնաց, իւր արտը հասաւ. թուլացան ոտները, սևացան աչքեր, երբ տեսաւ հասկը ջարդուած, փշրուած, հողին հաւասարած, անգութ հեղեղից աւազով ծածկուած։ «Կորա՜ւ իմ յոյսը, փչացա՜ւ իմ արտ», — ասաց ու գնաց՝ սիրտը մորմոքած...

Դրսում մնացած թռչունքն էլ թռան, գտան իրանց բուն, բայց, ա՜խ, ի՞նչ տեսան. բունը աւերուած, ձագուկներն ընկած, չորսից միայն մէկն ողջ էր մնացած. իսկ այն միւսները, թափուած ցեխի մէջ, անշունչ ընկել են, աչքերը փակել, որի գլուխը, որի թևիկը կարկտից ջարդուել...

38. ԱՄԱՌՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Տիրում է լռութիւն։ Անտառի մէջ մի տերև անգամ չի շարժւում։ Կէսօրուայ տօթը բոլոր արարածներին հալածել է դէպի ծմակների խորքը, քարանձաւների մթութիւնը։ Թռչուններն անգամ չեն երգում։ Ամեն ինչ նիրհում է, ամեն ինչ հանգստանում է։

Ինչ-որ մի բան խշխշում է, կարծես ուղևորի ականջներին դիպչում է թփերի մեղմ սօսափիւնը։ Նայում ես շուրջդ — և ահա պտուղներով բեռնաւորուած շլորենու ճիւղերից քարշ է ընկած մի էակ։ Ծառերի

խտութիւնը թոյլ չի տալիս պարզ նշմարել նրան։ Երեւում է մի կարմիր շապիկ, որ իջել է մինչև մերկ սրունքները։ Հետաքրքրութիւնդ վառւում է։ Նայում ես, նայում,— այժմ նկատւում են կնոջ ծամերի երկար հիւսեր, որ ծածանւում են ճիւղերի հետ…

Դա մի շինական հայ աղջիկ է, որ հեռաւոր գիւղերից եկել է անտառային պտուղներ քաղելու։ Նա քաղում է կարմիր, հասունացած պտուղներ և զգուշութեամբ լցնում զամբիւղի մէջ, որը քարշ է ընկած նրա թևից։ Նա մենակ է։ Փոքր ինչ հեռու, գլուխն առջևի թաթերի վրայ դրած՝ պառկել է նրա մտերիմ ընկերը, մի ահագին շուն։ Փորձիր մօտենալ այդ աղջկան,— և այդ գազանը կըպատառոտէ քեզ…

Աղջիկը յետ նայեց։ Անցորդը կասկածաւոր երևաց նրան։ Զարմանալի արագութեամբ ցած ցատկեց նա շլորենուց և մի ակնթարթում անյայտացաւ անտառի մթութեան մէջ։

Միքանի քայլ ես,— և անցորդը նկատում է այդ անտառային կոյսերի երկրորդը, երրորդը… Դրանք չեն փախչում. դրանք ճանաչեցին, որ դու էլ իրանց նման հայ ես։ Նայում են քեզ և խորամանկութեամբ ժպտում։ Ինչո՞ւ, ի՞նչն է շարժում այդ միամիտ շինական աղջիկների ծիծաղը։

Նրանք նկատեցին քո գողգոջիւն քայլերը. նրանք տեսան, թէ ինչպէս դու երկչոտ կերպով մագլցում ես ժայռերի վրայ և կրիայի նման առաջ ես սողում։ Այդ արդէն բաւական էր նրանց ծիծաղը առաջացնելու համար։ Կարծես մարդ լսում է նրանց ուրախ հանաքները։

«Ա՜յ փափկամորթ, սովորե՜լ ես կառքերի վրայ թեք ընկնել կամ թաւշապատ դիւանների վրայ ծուլանալ. դէհ, փորձիր մեր սարերի վրայ ման գալ, այն ժամանակ կասենք, թէ դու էլ տղամարդ ես…

39. ՀՈՒՆՁ

Հնձի ամենաթունդ ժամանակն էր։

Ընդարձակ և ոսկեփայլ դաշտի երեսին հացահատիկների բարդեր են երևում։ Տեղ-տեղ, ցորենի խիտ և մարդաչափ բարձրացած արտերում, հնձած ակօսների խորքերից, նկատւում են հնձողների կռացած մէջքերը. մի կողմից հնձում են նրանք արտը, իսկ միւս կողմից հաւաքում և բարդեր, դէզեր կազմում… Հասկերի խըշխշոցը աշխարհք է բռնել։ Աչքդ հեռուն դարձրու. ահա կիսամերկ գեղջուկները, մի շապիկ միայն հագերին, կանգնել են, սայլերի վրայ օրան են բարձում. սայլերի փոշին ամպանման բարձրացել է չորացած ու խանձուած դաշտի երեսին։

Ամբոխի բարձրացրած աղաղակը, եզների և ձիերի ոտնաձայնը, սայլերի ճռճռոցը, լորերի ուրախ ճըրճըրոցը, օդի մէջ խառնուած անթիւ ու անհամար միջատների դըժվըժոցը,— այս ամենը նայողի հոգին են փառաւորում և սիրտը լցնում բերկրութեամբ։

40. ԱՅԳԵՔԱՂ

Առաւօտը վաղ-վաղ հասանք այգի։ Ոչխարները մորթեցին, կրակ արին, պղնձները վրան դրին, շամփուրները շարեցին, որ նախաճաշի համար խորոված անեն։ Յետոյ մի-մի թաս օղի խմեցին, մի-մի պատառ խորոված, մի-մի պատառ էլ կաթնահունց կերան և սկսեցին իրանց գործը։

Մեծերը, մի-մի քաղալակ վզի տակ դրած, սուր դանակները ձեռքերին՝ կտրում էին խաղողի հասած ճութերը և ձգում մէջը. փոքրերը այդ քաղալակները տանում էին, մեծ կթոցները ածում, իսկ երիտասարդները կթոցները շալակում էին և տանում, ածում կիսատակառի վրայի չանը։

Ամբողջ այգին իր կեանքից գրկուելիս մի նոր

կեանք էր ստացել։ Ձայն էր, որ լսւում էր ամեն մի թփի տակից, ամեն մի ծառի վրայից։ Մէկը կանչում էր. «Կթոցը լցուել է, եկէք, տարէք»։ — Միւսը կանչում էր. «Քաղալակները լցուել են, շուտ արէք, կթոց բերէք»։

Մանր երեխայք, փոքրիկ թռչունների պէս անդադար դէսուդէն էին ընկնում, ամեն ճուղից մի-մի հատիկ պոկում, համը տեսնում, և որովհետև էլ ոչ ախորժակ ունէին և ոչ փորներումը տեղ, ուստի միւս մրգեղէնների ծառերի վրայ էին մագլցում, կերածը մարսում, նրանց համն էլ տեսնում։

Ճաշի ժամանակը հասաւ։ Ամենքն էլ հաւաքուեցան մեծ ընկուզենու տակ. հացը, խաշլաման փռեցին կանաչ խոտի վրայ և բոլորուեցան նրա շուրջը։ Բայց ո՞վ ախորժակ ունէր հաց ուտելու։ Ծիծաղ, խնդութիւն, զուարճութիւն, կատակներ անել — այս էր նրանց ճաշը։ Ճաշից յետոյ էլ մի քիչ քաղեցին և երեկոյին բոլոր քաղողները մի-մի քաղալակ խաղողով լցրին, իրանց հետ տարան։ Այսպէս շարունակուեց երեք-չորս օր և իւրաքանչիւր օր մի նոր ուրախութիւն, մի նոր զուարճութիւն էին սարքում։

41. ՁՄԵՌԸ ՀԱՅ ԳԻՒՂԵՐՈՒՄ

Բարեկենդան էր։ Ձիւնը եկել, դիզուել, սար ու ձոր բռնել էր։ Պարզկայ գիշերն այնպէս էր գետինը սառեցրել, որ ամեն մի ոտը կոխելիս՝ տրաք-տրաքում, ճռճռում, ճքճքում էր ու մարդի մարմինը սրսռացնում։

Ամեն մի ծառի ճղքից, ամեն մի տան կտրից հազար տեսակ սառցի լուլայ, հազար տեսակ ձնի քուլայ կախ էր եկել ու բիզ-բիզ իրար վրայ սառել։

Հէնց գիտենաս՝ սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել, մահուան դուռն ընկել, շունչն էր մնացել, որ տայ ու աշխարհքին մնաս բարով ասի։

Թռչուն, գազան, անասուն, սողուն՝ ողը փետացել, այստեղ այնտեղ վայր է ընկել, որն էլ վաղուց, ամսով

առաջ, բունը մտել, ձայնը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն էր սպասում։

Գետերի, առուների երեսները սառոյցը մի գազ եկել, հաստացել, իրար վրայ դիզուել, այնպէս էր ջրի, աղբիւրի բերնին հուփ տուել, որ մօտներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձայնն էր լսում, որ սառցի տակին տխուր, տրտում քչքչում էր ու էլ յետ այստեղ-այնտեղ կամաց-կամաց ձայնը կտրում, պապանձւում, սառչում։

Այս առաւօտ արեգակը որ իւր գլուխը բարձրացրեց ու աչքն աշխարհի վրայ գցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի երեսին այնպէս էր պէծին-պէծին տալիս, պսպղում, փայլում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանանչ ու կարմրին տալիս, որ հէնց իմանաս, թէ ալմաստ, զմրուխտ, եաղութ ու հազար տեսակ անգին քարեր լինէին դաշտերի, սարերի գլխին, երեսին, լանջին փռուած։

Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին այնպէս էր մէյդան բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձնի թեփը իրար գլխով տալիս, որ ճամպորդի քիթ ու պռունկը կպցնում, ճաքացնում էր, երեսը պատռում, գլխին, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին կամ ձորերն էր գցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փէտացրած՝ ճամպից խռկում, սար ու ձոր գցում, կամ քարէքար տալիս։

Այսպէս մի խիստ ձմռան օրուայ լոյսն ու մութը որ բաժանուեց, աղօթարանը բացուեց, մեր գիւղացիք քնից վեր կացան, երթիկները բաց արին, երեսները լուացին, մէկ երկու խաչ հանեցին, բարի լոյս ասացին իրար, մանր երեխանցը ծածկեցին, ու ամեն մարդ գնաց իւր բանին։

Մեծ մարդիկ մօրուքները սանդրելով, պառաւ կնա-

նիքը չարսաւը կոնատակներին՝ կամաց-կամաց դուրս եկան, գնացին ժամ։

Երիտասարդներն էլ՝ ամառուայ պէս խոտ հնձելու, կալ կալսելու, այգի փորելու, թաղելու, գարման կրելու հոգս չունենալով՝ աչքերը ճմռեցին, ճլըմկոտալով ու քնաթաթախ մտան գոմ, ո՛ր տաւարին, ձիանոցը խոտ տան, տակները սրբեն, ջուրը տանեն, ձիանը թիմարեն ու հետը խաղ ասելով՝ էլ յետ կապեն ու գնան տուն։

Յարգևոր հարսները՝ աստարոյը, ոսկեկար օշմաղը մինչև քթների կէսը խոր գցած, քօղ ու լաչակի ծայրը մինչև աչքների տակը խոր քաշած, որ էլ երեսները չէր երևում, մի դարայի կամ ղադակ միթանայ հագներին մովի կամ կտաւի շապկով զարդարած, մի մեծ գոտկով մէջքները չորս տակ, հինգ տակ կապած, թուշնիկի պէս կուփ-կուփ վեր թռան, երեսներին մի քիչ ջուր քսեցին, փէշով սրբեցին, ու որն սկսեց տունն աւելել, որը դուռը սրբել, որն էլ չախմախին տուաւ, կրակ արաւ, որ թոնիր վառէ, կերակուր պատրաստի։

Տան նորահաս աղջկերքն էլ գլխները սանդրեցին մազերը հուսած, քամակներին գցած, կարմրագագաթ մորթէ գդակը գլխներին՝ ականջները կապեցին, դաստամալն ուսերին գցեցին, կուժը վրան դրին, բերանը կալան ու գնացին, որ տան համար ջուր բերեն. Ջրի վրայ էլ երկար ժամանակ իրար հետ խօսելով, ծիծաղելով, մէկն իրանց տուն գնաց, միւսն իրանց։

Արեգակի շողքն ընկաւ տունը։ Բորեաղը մի կողմից էր շրվացնում, բզզում հոսանը միւս կողմից վզզում, ձիւնը պատուհաններովն ու երդկովը ներս ածում, աչք ու ականջ լցնում։ Երեխէքն էլ քնաթաթախ վեր կացած, թոնրի չորս կողմովը բոլորուած, շարուած ու դեռ անլուայ, ոտքերը քարին, գետնին էին ծեծում, մօրները խփում, որ հաց առնեն, ուտեն։ Աթարի սև, թանձր ծուխը դուռն ու երդիկը կալել, տունը մխի ծով էր շինել, այնպէս որ մարդի աչքը առաջը չէր կարում ջոկի։

Երեխաների սուգն ու շիւանը գլուխ էր տանում։ Որն օրօրոցումն էր լալիս, որը դեռ վերմակի տակին աչք ու բերան ծխով լիքը՝ գոռում, հարայ տալիս, հաց ուզում, որն էլ տուած հացով հերիք չէր, էլի ժնգժրնգում, ուզում էր, որ էլի տան, որ ձայնը կտրի։

Խեղճ տանտիկինը չէր իմանում, թէ ձեռը որի բերնին դնի, որի աչքը կշտացնի, ու իւր բերանն ու աչքը հօ շատ բաց ու խուփ անելով, համարեա թէ մեռել էր։

Վերջապէս Աստծու ողորմութիւնը հասաւ, ծուխը յետ քաշուեց, քամին դադարեց, ջրի գնացողները եկան, տղէքն էլ հաւաքուեցին։ Արեգակը մի նիզակաչափ ելաւ, բարձրացաւ, բայց դեռ ժամաւորները չեկած, «ողորմի Աստուած» չլսած, ո՞վ կարող էր բերանը նշխարք դնել…

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

42. ՁԻ

Ձին ամենաօգտակար ընտանի կենդանիներից մէկն է։ Ո՞ւմ ասես, որ նա հարկաւոր չէ։ Ձին իւր ամբողջ կեանքում ծառայում է մարդուն և մահից յետոյ էլ բաւական օգուտներ է տալիս նրան—կաշուց ոտնամանների համար լաւ ապրանք են պատրաստում, մազից զանազան բաներ են շինում, սմբակներից եփում են սոսինձ, իսկ կան ազգեր էլ, որոնք ձիու միսը գործ են ածում՝ իբրև կերակուր։

Ձին լաւ յիշողութիւն ունի։ Մանաւանդ նա լաւ միտն է պահում ճանապարհը. բաւական է, որ մի անգամ անցնի որևէ ճանապարհով,—և այլևս չի մոռանալ այն։ Ուստի պատահում է, որ նա շատ դէպքերում դժուարութիւնից հանում է մինչև անգամ և մարդուն։ Նա ընտելանում է իւր տիրոջը և տարիների ընթացքում չտեսնելուց յետոյ՝ մի անգամից ճանաչում է նրան։

Ձին շատ խելացի կենդանի է։ Նա հասկանում է տիրոջ հրամանները և կատարում դրանք։ Ձինուորական ձիերին վարժեցնում են ուղիղ շարքով կանգնել, որոշել նշանները և կատարել, ինչ որ պահանջւում է. նրանք մինչև անգամ վարժւում են թնդանօթների և հրացանների ձայնին, այնպէս որ՝ պատերազմների ժամանակ չեն վախենում։

Ձիերը լինում են զանազան ցեղի, որոնք բաւական տարբերւում են միմեանցից թէ իրանց ուժի, թէ տոկունութեան և թէ գնացքի արագութեան կողմից։ Նրանց մէջ ամենալաւը համարւում են ա ր ա բ ա կ ա ն ձիերը. այս բանը բացատրում են նրանով, որ արաբները շատ լաւ են կրթում իրանց ձիերին, պահպանում և խնամում են նրանց, ինչպէս իրանց հարազատ զաւակներին։

43. ՀԱՒԱՏԱՐԻՄ ՇՈՒՆԸ

Շունը նոյնպէս պատկանում է օգտակար ընտանի կենդանիների թւին. նա պահպանում է տիրոջ ստացուածքը գողերից, նրա երկիւղից վայրենի գազանները չեն մօտենում մեր ընտանի անասուններին. իսկ թէ որքան օգնում է նա որսորդին որսի ժամանակ,—ասելն աւելորդ է։ Ատամների կազմութեամբ շունը մսակեր կենդանիների դասակարգին է պատկանում։ Կան շների բազմաթիւ ցեղեր, սակայն բոլոր ցեղերն էլ յայտնի են, իբրև խելացի, հասկացող կենդանիներ և սերտ կապով կապուած են լինում իրանց տէրերի հետ. իզուր չէ, որ նրանց մարդու բարեկամներ են անուանում։ Իբրև ապացոյց շների սրամտութեան և հաւատարմութեան՝ պատմում են հետևեալը։

Մի վաճառական ձիով ճանապարհորդելու դուրս եկաւ. նրա յետևից վազում էր նրա հաւատարիմ շունը։ Վաճառականը գնում էր մի մեծ գումար ստանալու։ Փողերն ստացաւ, ոսկով լիք քսակը կապեց թամբի յետևը և ճանապարհ ընկաւ դէպի տուն։ Ճանապարհին քսակի կապը կտրուեց, պարկը վայր ընկաւ, իսկ վաճառականն այդ բանը չնկատեց։ Սրատես շունը տեսաւ այդ և փորձեց վերցնել քսակը իւր ատամներով, բայց զգաց, որ դա ուժից բարձր է։ Այն ժամանակ քսակը թողնելով, վազեց-հասաւ տիրոջը, առաջ անցաւ, սկսեց յարձակուել ձիու վրայ և կատաղութեամբ ու յամառութեամբ հաչելով, աշխատում էր նրան կանգնեցնել։ Պատ-

ճառը չիմանալով, վաճառականը բարկանում էր շան վրայ, հայհոյում նրան, խփում էր մտրակով,—բայց ոչ մի բան չէր օգնում։ Հաւատարիմ կենդանին շարունակում էր յարձակուել ձիու վրայ այնպիսի կատաղութեամբ, որ կարծես կամենում էր ցած քաշել տիրոջը։ Տեսնելով որ ոչինչ չի օգնում և որ վաճառականը հետզհետէ հեռանում է, շունն սկսեց կծոտել ձիու ոտները, որ գոնէ դրանով հարկադրէ իւր տիրոջը յետ դառնալ։ Վաճառականը վախեցաւ. նա մտածեց՝ թէ մի՞ գուցէ շունը կատաղել է և գիտենալով, թէ որքան վտանգաւոր են կատաղած շները, նա վճռեց սպանել իւր հաւատարիմ ծառային։

Այնուամենայնիւ դեռ երկար ժամանակ վաճառականն աշխատում էր ազատուել շնից մերթ փայփայանքով, մերթ սպառնալիքներով, մերթ մտրակի հարուածներով. բայց տեսնելով՝ որ այդ չի օգնում, հանեց ատրճանակը և սրտամորմոք արձակեց հաւատարիմ շան վրայ։ Խեղճ կենդանին վայր ընկաւ, բայց մի րոպէից դարձեալ վեր կացաւ և ցաւալի ճչիւնով ու արիւնաթաթախ աշխատում էր հետևել իւր տիրոջը։ Վաճառականը շատ էր սիրում իւր շանը. նրա համար ծանր էր տեսնել կենդանու տանջանքը, ուստի և խփեց ձիուն և առաջ արշաւեց։ Մի քիչ հեռանալով, նա կամեցաւ տեսնել, թէ ինչ եղաւ խեղճ կենդանին, և այստեղ միայն՝ յետ նայելիս՝ նա նկատեց, որ փողի քսակը չկայ։ Նոր հասկացաւ վաճառականը, թէ ինչու էր այդպէս կատաղաբար հաչում և յարձակւում իրան վրայ հաւատարիմ շունը, և նա աւելի ցաւեցաւ շան, քանթէ փողերի վրայ։ Նա իսկոյն յետ դարձրեց ձիու գլուխը, բայց շանն այնտեղ չգտաւ, ուր թողել էր։ Արիւնի հետքը ցոյց էր տալիս, որ շունն յետ էր դարձել։ Ո՜րքան ցաւեց բարի վաճառականը, երբ արիւնի հետքը բռնած գնալով՝ նա գտաւ հաւատարիմ կենդանուն փողերի քսակի մօտ ընկած։ Գիտակցաբար նայում էր շունը իւր տիրոջը և փաղաքշանքով լիզում նրա ձեռքերը։ Միքանի րոպէից յետոյ շունը սատակեց, իսկ վաճառականը տխուր սրտում վերադարձաւ տուն։

44. ՎԱՆԱՅ ԿԱՏՈՒՆ

Շատերն են լսել Վանայ կատուի մասին, բայց քչերըն են տեսել և շատ քչերն ուսումնասիրել նրան։ Այդ կատուն սիրուն է, բրդոտ, գեղեցիկ, կլոր գլխով ու փայլուն, սիրուն աչքերով. նրա բուրդը փռւում է մինչև ոտները և մարդս ախորժանքով է շոյում այդ խիտ, մետաքսանման մազերը։ Իմ հօրաքոյրս մի այդպիսի կատու ունէր և այդ կատուն մի օր երկու ձագ բերաւ։

Մենք նրան գտանք պարկած և ձագերը գրկի մէջ ամփոփած։ Շատ սիրուն էին այդ ձագերը, բայց այդ օրը նրանք չէին շարժւում և մայրը լիզում էր նրանց։ Ես կամեցայ խաղալ նրանց հետ, հեռացրի մօրը և ձեռքըս առայ միայն երկու խեղդած կատուի ձագեր... Որքա՜ն ցաւեցինք... Մայրը մօտեցաւ ձագերին, լիզեց, շարժեց նրանց և երբ տեսաւ, որ չէին շարժւում, մի քայլ հեռու գնաց, մեզ նայեց։ Մենք շոյեցինք նրան։ Նա կըրկին մօտեցաւ, լիզեց ձագերին և ես նկատեցի կատուի աչքերում արտասուքի կաթիլներ... Խեղճ ձագուկներ. սրու կատուն էր խեղդել նրանց։ Մայրը հանդարտութեամբ նայեց մեզ և դուրս գալով՝ անհետացաւ։

Հօրաքրոջս մանուկները մի փոս փորեցին և ձագուկները թաղեցին։

Այդ օրը կատուն չերևաց այլևս. ես շատ փնտրեցի, բայց չգտայ։ Միւս օրն առաւօտեան նկատեցի, որ մի մոխրագոյն, գզգզուած կատու կանգնել է այնտեղ, որտեղ թաղեցին խեղդուած ձագերին։ Չա՜ր, անգութ կատու։ Դա էր ձագուկներին խեղդողը։ Աչքս դարձրի և միքանի քայլ հեռու ծառի տակին կծկուած տեսայ ձագերի մօրը, որ սարսափելի աչքերով սրուին էր նայում։ Սրուն նկատեց այդ, երկու ոտքին գործեց և յետ փախաւ։ Էգը վազեց նրա յետևից և երկուսն էլ անհե-

տացան։ Ես յետ դարձայ, բայց լսելով կատուների մլաւոցը, բարձր նայեցի և տեսայ, որ արուն ու էգը՝ միմեանց դէմ կանգնած, մլաւում էին—խօսում էին։ Նրանք առաջ մեղմօրէն էին մլաւում. երևի էգը հաշիւ էր պահանջում արուից նրա արած անգութեան համար։ Արուն արդարանալ աշխատեց։ «Ո՛չ»,—գոռաց էգը կատաղի մլաւիւնով։—«Դու անգութ ես»,—ասում էր այդ մլաւոցը։ «Էլ չեմ անիլ»,—գոչում էր արուն յանցաւորի ձայնով և պոչը շարժելով... Էգը մեղմացաւ, մլաւիւններն էլ մեղմացան և երկուսն էլ ցած իջնելով՝ բաժանուցին։

Շատ տխուր էր փիսօն իւր ձագուկներից զրկուելու համար և երբէք հաց չէր ուտում։ Ես խնդրեցի մեր դրացուն և նա տուաւ ինձ իւր կատուի ձագերից մէկը, որին ես դրի մեր կատուի առջևը։ Նա նայեց ձագուկին տխուր աչքերով, միքանի րոպէ մտածեց, և յետոյ, գրեթէ ակամայ, բերնով վերցրեց նրան և, տանելով բնակարանը, սկսեց թոյլ-թոյլ լիզել նրան. նա թէև հասկացել էր, որ իւր ձագուկը չէ այդ, բայց որդեգրեց նրան։

Մեր փիսօյի կաթը կտրուել էր և մենք ձագուկին ոչխարի կաթն էինք տալիս։

Հօրաքրոջս մօտ նստած՝ մի կիւրակէ օր խօսում էինք, երբ նրա որդին իմաց տուաւ, որ արուն կրկին ձագուկին խեղդել է։ Մենք դուրս վազեցինք և մտանք կատուի մօտ... Փիսօն այս անգամ լաց չէր լինում. նա կատաղի աչքերով չորս կողմը նայեց և դուրս թռաւ սենեակից։ Այս անգամ անգութ արուն ուղղակի ձագուկի գլուխը բաժանել էր մարմնից։ Մենք դուրս գնացինք և այնտեղ մի սարսափելի տեսարան ներկայացաւ մեր առջև։ Մեր փիսօն բռնել էր արուի կոկորդից և խփում էր նրան պատէպատ՝ խուպոտ մռնչիւն արձակելով... Մի կատաղեալ փոքրիկ առիւծ էր դարձել... Չար արուն ատամներով աշխատում էր վիրաւորել մեր փիսօյին, բայց նա սաստիկ արագութեամբ նրան պատէպատ խըփեց, մինչև որ արուն շունչը փչեց. յետոյ էգը թող տուաւ նրան, մի բաւականութիւն արտայայտող աչքերով մեզ նայեց և սուր ճանկերը կրկին մխեց արուի կոկորդի մէջ. ապա յետ քաշուելով՝ կանգնեց ու սկսեց նայել, թէ ինչպէս արուն կրում էր իւր արժանի պատիժը...

45. ՈՒՂՏ

Ուղտի արտաքինը գեղեցիկ չէ. նրա մարմնի երկարութիւնը լինում է մօտաւորապէս չորս արշին, իսկ բարձրութիւնը—մինչև մի սաժէն։ Ուղտը իւր մէջքի վրայ ունենում է մի կամ երկու սապատ. միասապատ ուղտերը բնակւում են Աֆրիկայում, իսկ երկսապատները—Ասիայում։ Ուղտի գլխաւոր արժանաւորութիւնը կայանում է նրանում, որ նա տոկուն, համբերատար և սակաւակեր կենդանի է։ Բոլոր ընտանի կենդանիներից միայն ուղտն է, որ կարող է մի ամբողջ շաբաթ մնալ առանց կերակրի և առանց ջրի։ Այդ պատճառով ուղտը մի շատ թանկագին և անփոխարինելի կենդանի է ամայի և անջուր անապատներով անցկենալու համար։ Եւ իզուր չէ, որ նրան «անապատի նաւակ» են անուանում. միայն նաւով են վստահանում մարդիկ լողալ անսահման ծովերի վրայ, միայն ուղտով են համարձակւում նրանք կտրել աւազոտ, անջուր անապատները...

Ամբողջ օրերով գնում է, գնում ուղտերի կարաւանը անմարդաբնակ անապատի միջով, յայտնի չէ՝ երբ է վերջանալու արդեօք այդ անտանելի ճանապարհորդութիւնը, իսկ ջրի և ուտելիքի պաշարը սպառուելու մօտ է,—ճանապարհորդների մօտ մնում է միքանի բուռը արմաւենու հատիկներ ուղտերի համար, իսկ ջրի պաշարը մարդկանց անգամ չի բաւականացնիլ, ուր մնաց անասուններին... Խեղճ ճանապարհորդներին սարսափելի մահ է սպառնում քաղցից ու ծարաւից։ Այդ օրհասական միջոցին յանկարծ ուղտերը, չնայելով իրանց չա-

փազանց յոգնածութեանը, արագացնում են քայլերը — նրանք հեռուից ջրի հոտ են առնում։ Միքանի րոպէ ևս, և նրանք ծարաւից ուժասպառ ճանապարհորդներին հասցնում են գեղեցիկ արմաւենիների ստուերի տակ ձրգուած մի կանանչապատ օվասիսի, որտեղ կարկաչելով հոսում է դալար բոյսերով շրջապատուած մի սառն աղբիւր։

Ուղտերի կարաւանն անապատում

46. ԳԱՅԼ

Գայլն արիւնարբու կենդանի է։ Նրան կարելի է գտնել անտառներում, դաշտերում, ձորերում և քարքարոտ լեռներում։ Շատ է սիրում նաև այնպիսի ճահճային տեղեր, որոնց ափերը ծածկուած են եղեգներով։

Իւր որջը սովորաբար գայլը սարքում է կարճլիկ թփերով ծածկուած բլուրների վրայ։ Գարունն ու ամառը գայլերն առանձին-առանձին կամ զոյգ-զոյգ են ապրում, իսկ ձմեռը հասնում է թէ չէ՝ սկսում են հաւաքուել միասին, կազմում են մեծ-մեծ խմբեր և այդպէս միացած ուժերով աշխատում են իրանց կեանքն ապահովել և կերակուր գտնել։

Յայտնի է, որ գայլը մսակեր կենդանի է և միշտ աշխատում է ձեռք գցել վայրենի ու ընտանի կենդանիներ և թռչուններ բռնել։ Բայց պատահում է՝ որ մսեղէն կերակուր օրերով նա չի տեսնում, և այդ ժամանակ գայլը ստիպուած է լինում կերակրուել ծառերի պտուղներով և այլ բուսեղէն կերակուրով. օրինակ, նա շատ ուրախ է լինում, եթէ գտնում է եգիպտացորեն, սեխ, դդում, վարունգ կամ գետնախնձոր։ Գիւղացիք իզուր չեն ասում, որ գայլն ագահ և արիւնարբու կենդանի է։ Երբեմն նա անխնայ կերպով կոտորում է մի ամբողջ հօտ, չնայելով որ կարողանում է տանել միայն մի կամ երկու ոչխար։ Բայց ագահութիւնը և սովածութիւնը կարծես թունաւորում և կատաղեցնում են նրան. կատաղած գայլը մոռանում է ամեն մի բան և գլուխը կորցնելով դէս ու դէն է ընկնում. այդ ժամանակ նրա համար այլևս չկայ երկիւղ։ Նոյն իսկ գիւղը կամ քաղաքը չեն կանգնեցնում նրան. և նա աներկիւղ մտնում է փողոցները, տները... Սոված ժամանակ նա արիւն է փնտրում և ահագին վնասներ է տալիս խեղճ գիւղացիներին։ Այդ ագահութիւնն է պատճառը, որ գիւղացիք ատելով ատում են գայլին։

Ամառ ժամանակ գայլն այնպէս էլ վնասակար չէ գիւղացիների համար, որովհետև գրեթէ ամեն տեղ նա կարողանում է գտնել մի բան ուտելու. չէ՞ որ անտառներում, բացի զանազան մանր-մունր կենդանիներից, շատ է պատահում բուսեղէն կերակուր։ Անտառներում, սար ու ձորերում գայլերը յարձակւում են աղուէսների

և ոգնիների վրայ, բռնում են դաշտային մկներին, արձակ-համարձակ նետւում են ոչխարների և եղջերուների հօտի վրայ։ Չնայած՝ որ նապաստակը շատ արագավազ ոտներ ունի, բայց դժբաղդաբար նա էլ շուտ-շուտ գայլի կերակուր է դառնում։ Բայց պատահում է, որ գայլն այդ կենդանիներից ոչ մէկին չի տեսնում. և այդ դէպքում նա ստիպուած անխնայ կոտորում է խլէզներին, գորտերին և բզէզներին։ Իսկ սատկած անասունների փթած միսը գայլն այնպէս է սիրում, որ հոգին կըտայ, միայն թէ գտնի այն տեղը, որտեղ ընկած է մեռելոտին։ Գիւղացիք լաւ գիտեն գայլի այդ բնաւորութիւնը։ Եթէ գիւղացու անասուններից մէկը սատկում է, նա կաշին քերթում է, մնացածը քաշ տալիս, տանում գիւղից դուրս և ընտրելով մի յարմար տեղ, գցում է գետնի վրայ և հեռուից սպասում է գայլերին. հէնց նոյն գիշերն և եթ գայլը մօտենում է փթած մսին։ Գիւղացին տեսնելով նրան, վայր է գցում հրացանի գնդակով։ Տաւարի վրայ գայլ երբէք չի համարձակւում մեն-մենակ յարձակուել և սպասում է ընկերներին, որ միացած ուժերով գզգզեն տաւարից մէկն ու մէկին։

Ձմեռ ժամանակ անտանելի է դառնում գայլերի կեանքը։ Անտառը դատարկւում է կենդանիներից, որովհետև ամեն մէկն աշխատում է թաք կենալ մօտեցող ցրտից և մտնում է նախօրօք պատրաստած փոսի մէջ։ Ոչ մի պտուղ չի տեսնում մերկացած անտառում և կամաց-կամաց ստիպուած է լինում մօտենալ գիւղերին և քաղաքներին։ Բայց աչքի առաջ ունենալով այն վտանգը, որն սպասում է մարդկանցից, գայլերն ստիպուած են լինում խմբուել և միասին մտածել կերակուր ճարելու մասին։

Հետաքրքիր է գայլերի ճանապարհորդութիւնը. — գայլերից մէկը՝ ինչպէս պարագլուխ, վազում է առաջից և նրան հետևում են միւսները, բայց այնպէս, որ ամեն մէկն աշխատում է դնել իւր ոտները առաջից վազող գայլի ոտների հետքի վրայ։

Այս սովորութիւնը ցոյց է տալիս մեզ գայլերի խորամանկութիւնը. աշխատեցէք համրել, այդ հետքերին նայելով, թէ քանի գայլ է անցել։ Այդ երբէք չի յաջողուիլ ձեզ։ Փորձուած որսորդներն էլ հազիւ-հազ են կարողանում ասել՝ մի գայլ է անցել, թէ գայլերի մի ամբողջ վոհմակ։

Այս խմբուած գայլերը մի մեծ չարիք են մարդկանց գլխին։ Սոված և կատաղած, թափառում են նրանք այս ու այն կողմ և վա՜յ այն մարդուն, որը կըհանդիպի նրանց։ Սոված գազանները նրա ոսկորներն էլ չեն թողնի, այնպէս կըլափեն։

Իւր խորամանկ բնաւորութեամբ գայլը ոչնչով պակաս չէ աղուէսից։

Մեծ զգուշութեամբ նա մօտենում է իւր ընտրած զոհին և մի ակնթարթում յարձակւում է նրա վրայ, բռնում կոկորդից և խեղդում։ Տեսնենք, օրինակ, թէ ինչպէս է գայլը խաբում եղջերուներին։ Գայլը նկատեց թէ չէ, որ այդ գեղեցիկ եղջերուները հանդարտ նստած են անտառի մօտ գտնուող կանաչ խոտի վրայ, իսկոյն վազում, կանչում է ընկերներին և միասին վճռում են բաց չթողնել համեղ որսը։ Գայլերի մի մասը վազում է առաջ, որ ճանապարհը կտրի, իսկ մնացած գայլերն յարձակւում են եղջերուների վրայ, հակառակ կողմից։ Եղջերուները փորձում են փախչել, բայց շուտով տեսնում են, որ երկու կրակի մէջտեղ են ընկել, գլուխները կորցնում են և գայլերը, շրջապատելով նրանց՝ սկսում են կոտորել։

Նոյն խորամանկութիւնը մենք տեսնում ենք, երբ գայլերը յարձակւում են ոչխարների վրայ։ Լաւ գիտենալով, որ շներն են ոչխարների պահապանները, գայլերն աշխատում են նրանց մի կերպ հեռացնել ոչխարներից և ապա տեսէք՝ ինչ են հնարում։ Գայլերի մի մասը փորձում է գրգռել և դուրս կանչել շներին և վազելով նրանց էլ քաշ տալ իրանց յետևից և հեռացնել ոչ-

խարներից։ Այդ ժամանակ գայլերի միւս մասը յարձակւում է ոչխարների վրայ, բռնում մէկին կամ միւսին, և թրևելով տանում, լափում։

Գայլն զգոյշ կենդանի է և այդ պատճառով նրան դժուար է լինում ձեռք գցել։ Նա երբէք դուրս չի գալ իւր բնից, մինչև չհամոզուի, որ իրան ոչ մի վտանգ չի սպառնում։ Նա կասկածանքով է վերաբերւում ամեն մի պարանի, ամեն մի ծակի, առհասարակ ամեն անծանօթ առարկայի։ Նա համոզուած է, որ աշխարհիս երեսին ոչ մի բարեկամ չունի և որ ամենքն աշխատում են մի կերպ վրէժ հանել նրանից, մանաւանդ գիւղացին, որի կեանքը նա գրեթէ թունաւորել է։ Եթէ գայլը հարկադրուած է լինում մտնել գիւղացու բակը, երբէք չի մտնի ուղիղ դռնից, այլ կաշխատի մի ճեղք կամ մի ծակ գտնել ցանկապատի մէջ և նրա միջով կանցնի բակը։ Բայց ընկաւ թէ չէ թակարդ, գայլն այլևս չի կարողանում մի բան հնարել մահից ազատուելու համար և կուչ եկած, ահ ու դողով սպասում է իւր դատավճռին։ Այդ կողմից աղուէսը շատ աւելի սառնասիրտ է և գիտէ ամեն նեղութիւնից դուրս պրծնել։

47. ԱՐՋ

Ա.

Արջերը նոյնպէս մի ընտանիք են կազմում կենդանիների շարքում, և այդ ընտանիքն ունի բազմաթիւ տեսակներ։ Ամենահասարակ արջը, որ յաճախ պատահում է մեր երկրում,—դա մոխրագոյն արջն է, որ միշտ սովորութիւն ունի իւր բունը հաստատելու խիտ անտառներում։ Պատահում են նոյնպէս արջեր, որոնք սիրում են աւելի խոնաւ տեղեր, գետի և ծովի ափ և մանաւանդ ճահճային տեղեր։

Գիւղացիք հեշտութեամբ են գտնում արջի բունը, լաւ գիտենալով, որ նա սովորութիւն ունի գետինը փո-

րել, մտնել նրա մէջ և վերևից ծածկել ծառի չորացած տերևներով։

Արջերի մեծ մասը սիրում է մեն-մենակ ապրել և շատ քիչ են այն տեսակ արջերը, որոնք երամակով են կեանք վարում։

Օրը ցերեկով արջերը խոր քնի մէջ են անցկացնում և արևը մայր մտնելուց յետոյ թողնում են իրանց բունը և գնում որսի։

Արջ

Գիտնականներն ասում են մեզ, որ բաւական է զննել այս կամ այն գազանի ատամները, և մարդս իսկոյն և եթ կըկարողանայ որոշել, թէ այդ գազանը մսակեր, խոտակեր կամ ամենակեր կենդանի է։ Արջի ատամներն այնպէս են կազմուած, որ նա կարող է ուտել ամեն բան, բայց արջը գրեթէ միշտ բաւականանում է բուսեղէն կերակուրով, որ մեծ քանակութեամբ նա կարողանում է գտնել անտառներում։ Ծառերի կոկոնները, պտուղները, արմատները, նոյն իսկ հացաբոյսերի հատիկները համեղ կերակուր են արջի համար։

Ծայրայեղ դէպքերում սոված արջը նոյն իսկ յարձակւում է տաւարի և մարդու վրայ։ Մարդը միշտ վախենում է արջից, որովհետև գազանը կարող է գայրացած լինել և սոված և այդ ժամանակ նա չափազանց վտանգաւոր է։ Թէ ինչ ոյժ ունի այդ գազանը, բաւական է

ասել՝ որ նա կարողանում է մեծ տարածութեան վրայ գնդակի արագութեամբ փախցնել իւր ձագին։

Դուք պէտք է գիտենաք, որ կենդանիների մի մասը սովորութիւն ունի ձմեռը քնի մէջ անցկացնել։ Ամիսներով նրանք քնած են մնում, ոչ մի կերակուր չեն ընդունում և՝ օրերը տաքացան թէ չէ, գազանները զարթնում են և նորից շարունակում իրանց կեանքը։ Արջն այդ տեսակ կենդանիներից է և ձմեռը հասաւ թէ չէ, նա մտնում է նախօրօք պատրաստած որջը և մնում է այնտեղ մինչև գարուն։

Արջը արիւնարբու կենդանի չէ, ինչպէս գայլը և ոչ էլ խորամանկ կամ հնարագէտ, ինչպէս աղուէսը։ Երբէք նա ժամերով չի սպասիլ իւր որսին՝ մի տեղ թաք կացած, և չի աշխատիլ յետևից յարձակուել և նոյն իսկ ճարպիկ կերպով խաբել։

Արջը իւր արտաքինով և շարժուածքներով ազնիւ և վստահելի կենդանի է և ներշնչում է մեզ աւելի շուտ մտերմութիւն։ Նա առհասարակ հրաժարւում է կերակրուել որևէ կենդանու լէշով, մանաւանդ արջի լէշով։ Երբէք սովորութիւն չունի գիւղերից փախցնել մանուկներին, ընդհակառակը՝ արջը աշխատում է չհեռանալ իւր սիրած խիտ անտառներից, բաւականանալով այնտեղ գտնուող կերակուրով։ Միայն վտանգի առաջ այդ գազանը մոռանում է իւր բարի յատկութիւնները և սկսում բարկանալ ու կատաղել։ Ինքն իրան արջը երբէք չի յարձակուիլ մարդու վրայ, մինչև որ մարդը մի որևէ առիթ չտայ յարձակուելու։ Այնուամենայնիւ չպէտք է բոլորովին վստահանալ նրան։

Աւելի շուտ կարելի է ասել, որ արջը վախկոտ կենդանի է և կասկածանքով է վերաբերւում ամեն մի շուրջը կատարուած շփոթութեան և անմիջապէս փախչում է հեռու, եթէ զգում է մի որևէ կասկածելի բան։

Յաճախ է պատահում, որ գիւղացիք գնում են անտառ պտուղներ հաւաքելու և ճանապարհին հանդիպում

են արջին։ Այդ հանդիպումը մեծ մասամբ վերջանում է խաղաղ և բարեկամական կերպով—արջը հանգիստ շարունակում է իւր ճանապարհը։ Բայց տեսնելով, որ գիւղացիք մի չար մտքով են եկել անտառ և ուզում են մի կերպ ձեռք գցել իրան, մանաւանդ որ նրանք որսորդական շներ են առաջ գցել, արջի այդ ոխերիմ թշնամիներին, այդ դէպքում նա արձակ-համարձակ առաջ է քայլում թշնամիների վրայ և յարձակում գործում։ Վա՜յ գիւղացուն, եթէ չկարողացաւ մի կերպ սպանել կամ մահացու վէրք հասցնել զայրացած արջին։ Արջը առջևի թաթերով գետին է փռում որսորդին և յետոյ իւր սուր և ուժեղ ճանկերով սկսում է կտոր-կտոր անել խեղճին։ Սակայն այդպիսի դէպքեր շատ չեն լինում արջի կեանքում, և իւր սուր ճանկերը նա գործ է ածում աւելի յաճախ գետինը փորելու համար, որ այնտեղ մրջիւնների բոյնը գտնի։ Մրջիւններն ու նրանց թրթուրներն արջի սիրած կերակուրն են։ Իսկ մեղր նա այնպէս է սիրում, որ հոգին կտայ՝ միայն թէ գտնի մեղրաճանճերի փեթակներ և այնպէս լաւ է ուսումնասիրել, որ ուղղակի կարող է իմանալ՝ թէ ո՛ր փեթակի մէջ աւելի մեղր կայ։

Սրանից մի քանի ժամանակ առաջ արջը մի տեղ 100-ի չափ փեթակ էր գողացել և բոլոր մեղրը կերել։ Գիւղացիք մտածեցին մի կերպ ազատուել այդ անամօթ հիւրից, և սկսեցին փեթակները սարքել ծառերի վրայ։ Բայց այդ էլ չօգնեց, որովհետև արջը հեշտութեամբ բարձրանում էր ծառերի վրայ և դատարկում փեթակները։ Իսկ եթէ ծառը բարակ էր լինում, արջը կռացնում էր այդ ծառը և ջարդում փեթակը։ Տեսնելով՝ որ այդ էլ չի օգնում, գիւղացիք սկսեցին ուրիշ միջոցներ հնարել, օրինակ՝ նրանք սկսեցին կտրատել ծառի ստորին ճիւղերը, փշոտ ցանկապատ քաշել ծառի շուրջը, բայց և այնպէս արջը, երբ ուզում էր հասնել փեթակին, ճարպիկութեամբ քանդում էր այդ ծակող ցանկապատը։

Մեղրաճանճերն էլ մի որոշ օգնութիւն են հասցնում գիւղացուն, կծելով անշնորհք արջին անխնայ կերպով: Ինչ ծիծաղելի պատկեր է, երբ նայում ես, ինչպէս այդ գազանը ճանճերի անտանելի խայթոցներից փրկուելու համար սկսում է գետնի վրայ դէս ու դէն թաւալուել կամ թաթերով ուժեղ հարուածներ հասցնել իւր երեսին նստած մեղրաճանճերին: Եթէ հարուածներն էլ չեն օգնում, զայրացած արջը սկսում է փախչել առանց յետ նայելու, բայց մի կարճ ժամանակից յետոյ, նորից վերադառնում է փեթակների մօտ, և նորից սկսւում է այդ կռիւը: Վերջ ի վերջոյ արջին յաջողւում է կամ փախցնել փեթակը, կամ բաւականանալ մեղրի գոնէ չնչին մասով:

Արջը սիրում է նաև երբեմն յարձակուել եղջերուների վրայ: Այդ նպատակով մտնում է մի փոսի մէջ և ծածկւում է տերևներով: Այդ դրութեան մէջ նա սպասում է եղջերուներին, որոնք անզգուշութեամբ մօտենում, ընկնում են փոսը և անմիջապէս նրա զոհը դառնում:

Կան մի տեսակ մոխրագոյն արջեր, որոնք աւելի մսակեր են. դրանք չեն բաւականանում նոր սպանուած անասուններով, այլ սովորութիւն ունին գետնից փորելու թաղուած կենդանիների լէշեր:

Բ.

Բացի մոխրագոյն արջերից աշխարհիս երեսին ապրում են և սպիտակ արջեր: Այդ կենդանիների բնակավայրը ցուրտ երկրներն են, ինչպէս են Հիւսիսային Ովկիանոսը և հիւսիսային ծովեզրները:

Արջի սպիտակ գոյնը կարծես դիտմամբ նմանութիւն ունի այդ կողմերի բնութեան հետ, որն ամբողջապէս սպիտակագոյն է. ձիւնն ու սառոյցը պատում է այդ ամբողջ տարածութիւնը: Ընտրելով այդ ցուրտ տեղերը բնակութեան տեղ, սպիտակ արջն, իհարկէ, սնունդի մասին էլ պէտք է մտածէր: Այդտեղ նա երբեք չի գտնիլ մի հատ բոյս, որի պտուղներով նա կարողանար իւր ստամոքսին բաւարարութիւն տալ: Այդտեղ միայն կարելի է գտնել ձկներ, ծովացուլեր և փոկեր:

Ուրեմն որտեղից արջը կարող էր գտնել իւր կերակուրը, եթէ ոչ ծովի միջից, որ լիքն է ձկներով, ծովացուլերով և այլ ծովային կենդանիներով, իսկ դրա համար հարկաւոր է լաւ լող տալ ջրի մէջ, ճարպիկ լինել և չվախենալ սառնամանիքից: Բոլոր այդ յատկութիւնները մենք կարող ենք տեսնել սպիտակ արջի մէջ: Նա շատ գեր է և այդ գիրութիւնը օգնում է նրան մի կողմից հաւասարակշռութիւն պահպանելու, իսկ միւս կողմից՝ պահում է ցրտից: Ջրի մէջ նա կարող է ազատ հեռանալ մեծ տարածութեան վրայ ծովի ափից, իսկ եթէ ճանապարհին գտնում է սառցային դաշտեր և սարեր, նա բարձրանում է սառոյցի վրայ և հանգարտ շարունակում ճանապարհորդութիւնը: Ջրի մէջ լողալով նա հետևում է ձկներին և ծովացուլերին, բռնում, լափում է նրանց:

Պատմում են նոյնպէս, ինչպէս այդ սպիտակ արջերը մի անգամ նաւակ են խլել ձկնորսներից և նստելով նրա մէջ՝ քշել են նրան առաջ, նաւատորմի փորձուած զինուորների պէս:

48. ԱՌԻՒԾ ՈՒ ՎԱԳՐ

Առիւծը իւր զարհուրելի ոյժի և վսեմ տեսքի համար գազանների թագաւոր է կոչւում: Նրա ոյժը ցոյց տալու համար բաւական է ասել, որ նա երկու տարեկան եզը բերանն առած՝ կարող է ցատկել մի սաժենաչափ պարսպի վրայով: Առիւծի տեսքին աւելի գեղեցկութիւն է տալիս նրա շքեղ բաշը, որ ծածկում է կենդանու պարանոցն ու կուրծքը: Էգ առիւծը բաշ չունի: Առիւծի զարհուրելի մռնչիւնը սարսափ է ազդում բոլոր թէ մեծ և թէ փոքր կենդանիներին. այդ մռնչիւնը լսելով՝ բեռնաւորուած ուղտը վայր է թափում վրայից թէ բեռը և թէ տիրոջը և սարսափահար փախչում. ձին

կատաղութեամբ ծառս է լինում յետին ոտների վրայ, մեծամեծ շները կաղկանձումով շտապում են իրանց տէրերի մօտ պաշտպանութիւն գտնել...

Առիւծը մօտ մի սաժեն երկարութիւն և մի արշինից աւելի բարձրութիւն ունի. մարմինը ծածկուած է կարճ, կոկիկ դեղնագոյն մազերով. համարեա նոյն գոյնին է լինում նաև նրա երկար, թաւամազ բաշը: Ագին երկար է, ծայրը փնջամազ: Առիւծը կերակրւում է խոտակեր կենդանիներով, որոնց վրայ սովորաբար գիշերն է յարձակւում: Կուշտ առիւծը, եթէ նրան չգայրացնեն, չի դիպչում ոչ մարդկանց և ոչ կենդանիներին: Առիւծի որսը շատ վտանգաւոր է, որովհետև նա փախուստ տալու սովորութիւն չունի և վիրաւորուած կենդանին անշուշտ կըյարձակուի որսորդի վրայ:

Շատ փոքր հասակում բռնուած առիւծին կարելի է ընտելացնել, սակայն ձեռնասուն առիւծն ևս վտանգաւոր է:

Առիւծ

Մի նշանաւոր Ֆրանսիացի որսորդ առիւծի կորիւնին մեծացրեց այծի կաթնով: Հինգ ամսական կորիւնը պատառոտեց իւր սնուցին: Երկու տարեկան

հասակում, մի անգամ շղթան կտրելով՝ նա սպանեց մի ձի և մի մարդու էլ վիրաւորեց: Իւր տիրոջը նա չափազանց սիրում էր և անպայման հնազանդւում նրան: Սակայն մի անգամ, նրա հետ խաղալիս՝ առիւծը քիչ մնաց խեղդէր իւր ուժեղ թաթերի մէջ: Տարիներ անցած՝ այդ առիւծը գազանանոց ընկաւ: Եւ երբ միքանի տարի յետոյ որսորդն այցելեց այդ գազանանոցը, առիւծը ճանաչեց իւր նախկին տիրոջը. այդ օրից նա նրա կարօտն էր քաշում և մի ամիս չանցած՝ վշտից սատակեց:

Վագրն առիւծից աւելի վտանգաւոր է մանաւանդ նրանով, որ իւր որսի վրայ յարձակւում է ոչ թէ յայտնապէս, ինչպէս առիւծը, այլ կատուի նման՝ թագնուելով ու գաղտագողի:



Արքայական վագր

Վագրը մեծութեամբ պակաս չէ առիւծից: Նրա մարմինը ծածկուած է գեղեցիկ մազերով, որոնք դեղին գոյն ունին՝ սև շերտերով:

49. ԱՌԻՒԾՆ ՈՒ ՇՈՒՆԸ

Ա.

Մի քաղաքում ցոյց էին տալիս վայրենի գազաններ և տեսնողներից վերցնում էին փող կամ շուն ու կատու՝ գազաններին կերակրելու համար։ Մի մարդ կամեցաւ տեսնել գազաններին. նա փողոցում մի փոքրիկ շուն բռնեց և բերեց գազանանոց։ Մարդուն ներս թողին, իսկ շանը վեր առան և ձգեցին առիւծի վանդակը։

Շնիկը պոչն իրան քաշեց և կուչ եկաւ վանդակի մի անկիւնում։ Առիւծը մօտեցաւ նրան և սկսեց հոտոտել։

Շնիկը պարկեց մէջքի վրայ, բարձրացրեց թաթիկները և սկսեց պոչը շարժել։

Առիւծը թաթով շուռ տուեց նրան։

Շնիկը վեր թռաւ և առիւծի առաջ կանգնեց յետին թաթերի վրայ։

Առիւծը նայում էր շանը, գլուխը շարժում, բայց չէր դիպչում նրան։ Երբ տէրը միս ձգեց առիւծի առաջ, սա մի կտոր կտրեց-կերաւ, իսկ մնացածը թողեց շանը։

Երեկոյեան, երբ առիւծը պարկեց քնելու, շնիկն էլ պարկեց նրա մօտ և գլուխը դրեց նրա թաթին։

Այն օրից սկսած՝ նրանք ապրում էին միասին, միևնոյն վանդակում։ Առիւծը չէր դիպչում նրան, ուտում ու քնում էր նրա հետ միասին, իսկ երբեմն էլ խաղում էր հետը։

Բ.

Մի անգամ մի պարոն եկաւ գազանանոց և, տեսնելով շանը, ճանաչեց, որ իրանն է. նա այդ մասին յայտնեց գազանանոցի տիրոջը և խնդրեց իւր շանը իրան վերադարձնել։ Տէրը կամենում էր տալ, բայց երբ սկսեցին շանը կանչել, որ դուրս հանեն վանդակից, առիւծը սաստիկ բարկացաւ և մռնչաց։

Այսպէս մի ամբողջ տարի առիւծն ու շունը մնացին միևնոյն վանդակում։

Մի տարուց յետոյ շնիկը հիւանդացաւ և սատակեց։ Առիւծն այլևս կերակուր չէր ուտում, այլ շարունակ հոտոտում ու լիզում էր շանը և թաթով այս-այն կողմը դարձնում նրան։ Երբ վերջապէս նա հասկացաւ, որ շունը սատակել է, յանկարծ վեր թռաւ տեղից, մազերը բիզ-բիզ կանգնեցրեց և սկսեց պոչով խփել կողքերին. յարձակւում էր վանդակի պատերի վրայ և կրծոտում նիգերն ու յատակը։

Ամբողջ օրը նա զարկւում էր վանդակի պատերին և այս ու այն կողմն էր ընկնում. յետոյ պարկեց սատակած շան կողքին և լռեց։ Տէրը կամենում էր դուրս հանել սատակած շանը, բայց առիւծը ոչ ոքի թոյլ չէր տալիս նրան մօտենալու։

Տէրը կարծում էր, որ եթէ առիւծին մի ուրիշ շուն տայ, նա իւր վիշտը կըմոռանայ, ուստի և մի ուրիշ կենդանի շուն ձգեց վանդակը։ Սակայն առիւծն իսկոյն պատառոտեց նրան։ Ապա նա իւր թաթերով գրկեց սատակած շանը և հինգ օր շարունակ այսպէս պարկած մնաց։

Վեցերորդ օրը առիւծը սատակեց։

50. ԵՐԱԽՏԱԳԷՏ ԱՌԻՒԾԸ

Մի անգամ հռովմայեցի իշխաններից մէկի ծառան՝ Անդրոկլէս անունով՝ մի մեծ յանցանք գործեց և պատժից ազատուելու համար փախաւ Աֆրիկա և թագնուեց մի քարանձաւում։ Քիչ ժամանակ յետոյ նոյն քարանձաւը մտաւ և մի ահռելի առիւծ. խեղճ Անդրոկլէսը սարսափից քարացաւ։ Առիւծը, տեսնելով նրան, կամացուկ մօտեցաւ և իւր ահագին թաթը դրեց նրա գիրկը։ Անդրոկլէսն իսկոյն հասկացաւ, թէ բանն ինչումն է. ուշադրութեամբ զննելով թաթը, նա տեսաւ, որ մի մեծ

փուշ է խրուել նրա մատների արանքը և զգուշութեամբ դուրս քաշեց այն, առիւծը թեթեւութիւն զգալով, սկսեց լիզել նրա ձեռքերը և ապա թողեց, կաղալով հեռացաւ դէպի անտառի խորքը։

Ժամանակ անցաւ։ Անդրոկլէսը բռնուեց և մահուան դատապարտուեց։ Այն ժամանակները Հռովմում այդպիսիներին ձգում էին կրկէսի գազանների առաջ։ Պատժի օրը մեծ բազմութիւն էր հաւաքուել կրկէսը, որի հրապարակում արդէն ման էին գալիս երկու քաղցած առիւծ, որոնք նոր էին բերուած Աֆրիկայից կրկէսի համար։ Եւ ահա յանցաւորին ձգեցին առիւծների առաջ։ Նրանցից մէկն արդէն պատրաստւում էր մի ցատկումով յարձակուել Անդրոկլէսի վրայ, երբ միւսն իսկոյն ճանաչեց իւր բարերարին և մօտենալով նրան, սկսեց լիզել ձեռները... Ապա նա այնպիսի բարկութեամբ մռնչաց միւսի վրայ, որ սա յետ քաշուեց և մտաւ վանդակը։

Բոլորն էլ զգացուեցան։ Անդրոկլէսին ներեցին և արձակեցին կրկէսից. նրա հետ բաց թողին նաև առիւծին, որն այնուհետև իւր բարերարի մօտ էր ապրում։ Հռովմի բնակիչները, նրանց հանդիպելիս, ծաղիկներ էին թափում առիւծի գլխին, իսկ Անդրոկլէսին ապրելու միջոցներ էին տալիս։

51. Կ Ե Տ

Թէպէտ կետը իւր տեսքով ձկան նման է, սակայն նա ձուկ չէ, այլ ծովային գազան։ Իւր մեծութեամբ նա

գերազանցում է աշխարհիս բոլոր կենդանիներին. կան կետեր, որոնց երկարութիւնը հասնում է մինչև 10 սաժենի, իսկ քաշը մինչև 7 հազար փթի։ Ոտների տեղ նա ունի երկու ձկան լողնակներ, իսկ յետին կողմից ձկան պոչի նման մի պոչ։ Կետի գլուխը բռնում է մարմնի մի երրորդ մասը, իսկ բերանն այնքան լայն է, որ նրա մէջ



Կ ե տ

ազատ կարող է տեղաւորուել մարդկանցով լիքը մի մակոյկ։ Կետն ատամ չունի, այլ նրանց փոխարէն բերանում կան երկար եղջերային թերթեր։ Աչքերն ու ականջները համեմատաբար փոքր են. գլխի վերին մասում գտնւում է նրա շնչառիկը, որի օգնութեամբ կետը շնչում է։ Դուրս գալով ջրի երեսը, նա նախ շնչառիկի միջով ջրի փոքրիկ ցայտեր է բաց թողնում և յետոյ օդ հաւաքում. դրանից յետոյ նա կարող է մի քառորդ ժամու չափ ջրի տակը մնալ։

Կետը գլխաւորապէս բնակւում է հիւսիսային ցուրտ ծովերում։ Նրա ճարպը և բերանի եղջերային թերթերը շատ թանկ են գնահատւում, ուստի և նրա որսալու համար բազմաթիւ նաւեր են ուղևորւում։ Որսորդները մակոյկներով մօտենում են այդ ամեհի կենդանուն և երկաթէ սրածայր ձողեր խրում նրա մարմնի մէջ այն-

քան, մինչև որ նա արիւնաքամ լինելով, անշունչ դուրս է լողում ջրի երեսը: Կետի որսը շատ վտանգաւոր է, որովհետև նա իւր պոչի մի հարուածով կարող է խորտակել մակոյկը՝ մարդկանց հետ միասին:

52. Փ Ի Ղ

Փիղը ցամաքային կենդանիներից ամենամեծը և ամենաերկարակեացն է: Նա ապրում է երկուհարիւր տարուց աւելի: Նրա մարմինը մօտաւորապէս երկու սաժեն երկարութիւն ունի: Փղերն ունենում են երկար

Փ ի ղ

և չափազանց շարժուն կնճիթ, որի ծայրին մատնանման մի աւելամիս կայ: Կնճիթը փղի համար նոյնն է, ինչ որ ձեռքը մարդու համար: Նրանով փիղը վեր է առնում կերակուրը և տանում իւր բերանը. կնճիթով նա ճանապարհ է բաց անում անտառում, կոտրատելով և

արմատախիլ անելով ամբողջ ծառեր. նրանով էլ փիղը պաշտպանւում է թշնամիների յարձակումից: Փղի ատամները շատ մեծ-մեծ են. նրանցից երկուսը դուրս են ցցուած բերանից:

Զնայելով իւր դարհուրելի ուժին, փիղը շատ հեզ, խաղաղասէր և զգոյշ կենդանի է. շատ անգամ մի ամենահասարակ ազմուկից կամ կասկածելի շշուկից փղերի նախիրը սարսափահար փախչում է: Սակայն մի ամբողջ երամ սարսափահար փախչում է... բարկացած ժամանակ նա զարհուրելի է և չափազանց վտանգաւոր: Փղերին սպանում են նրա ատամները ձեռք բերելու համար, որոնք յայտնի են փղոսկր անունով և շատ թանգ են գնահատւում: Փղոսկրից մարդիկ զանազան



Փղերը Հնդկաստանում

մանր-մունր բաներ են շինում: Տաք երկրների բնակիչները փղերին որսում են նաև ընտանի դարձնելու համար. նրանց սովորեցնում են զանազան աշխատանքներ կատարել և ծանրութիւններ կրել: Ընտանեցրած փղերով ճանապարհորդելիս՝ մարդիկ նստում են կամ ուղղակի նրանց մէջքին և կամ նրանց վրայ շինած սուր ատամներում... Փղին կառավարում են սուր մուրճով, որով խփում են նրա գլխին, որ առաջ գնայ:

53. ԿՐԾՈՂՆԵՐ

Ընտանի մեծ ու փոքր մկները, դաշտային մկները, սկիւռները, նապաստակները և այլ սրանց նման կենդանիներն յայտնի են, որպէս կրծող կենդանիներ ու մեծ չարիք են ներկայացնում մարդկանց համար։ Ոչ մի տեղ չէք գտնիլ աշխարհի երեսին, որտեղ կրծող կենդանիներից մէկն ու մէկը բնակութիւն հաստատած չլինէր։ Կրծող կենդանիները մեծ մասամբ փոքր արարածներ են և նրանց գլխաւոր յատկութիւններից մէկն այն է, որ չափից դուրս բազմանում են։ Մեր բաղդից՝ նրանք շատ թշնամիներ ունին, որոնք անխնայ չափից դուրս կոտորում են նրանց, և եթէ այդ թշնամիները չլինէին, կրծողները կարճ ժամանակամիջոցում ամբողջ երկիրը կըպատէին և անտանելի կըդարձնէին մեր կեանքը։

Դժուար է երևակայել մի կենդանի, որը աւելի սիրէր քաղցրեղէնը, քանթէ տնային մուկը։ Այդ գարշելի արարածները, ինչպէս մենք առհասարակ անուանում ենք մկներին, մեր բնակարաններում կարծես լիազոր տէրեր լինին և կարծես բոլորը նրանց պատկանելիս լինի։

Մկները սովորութիւն չունին ջուր խմելու և միշտ աշխատում են ջրալի համեղ պտուղներ գտնել։

Վնասը, որ մեզ տալիս են մկները, ոչ թէ նրանումն է, որ նրանք գողանում, ուտում են ուտելեղէններ, այլ որ կրծոտում են թանկագին առարկաներ կամ կտորներ, գորգեր, շորեր և այլն։

Բացի տնային մկներից՝ կան և մի շարք դաշտային մկներ, որոնք կրծում են հացաբոյսերի հասկերը, մեծ վնաս են հասցնում գիւղացիներին։

Սկիւռը նոյնպէս կրծող կենդանի է։ Այդ փոքրիկ կենդանին՝ աղուամազ պոչով, ուրախ զուարթ վազվզում է ծառերի վրայ և ճարպիկութեամբ թռչում է մի ճիւղից միւսը։ Նա միշտ ապրում է խիտ անտառներում, չի սիրում արևի ճառագայթներ և խոնաւութիւն։ Հան-

գիստ ժամանակ նա զբաղուած է լինում կերակուր ճարելով։ Նայած տարուայ եղանակին, սկիւռը կերակրւում է պտուղների սերմերով, նոր դուրս եկած ծառի կանաչ ճիւղերով։ Սիրում է նաև հացահատիկներ և տեսակ տեսակ սունկեր։ Եղևնու և փեճու խէժերն ամենահամեղ կերակուրներն են կազմում սկիւռի համար։ Նա սովորութիւն ունի նստելու յետին թաթերի վրայ՝ ընտրելով մի բարձր ճիւղ։ Առջևի թաթերով նա վերցնում է խէժը և մօտեցնելով բերանին՝ սկսում է կրծոտել։ Սկիւռը կրծոտելով հասնում է սերմերին ու լիզելով մէկ-մէկ հանում է սերմերը միջից և ուտում։

Դառը նշերի պտուղն սկիւռը երբեք բերանը չի դնիլ, որովհետև գիտէ, որ կըհիւանդանայ և կարող է սատկել։ Եթէ ձեռքն է ընկնում մի որևէ քաղցր պտուղ, սկիւռն ուշադրութիւն չի դարձնում այդ անուշ պտուղի վրայ, այլ աշխատում է մի կերպ հանել նրա մէջն եղած սերմին։ Եղևնու և փէճու անտառներում, որոնք լիքն են խէժերով, սկիւռն աշխատում է ձմեռուայ պաշար հաւաքել։ Նախ ընտրում է փչուկ ծառ և կամաց-կամաց հաւաքում է այնտեղ ծառերի պտուղներ։ Սկիւռը սովորաբար միքանի տեղ է պահեստներ սարքում այն մտքով, որ եթէ մէկը փչացուի, գոնէ միւսները կարող լինին իրան ազատել սովից։ Պատահում է, որ սկիւռը մկների նման ձու է գողանում թռչուններից։ Հետաքրքիր է՝ թէ ինչպէս են սկիւռները սունկերի հետ վարւում։ Պոկելով մի սունկ, սկիւռը բարձրանում է ծառի գագաթը և այնտեղ ցցում մի ճիւղի ծայրին։ Սունկն արևի տակ չորանում է. տեսնելով՝ որ արդէն սունկը պատրաստ է, սկիւռը տանում, հաւաքում է իւր պահեստում։

Սկիւռի օրը շատ կարճ է լինում. նա դուրս է գալիս իւր բնից առաւօտներն և երեկոները, իսկ արևը սկսեց այրել թէ չէ, նա շտապում է վերադառնալ իւր բոյնը։ Անձրևային օրը նոյնպէս ստիպում է սկիւռին

չհեռանալ իւր բնից։ Այդ է պատճառը, որ սկիւռները, որոնք միքանի տեղերում մեծ վնաս են հասցնում մարդուն, յանկարծ գրեթէ բոլորն էլ կոտորւում են։ Այդ պատահում է այն ժամանակ, երբ աշունը շատ անձրևային է լինում և սկիւռները չեն կարողանում հաւաքել ձմեռուայ պաշարը։

Նապաստակը նոյնպէս կրծողների ցեղին է պատկանում։ Նա երկար ականջներ ունի և վերևի շրթունքը բաժանուած է երկու մասի։ Բերանից երևում են դուրս ցցուած սուր ատամները։ Մենք միշտ կարող ենք տեսնել դաշտերում այդ վախկոտ կենդանուն, որ խիտ թփերի կամ փչուկ ծառերի ներսն է իւր բունը հաստատում։ Առաւօտները և երեկոները, արևը մայր մտնելուց յետոյ նապաստակը դուրս է գալիս իւր բնից և սկսում դէս ու դէն վազվզել ուտելիք գտնելու համար։ Նա անխնայ կերպով ոչնչացնում է զանազան բոյսեր՝ սկսած արմատից մինչև ծղօտի վերջը, իսկ ամենից շատ սիրում է բանջարանոցներ մտնել և կրծոտել կաղամբ ու շաղգամ։ Նա երբեք չի հեռանում իւր բնից շատ հեռու։ Ձմեռը հասնում է թէ չէ, նա թողնում է իւր դաշտը և մօտենում գիւղին։ Գիւղացու այգիներում նա լաւ է զգում իրան, կրծոտելով փոքր ու մեծ ծառերի բներ, և այդպէս ոչնչացնելով բաւականաչափ ծառեր ու մեծ վնաս հասցնելով գիւղացիներին։

Բացի այդ կենդանիներից կան և ուրիշ կրծող կենդանիներ էլ։ Դրանց գլխաւոր յատկութիւնն այն է, որ ամբողջ կեանքն անց են կացնում իրանց կտրիչ ատամներով կրծոտելով։

Վա՜յ այն կրծողին, որ պատահմամբ կորցրել է այդ ատամներից մէկը, - նրա կեանքն այլևս կեանք չէ. կորցրած կտրիչ ատամի տեղը բռնում է հակադիր ատամը, կենդանին չի կարողանում բերանը բաց անել և սատկում է սովից։

54. ԻՆՉՊԷՍ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՒՈՒՄ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ՈՒ ԲՈՅՍԵՐԸ

Կեանքը ամենաթանկագին բանն է ամեն կենդանու համար։ Բայց չկայ ոչ մի կենդանի, թէ փոքր և թէ մեծ, որ կարողանար հանգիստ ապրել և չվախենալ, որ մի ուրիշ կենդանի այն է՝ կըյարձակուի իւր վրայ և իրան էլ կըլափէ։ Աշխարհը լի է թշնամիներով։ Բայց յետին անբան արարածն էլ թանկ է ծախում իւր կեանքը և ամեն ճիգ թափում է թշնամիներից փրկուելու համար։ Մէկը դրա համար օգտւում է իւր արագավազ ոտներով, միւսը դեռ շատ հեռուից նկատում է վտանգը սրատես աչքերով և իւր գլխի ճարը տեսնում։ Կան նաև կենդանիներ, որոնք դիւրազգաց հոտառութեամբ կէս մղոնից ըզգում են թշնամու մօտենալը։ Ամեն մէկը պաշտպանւում է՝ ինչպէս կարող է։

Ահա ձեզ ծանօթ փշոտ ոզնին. օրը ցերեկով նա հանգիստ քնած է մի յետ ընկած տեղ և անուշ երազներ է տեսնում խոր քնի մէջ։ Արևը մտաւ թէ չէ, նա բաց է անում իւր աչքերը, թափ է տալիս իւր թմրած մարմինը և գնում որսի. նա վազվզում է մարգագետիններում և դաշտերում, մտնում է նոյնպէս այգիներն ու բանջարանոցները։ Քանի՜-քանի՜ միջատներ ու որդեր է խեղդում նա անխնայ կերպով։ Բայց ահա մօտենում է թունաւոր օձը. մի անզգուշութիւն, – և նա կըցցէ իւր մահաբեր խայթոցը ոզնու փափուկ վզի մէջ։ Ոզնին ճարպիկութեամբ բռնում է օձի պոչից և իսկոյն կծկւում։ Օձը նետւում է այս ու այն կողմ, զարնւում է ոզնու բիզ-բիզ փշերին մէկ, երկու, անթիւ անգամ, մինչև որ արիւնաքամ, ուժասպառ ընկնում է անշարժ. այն ժամանակ ինքը, ոզնին, սկսում է նրան կամաց-կամաց ուտել։ Տես, վազում է գայլը, ուզում է ոզնու միսն անուշ անել։ Ոզնին գնդի պէս ոլորուեց և վեր ցցեց իւր փշերը գայլը պտտւում է շուրջը, բայց իզուր, ոզնուն ձեռք

տալ նա չի կարողանում։ Միայն խորամանկ աղուէսն է, որ ուսումնասիրել է ոզնու բնաւորութիւնը և գիտէ նրան բռնելու հնարը։ Աղուէսը, գտնելով ոզնուն, սկսում է բոթել նրան առջևի թաթիկներով և ստիպում գլորուել դէպի ջուրը։ Փշերից աղուէսի թաթիկները ծակծկւում են, վէրքերից արիւն է հոսում և ամբողջ մարմինը քրտինքով է ծածկւում, բայց նա ուշադրութիւն չի դարձնում ոչ վէրքերի, ոչ քրտինքի վրայ, բոթում է, հա բոթում խեղճ ոզնուն և հասցնում գետակի կամ մի աղբիւրի։ Էլի մի հարուած, և ոզնին ջուրն է ընկնում և այնուհետև վայ նրա կեանքին։ Ջրում ոզնին չի կարող կծկուած մնալ, և դուրս է հանում իւր գլուխն ու ոտները փշոտ մորթուց. աղուէսն էլ հէնց այդ է ուզում. բռնում է փափուկ գլխից ու մաս-մաս գզգզում։

Իսկ ինքը, աղուէ՞սը. նա՞ ինչպէս է պաշտպանւում իւր անթիւ թշնամիներից։ Վտանգի ժամանակ նա հազար ու մի տեսակ միջոցների է դիմում, մի տեղ ազատւում է իւր խորամանկութեամբ, միւս տեղ գործ է դնում ճարպիկութիւնը։ Եթէ չի օգնում նրան ոչ խորամանկութիւնը, ոչ էլ ճարպիկութիւնը, աղուէսը յոյսը դնում է իւր ոտների վրայ։ Նա միշտ անբաւական է իւր երկար ու մազոտ պոչից, որովհետև շատ անգամ պոչն է խանգարում նրան արագ վազելու։ Ահա թէ ինչու նա իւր պոչն է ուղղում թշնամուն, երբ ոչ մի հնար չի տեսնում ազատուելու։ Մարդը, շունն ու գայլը աղուէսի ոխերիմ թշնամիներն են։ Մարդը, ինչ ասես, որ գործ չի դնում, որ աղուէսին իւր ձեռքը ձգէ։ Թակարդներ, որոգայթներ է դնում, ուզում է խաբել աղուէսին, բայց իզուր. աղուէսը լաւ է հասկացել այդ միջոցների նպատակը և տեսէք՝ ինչ է անում. նա կանչում է մի ուրիշ կենդանի, օրինակ, վայրենի կատու, և իւր կողմից համոզում է քաղցած կատուին անուշ անել այն կտոր միսը, որ թակարդի մէջ երևում է։ Կատուն էլ ուրախ-ուրախ վրայ է պրծնում համեղ կտորին, բայց թակարդն

իսկոյն ամուր սեղմում է նրա գլուխը։ Աղուէսն էլ այդ է ուզում. թակարդն այժմ ոչ մի վնաս չի կարող բերել նրան։ Նա մօտենում է թակարդին, անուշ է անում մարդու դրած միսը, կատուին էլ հետը և բաւական կըշտացած՝ ուրախ ու զուարթ հեռանում է։ Շներին հօ հեշտ է խաբել։ Որսի ժամանակ, երբ շները նկատում են աղուէսին և ընկնում նրա յետևից, նա նետի պէս թռչում է, որ մտնի իւր որջը։ Բայց եթէ նա շատ է հեռացել իւր բնից, նա սուր աչքերով ամէն կողմ է նայում, որ մի որևէ ապաստարան գտնէ։ Ահա նկատեց նա նապաստակի բունը. հարկաւոր է միայն ներս ծլկուել։ Աղուէսն յանկարծ չի մտնում այդ բունը. միքանի պըտոյտներ է անում, խաբում շներին և երբ համոզւում է, որ շներն արդէն կորցրել են իւր հետքը, հանգիստ մտնում է բունը։ Զայրացած որսորդը չգիտէ ինչ անէ. չէ՞ որ աղուէսը նրա ձեռքումն էր։

Այսպէս, ուր ոյժը չի օգնում, այնտեղ փրկում է խելքըն ու խորամանկութիւնը։ Մէկ տեսէք, ինչպէս է երկչոտ նապաստակը հետքերը խճճում շների հալածանքներից փախչելիս։ Մի օր շներն այն է՝ բոլորովին հասել, բռնել էին նապաստակին։ Նապաստակն յանկարծ շուռ տուեց ու մի կողմ ցատկեց դէպի հարևան հօտը. մինչև շներն իրանք էլ շուռ տուին և ուշքի եկան, նապաստակը թաքկացաւ հօտի մէջ։ Ոչխարները վախեցած վազում էին դաշտի միջով, նապաստակն էլ հետներն էր վազում, և էլ նրանց միջից դուրս չեկաւ։

Պաշտպանուելու համար վարազներն ունին սուր-սուր ժանիքներ, եղջերուները՝ ամուր եղջիւրներ և արագավազ ոտներ։ Երևի դուք էլ, ընթերցողներ, լաւ գիտէք, թէ ինչպէս են պաշտպանւում շունն ու կատուն, ձին ու էշը, եզն ու գոմէշը. ամէն օր դուք տեսնում էք ձեր ընտանիքի այդ բարեկամներին։ Բնութիւնն ամէն մէկին մի յատուկ բան է տուել յարձակւողներից ապահով մնալու համար։

Կենդանիների մեծ մասը խմբուած կեանք է անցկացնում. նպատակն այն է, որ մէկը պաշտպանէ բոլորին և բոլորը մէկին։ Մի՞թէ իմաստուն չեն կենդանիները։ Կապիկներն իրանց միքանի վատ արարքներով մեծ չարիք են գիւղացիների գլխին։ Նրանք մի սովորութիւն ունին—գիւղը հիւր գնալու, դէս ու դէն ընկնելու և այս կամ այն գտած բանը գողանալու. մի բան ձեռքերն ընկաւ թէ չէ՝ վազում են դէպի իրանց բոյնը։ Մի անգամ այդ կապիկներից մէկը շորեղէն էր գողացել։ Գիւղացիք նկատել էին և իսկոյն յետևից ընկել, որ բռնեն գողին։ Բայց իզուր. կապիկը մի կերպ հասաւ իւր բոյնը, որ մի քարայր էր ներկայացնում. սարի վրայ, և երբ գիւղացիները եկան ու սկսեցին վեր բարձրանալ դէպի այրը, յանկարծ լսուեց մի գոռում-գոչում պահապան ծերուկ կապիկի բերանից. իսկոյն կապիկների ամբողջ ընտանիքը դուրս թռաւ այրից և հաւաքելով մեծ-մեծ քարեր՝ սկսեց կարկուտի պէս ռմբակոծել գիւղացիներին։ Խեղճ գիւղացիք ստիպուած էին թողնել կապիկներին և հեռանալ։

Մի որսորդ պատմում է, թէ ինչպէս տանու խոզերը պաշտպանում էին երկու գայլից։ Նրանք շարուեցին սեպաձև, խռռացին և կամաց դիմեցին առաջ գայլերի վրայ։ Գայլերից մէկը փախաւ, իսկ միւսը ծառին կպաւ։ Խոզերը շրջապատեցին նրան ամեն կողմից։ Գայլը փորձեց խոզերի վրայից ցատկել, բայց իզուր. խոզերը նրան ցած գլորեցին և գզգզեցին։ Մի ուրիշ դէպք էլ։ Մի օր մի մեծ վագր յարձակւում է ընտանեցրած ցուլերի հովուի վրայ։ Հէնց որ կենդանիները տեսնում են, որ իրանց հովիւը վտանգի մէջ է, իսկոյն յարձակւում են վագրի վրայ և սկսում են պոզերով գնդակի պէս ձգել նրան դէս ու դէն, մինչև որ գազանը սատկում է։ Իհարկէ ոչ մի ցուլ այդ չէր անի, եթէ մենակ լինէր։

Այս օրինակները, կարծեմ, բաւական են և դուք անշուշտ համոզուեցիք, թէ ինչ մեծ նշանակութիւն ու-

նի կենդանիների ինքնապաշտպանութեան համար համախմբուած կեանքը։ Իսկ բոյսե՞րը. մի՞թէ նրանք էլ կարող են օգնել մէկմէկու վտանգի ժամանակ։ Ապա ի՞նչ է անտառը, եթէ ոչ միատեսակ ծառեր՝ մի տեղ խմբուած, որոնք իրանց ամուր կուրծքը զուարթ դէմ են դրել փոթորիկներին և կիզիչ արևին։ Նրանք ուզում են պաշտպանել իրար ամեն պատահարից։ Մենակ դաշտում ապրող ծառը երբէք չի կարող ասել, որ պաշտպանուած է արևից ու քամիներից, որոնք ձեր աչքի առաջ ծառի տերևները պոկում, տանում են, երբեմն էլ իրան բընով արմատահան անում։

Կենդանիների և բոյսերի մէջ նկատւում է մի այլ պաշտպանութիւն էլ—թոյլ արարածները, չկարողանալով դիմադրել վտանգին՝ աշխատում են ճարել իրանց համար հզօր ընկեր, որը խնայելով կամ ուղղակի վարձատրութեամբ պահպանէ թոյլ ընկերոջ կեանքը։ Դաշտում անշուշտ միշտ նկատել էք թփեր։ Մօտեցէք մէկին և դուք կարող էք նկատել մի հետաքրքրական երևոյթ։ Թփի տակ, նրա ճիւղերի արանքներում, միքանի բոյսեր ապաստարան են գտել, իսկ թփի տակը և ներսը կանաչ խոտ է բուսել։ Ի՞նչ է պատճառը, եթէ ոչ—խընամք թփի կողմից։ Թուփը իւր սուր փշերով ոչ ոքի իրաւունք չի տալիս մօտենալ այդ բոյսերին։

Բայց տեսնենք մի ուրիշ օրինակ։ Ամերիկայում մի բոյս կայ, կեկրո՞պէ անունով, որ շատ նման է մեզ ծանօթ եղէգնին։ Զարմանալի է այդ բոյսի կեանքը։ Բաւական է մի ժամ նայէք այդ բոյսին, որ տեսնէք հետևեալ պատկերը։ Մրջիւնները վրայ են թափուել կեկրոպէի տերևներին և սկսում են մանր մանր կտրատել ու մերկացնել կեկրոպէն, որ տերևներով կերակրուեն։ Յանկարծ, որտեղից-որտեղ, ուրիշ մրջիւններ արագութեամբ վազում են նրանց դէմ և սկսւում է մի կատարեալ պատերազմ։ Տերևներ կտրատող մրջիւնները մէկը միւսի յետևից ջարդ ու փշուր են լինում, իսկ յաղթող մրջիւն-

ները՝ կամաց-կամաց թողնելով կռուի դաշտը, հեռանում, մտնում են կեկրոպէի ցօղունի ներսը։ Տէր Աստուած, այս ինչ հրեշտակներ են կասէք դուք, որ ազատեցին խեղճ կեկրոպէին անխուսափելի մահից։ Բայց գիտէ՞ք, ինչումն է բանը։ Կեկրոպէն, գիտենալով որ տերև կտրող մրջիւնները մեծ նեղութեան մէջ են ձգելու իրան, դիմում է ուրիշ մրջիւնների, որոնք ոխերիմ թշնամիներ են տերևակերներին։ Կեկրոպէն և այդ թունաւոր մրջիւնները կարծես պայմանաւորւում են այսպէս. առաջինը տալիս է բնակարան և քաղցր հիւթ, որ շատ են սիրում մրջիւնները, իսկ մրջիւններն իրանց կողմից խօսք են տալիս պաշտպանել կեկրոպէին. վերևը դուք տեսաք, թէ ինչպէս են կատարում իրանց խօսքը այս թունաւոր մրջիւնները։

Ահա թէ ինչպէս են պաշտպանւում կենդանիներն ու բոյսերը։

55. ԱՂԱՒՆԻՆԵՐ

Ես կանգնած էի սեպացած բլրի վրայ, [illegible] առջև սփռուած էր հաճարի հասունացած [illegible]։ Նա երբեմն ծածանւում էր ոսկեայ գոյնով, երբ [illegible] տարածւում էր արծաթեայ ծովի նման և պսպղի[illegible]ր տալիս։

Բայց ալիքները բնաւ չէին օրօրւում [illegible] ծովի վրայ, խեղդող օդի անշարժութիւնը գուշակո[illegible] էր մի մեծ փոթորիկ։

Իմ շուրջն արեգակը դեռևս լու[illegible]որում էր իւր ջերմ և աղօտ լուսով. իսկ այնտեղ, հ[illegible]րի արտի միւս կողմում, ոչ այնքան հեռու, մոյգ կ[illegible]ագոյն մառախուղն ահագին կուտակութեամբ բռ[illegible] էր երկնակամարի ամբողջ կէսը։

Ամէն ինչ լռութեան մէջ էր... ամեն ինչ հառաչում էր արեգակի վերջին ճառագայթների փայլման ներքոյ։ Չէր լսւում, չէր երևում ոչ մի թռչուն. թաքնուած էին մինչև անգամ ճնճղուկները։ Միայն մի ինչ-որ տեղ,

մերձակայքում, մենաւոր ջրածաղկի խոշոր տերևները յամառ կերպով շշնջում էին և թափահարւում։

Ի՜նչպէս սաստիկ բուրում էին դաշտերի խոտաբոյսերը։ Ես նայում էի կապտագոյն ամպակոյտի վրայ... մռայլը տիրում էր իմ սրտում։ Դէհ, շուտով, շուտով, մտածում էի ես, փայլատակի՛ր, ոսկեղէն օձ, դղրդացի՛ր, որոտ, շարժուի՛ր, գլորուի՛ր, հեղեղուի՛ր, ո՛վ չար մառախուղ, վերջ տուր այդ տխուր հեծութեան։

Բայց մառախուղն անշարժ էր։ Նա առաջուայ նման ճնշում էր անմռունչ երկիրը... միայն կարծես թէ աւելի ուռչում էր և մթնանում։

Եւ ահա նրա միագոյն կապուտակութեան վրայ նշմարուեց մի ինչ-որ բան, որ սլանում էր հարթ-հաւասար կերպով. կարծես թէ իսկ և իսկ մի սպիտակ թաշկինակ լինէր կամ ձիւնի պատառ։ Դա մի սպիտակ աղաւնի էր, որ թռչում էր գիւղի կողմից։ Թռչում էր, թռչում միշտ միևնոյն ուղիղ գծով... և խորասուզուեց անտառի յետևում։

Անցաւ միքանի վայրկեան, — դեռ տիրում էր միևնոյն խիստ լռութիւնը։ Բայց նայէ՛ր։ Այժմ նշմարւում են երկու թաշկինակներ. ձիւնի երկու պատառներ յետ են սլանում. դրանք երկու սպիտակ աղաւնիներ են, որ թռչում են դէպի տուն հաւասար թռիչքով։

Եւ ահա վերջապէս պայթեց փոթորիկը և սկսուեց բնութեան կատաղի խաղը։

Ես հազիւ կարողացայ փախչել մինչև տուն։ Քամին ճռնչում, սուլալի կերպով պտըտւում էր։ Պատառ-պատառ եղած շիկագոյն ամպերը ներքևից առաջ էին մղւում։ Ամէն ինչ տակն ու վրայ էր լինում, խառնաշփոթութեան մէջ էր, դղրդում էր։ Անձրևի սարսափելի տարափը ջրային սիւների նման ցած էր թափւում։ Կայծակների հրեղէն-կանաչագոյն փայլատակումը աչք էր կուրացնում։ Սաստիկ բոմբիւնը կարծես թէ թնդանօթներից էր արձակւում։ Փչում էր ծծմբային հոտ։

Բայց կտուրի ծածկի տակ, երդիկի կողքին, միմեանց մօտ նստած են երկու սպիտակ աղաւնիները — և այն, որը թռչում էր իւր վարուժանի յետևից,— և՛ այն, որին բերաւ նա և գուցէ ազատեց մահից։

Երկուսն էլ գուրգուրում էին միմեանց,— և իւրաքանչիւրը շօշափում էր իւր թևիկով դրացու թևը…

Երջանիկ էին նրանք։ Եւ ես ինձ երջանիկ էի զգում՝ նրանց վրայ նայելով։

56. Թ Ո Ւ Խ Ս Ը Կ Ա Ն

Ամառն էր։ Փոքրիկ Անահիտը կալումն էր։ Նա դէզի ստուերում շինել էր մի փոքրիկ տուն և տիկնիկներին մէջը հաւաքած՝ խաղում էր։ Մայրն ուղարկել էր նրան, որ դէզը պահպանէ հաւերի քչըչելուց։ Անահիտից մօտիկ կըրկռում էր նրանց թուխսըկանը։ Նա փախցրել էր մի հասկ, կտցահարում էր և թափում դեղին ցորենի հատիկները բաժանում էր իւր ձագուկներին։

Թուխսըկանն յանկարծ մի սարսափելի ճիչ արձակեց և թևերը լայն բացեց։ Անահիտը ոչինչ չէր հասկանում. բայց փոքրիկ ձագուկները մօր արածը շատ լաւ հասկացան, որովհետև, լսելով մօր ձայնը՝ մի փոքր հեռու եղողները հաւաքուեցին և մտան մօր բացած թևերի տակ։ Անահիտն ուշադրութեամբ նայում էր՝ առանց մի բան հասկանալու։

Բայց Անահիտը շուտով իմացաւ, թէ թուխսըկ·նն
ինչու հաւաքեց իւր ձագուկներին թևերի տակը։
պտըտում է նրա գլխին մի ուրուր։ Նա յարձակ
հաւի վրայ, կամենում է նրա ձագուկները յափշտա
մայրը չի թողնում։ Հաւը կռւում է ուրուրի հետ
թոյլ կտցով։ Բայց նա յոգնել է արդէն երկար կռւե

Անահիտն էլ երկար չնայեց, վազեց թուխսըկ
օգնութեան։ Ուրուրը, տեսնելով Անահիտին, իսկոյն
խաւ և մայրն ու իւր ձագուկներն ազատուեցին ու
րի ճանկերից։ Անահիտն աքաղաղակռիւներ շատ էլ

սած, բայց երբէք չէր տեսել, որ մի հաւ կռուէր մի ուրիշ թռչնի հետ, մի վախկոտ հաւ կռուէր մի զօրեղ ուրուրի հետ։

Անահիտն իսկոյն վազեց տուն և մօրը պատմեց իւր տեսածը։

— Հապա ինչո՞ւ ես ասում ինձ «վախկոտ հաւ ես», մայրիկ,— ասաց Անահիտը,— հաւը միթէ վախկոտ է. ես տեսայ, ինչպէս քաջութեամբ կռւում էր մեր թուխսըկանը ուրուրի հետ։

— Հաւերը վախկոտ են,— պատասխանեց նրա մայրը,— բայց ոչ այն ժամանակ, երբ նրանք թուխս են լինում նստած։ Թուխսըկանը մայր է, իսկ մայրը վախ չգիտէ, Աստուած նրան ձագեր է տուել, նրանց բաժին սէրն ու զօրութիւնն էլ հետն է տուել մօրը, որ նրանց սիրէ, պահէ ու մեծացնէ։ Մի մայր, որքան որդի որ ունի, այնքան անգամ աւելի է նրա սէրն ու զօրութիւնը։ Մեր թուխսըկանը տասներկու ձագուկ ունի։ Նրա ոյժն ու սէրն էլ տասներկու հաւի ուժի ու սիրոյ չափ է։

37. Ա Ր Ծ Ի Ւ

Արծիւն ամենայն իրաւամբ բոլոր թռչունների թագաւորն է համարւում։ Նրա սրատես աչքերը, կեռացած կտուցը և սուր ճանկերն ահ ու սարսափ են ազդում ոչ միայն բոլոր թռչունների, այլ և մարդկանց ու միւս կենդանիների վրայ։ Նրա պատկերը մինչև օրս էլ գործ է ածւում՝ իբրև նշան ոյժի և փառքի։ Հին ժամանակներում պարսիկները և հռովմայեցիները սովորութիւն ունէին իրանց զօրքերի առաջից տանել մի կենդանի արծիւ կամ նրա պատկերը։

Արծիւները բաժանւում են մի քանի տեսակի, բայց նրանցից ամենանշանաւորը «արքայ արծիւ» կոչուողներն են, որ ապրում են Եւրոպայի ու Ասիայի լեռնոտ տեղերում։ Այդ արծուի բարձրութիւնը հասնում է մէկ ու կէս արշինի, իսկ փետուրները շատատ գոյն ունին։

Արծիւը գիշատիչ թռչուն է, այսինքն կերակրւում է կենդանիների մսով։ Իւրաքանչիւր տարի ածում է երկու ձու, որոնցից դուրս են գալիս նրա ձագերը— փոքրիկ արծուիկները։

Արծիւները սովորաբար ապրում են անմատչելի ժայռերի, բարձրաբերձ լեռների մէջ... Այդտեղ քարի խորշի մէջ շինում է նա իւր բունը, որ ոչ մի գեղեցկութիւն, ոչ մի գրաւչութիւն չունի։

Ինչպէս բոլոր ուժեղ թռչունները, այնպէս էլ արծիւը շատ քիչ հոգս է տանում իւր բնակարանի մասին։ Նա իւր բունը թագցնելու կարիք չունի. ո՞վ կըհամարձակուի ձեռք մեկնել նրան, ո՞վ կըկարողանայ բարձրանալ ամեհի ժայռերի, դարաւոր ծառերի գլուխը, ուր ապրում է «թագաւոր արծիւը»։ Նրա բունը բաղկացած է ճիւղերի կոյտերից, որի մէջ կայ մի փոքրիկ խորութիւն, իսկ շուրջը յաւելուած սալայատակի ձևով։ Առաջինը ձագերի օրօրանն է, իսկ երկրորդը — սեղանը, որի վրայ արծուի ընտանիքը ճաշակում է իւր կերակուրը։ Այդտեղ ամբարած է լինում արծուի պաշարը՝ սպանուա թռչուններ, նապաստակներ ու գառներ... Այդտեղ թափթփուած են և կերակուրի հոտած, նեխած մնացորդները որոնց գարշելի հոտը բուրում է շրջակայքում։

Բունը վերադառնալիս՝ արծիւը իւր բերած որս բաժանում է մանր կտորների և հաւասար չափով տալի է ձագերին, իսկ երբ վերջիններս բաւական մեծանու են և կտուցները ամրանում, այն ժամանակ նա ամբող որսը դնում է սեղանին ու բոլորը միասին սկսում են ուտել

Որսի ժամանակ արծիւը չափազանց ճարպիկ ու համարձակ է։ Նրա համար երկիւղ ասուած բանը գոյութիւն չունի։ Նա սիրում է գառներ, փոքրիկ այծեր, վայրի սագեր, աղուէսներ, նապաստակներ, կատուներ և ամեն տեսակ թռչուն, թէ ընտանի, թէ վայրի, թէ մեծ և թէ փոքր։

Նկատուած որսը արծուի ճանկերից չի կարող խոյս տալ ոչ արագ փախուստով և ոչ էլ թռչելով։ Լոյսը բացուելուն պէս նա հեռանում է բնից, թռչում հեռու ու բարձր և շարունակ նայում է ներքև, որ տեսնի՝ ինչ է կատարւում այնտեղ, ինչ որս է սպասում իրան և հէնց որ մի բան է նկատում, իսկոյն կայծակի արագութեամբ վրայ է հասնում և վերև բարձրացնում։ Շատ անգամ արծիւը որսն ուրիշ գիշատիչների ճանկերից է փախցնում։ Այդ մասին ականատեսները հետևեալն են պատմում։

Իւրաքանչիւր օր հսկայ արծիւը գալիս, նստում էր բարձր ծառի գագաթին և այդտեղից դիտում էր շրջակայքը կարծես լոկ հետաքրքրութեան համար, բայց ոչ, նա որոշ նպատակ ունէր, որոշ րոպէի էր սպասում, որ իւր հզօրութիւնը ցոյց տայ։

Ահա ծովի վրայով սաւառնում են մի խումբ թռչուններ. արծիւն էլ այն կողմն է նայում. նրա ուշադրութիւնը կենդրոնացած է միայն մէկի — գիշատիչ բազէի վրայ...

Յանկարծ բազէն սլացաւ ներքև և իւր կտուցով ալիքների միջից դուրս բերեց մի ձուկը...

Հսկայ արծիւը նկատեց այդ բանը. նրա աչքերը կրակ են դարձած. միքանի անգամ բաց ու խուփ արաւ կտուցը և վերջապէս. կայծակի արագութեամբ յարձակուեց բազէի վրայ։

Բազէն դիմադրութիւն ցոյց տուեց. սկսուեց մի կատաղի կռիւ, որ քսան րոպէից աւելի տևեց. երկու գիշատիչները մօտենում էին իրար, ճանկում, կտցահարում, ապա հեռանում, միքանի պտոյտներ անում և նորից

մօտենում, նորից նոյնը կրկնում… Վերջապէս բազէն ուժասպառ եղաւ. նա բաց թողեց որսը. արծիւն իսկոյն յափշտակեց և սլացաւ դէպի իւր բոյնը։ Եւ արծուի այդպիսի քաջագործութիւնները կրկնւում էին գրեթէ ամէն օր…

Իբրև գիշատիչ թռչուն՝ արծիւը մեծամեծ վնասներ է հասցնում մարդկանց, փախցնելով գառներ, այծեր, ընտանի թռչուններ և այլն։ Այդ պատճառով, երբ մի տեղում արծիւը բոյն է դնում, բնակիչներն աշխատում են շուտով քանդել նրա բոյնը և դրանով ազատուել հզօր թշնամուց. բացի դրանից, շատ որսորդներ բռնում են արծուի ձագերին, մեծացնում են թակարդի մէջ և ապա վաճառում բաւական մեծ գնով։

Սակայն թէ արծուի բոյնը քանդելը և թէ ձագերին բռնելը համարձակ փորձ է, որ երբեմն մէկ կամ միքանի մարդկանց մահուան պատճառ է լինում, իսկ երբեմն էլ յաջողութեամբ է վերջանում…

Բարձր ժայռի գագաթին բոյն էին դրել երկու արծիւ. իւրաքանչիւր օր նրանք յարձակում էին գործում մօտակայ գիւղի հօտի վրայ և գառներ էին յափշտակում։ Նոյն գիւղից մի որսորդ վճռեց ազատել իւր համագիւղացիներին այդ չարիքից և միևնոյն ժամանակ ձեռք բերել արծուի ձագերը։

Նա կողքից կապեց պարկը, վեր առաւ ցանցը, սուր և երկու ընկերի հետ գնաց ժայռի մօտ։

Երբ արծիւները թռան, գնացին, գիւղացիները ցանցը կապեցին որսորդի մէջքից և նրան կախեցին ներքև։ Մի րոպէում որսորդը մօտեցաւ արծուի բնին, հանեց ձագերը, դրեց պարկի մէջ, քանդեց բոյնը և բղաւեց ընկերներին։

— Քաշեցէք վերև, ամէն ինչ յաջող է։

Սակայն այդ րոպէին վրայ հասան արծիւները. նրանք բարձրից տեսել էին կատարուած իրողութիւնը. լսել էին իրանց ձագերի ծըվծըվոցը և այժմ կատաղի

կերպով յարձակւում էին նրանց փրկելու և չարագործներին պատժելու համար։

Նրանք մօտենում էին որսորդին, փորձում էին կտցահարել նրան, բայց սուր հարուածներ ստանալով, յետ էին նահանջում. նորից լսւում էր ձագերի աղերսալի ծըվծըվոցը, նորից կրկնւում էր անյաջող յարձակումը, իսկ որսորդն աւելի ու աւելի էր վեր բարձրանում։ Աղբիւրի նման թափւում էր արիւնը արծիւների կրծքերից ու մէջքերից, բայց ծնողական սէրը ստիպում էր նրանց շարունակել օրհասական կռիւը…

Վերջապէս արծիւներից մէկն արիւնաքամ եղաւ և անդունդը գլորուեց. այդ ժամանակ միւս արծիւն սկսեց կտցահարել ցանցը, որպէսզի կտրէ։ Որսորդի սարսափն աւելացաւ. ընկերներն էլ զգացին վերահաս վտանգը և աւելացրին իրանց ջանքն ու ճիգը։ Վերջապէս որսորդն ազատուեց, բայց նրա դէմքը մեռելային գոյն էր ստացել, իսկ մազերը սպիտակել էին սաստիկ երկիւղից։ Դրանից յետոյ նա միշտ ցնցւում, սարսափում էր «արծիւ» խօսքը լսելիս։

58. ԱՆՁՆԱԶՈՀ ՀՈՎԻՒ

Արծիւն երբեմն յափշտակում է փոքրահասակ երեխաներին։ Այդ մասին մի բնագէտ հետևեալն է պատմում։

— Գարնանային օր էր. մի մատաղահաս կին երեխային նստեցրել էր արտի մէջ, իսկ ինքը բանջար էր քաղում։ Նա բաւական հեռացել էր երեխայից, երբ լսուեց նրա յանկարծակի ճիչը։ Մայրը յետ նայեց և ահ ու սարսափով տեսաւ իւր երեխային արծուի ճանկերում։ Արծիւն արագ-արագ վեր էր բարձրանում։

Թշուառ կինը աղմուկ բարձրացրեց, հովիւներին օգնութեան կանչեց։ Նրանցից մէկը գիւղ վազեց պարան բերելու, իսկ միւսները թագնուեցին ժայռի տակ… Արծիւն երեխային բարձրացրեց վերև և դրեց իւր բնի մէջ. այդ ժամանակ թագնուած հովիւները միաբե-

րան բղաւեցին, որի հետևանքն այն եղաւ, որ արծիւը վախեցած՝ բնից թռաւ և նստեց մօտակայ քարի վրայ։ Գիւղը գնացած հովիւը վերադարձաւ, պարանը տուեց ընկերներին և երկաթէ կօշիկներ հագնելով ժայռի վրայ բարձրացաւ։

Արծիւը հասկացաւ նրա մտադրութիւնը և յարձակուեց նրա վրայ. գիւղացին պաշտպանուեց քարերով և մահակով. այդ բանը կրկնուեց միքանի անգամ։ Վերջապէս հովիւը հասաւ արծուի բնին, գրկեց երեխային և ցոյց տուեց մօրը, որի ուրախութեանը չափ ու սահման չկար։ Սակայն արծիւը շարունակում էր յարձակումները... Հովուի ընկերը ժայռի գլխից բաց թողեց պարանը. ազատարարը պարանը փաթաթեց մէջքին և յաջողութեամբ իջաւ ներքև։

Երեխայի մայրը արտասուքն աչքերին շնորհակալ եղաւ անձնազոհ հովուից։

Բայց ամեն անգամ չի յաջողւում ազատել։ Շատ անմեղ երեխաներ զոհ են գնում արծուի ճանկերին։ Այսպէս, օրինակ, Ալպեան լեռներում 1882 թ. արծիւը փախցրեց հինգ տարեկան մի աղջկայ, բայց չկարողանալով այդ ծանրութիւնը պահել ճանկերում, բաց թողեց և աղջիկը, դիպչելով քարերին, ջախջախուեց։

Մի ուրիշ տեղում արծիւն իւր բունը տարաւ երկու տարեկան մի երեխայի և մինչև նրա հօր հասնելը, նա արդէն կտցահարել էր երեխայի աչքերը. սակայն դժբաղդութիւնը դրանով չվերջացաւ. երկու օրից յետոյ երեխան մեռաւ։

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

59. ԵՐԿԻՐԸ ԾԱՅՐ ՈՒՆԻ՞, ԹԷ ՈՉ



Երկրագունդ կամ գլոբուս

Երկիրը, որի վրայ մենք ապրում ենք, չափազանց մեծ է. Նրա վրայ շատ ցամաք կայ, իսկ ջրի տարածութիւնն աւելի ևս մեծ է։ Բայց որքան էլ մեծ լինի երկիրը, այնուամենայնիւ նա պէտք է որ մի ծայր ունենայ։ Եթէ մենք անընդհատ առաջ գնալու լինինք, օրինակ, մի որևէ ուղղութեամբ, ապա ուշ թէ շուտ՝ պէտք է որ հասնենք երկրի ծայրին։ Սակայն կան մարդիկ, որոնք շատ անգամ այդպիսի ճանապարհորդութիւններ են կատարել, բայց երբեք չեն տեսած, որ երկիրը ծայր կամ վերջ ունենայ. Նրանք միշտ վերադարձել են այն տեղը, որտեղից դուրս էին եկել, բայց միայն հակառակ կողմից։ Այսպէս, օրինակ, եթէ ճանապարհորդը մի որևէ տեղից դէպի արևելք էր ուղևորւում, միևնոյն տեղը նա վերադառնում էր արևմտեան կողմից։ Այսպիսի աշխարհաշրջիկ ճանապարհորդութիւններից գիտնական մարդիկ եկան այն համոզմունքին, որ մեր երկիրը

մի ահագին գնդի ձև ունի, ուրեմն և նա ծայր կամ վերջ չի կարող ունենալ, ինչպէս որ ծայր չունի նարինջը կամ գնդակը։

Երկրի հետ աւելի լաւ ծանօթանալու համար սովորաբար նրան ձևակերպում են փոքր դիրքով. դրա համար վեր են առնում մի որևէ գունդ և նրա վրայ նկարում են ցամաքը, ջուրը, լեռները, գետերը և երկրի մակերևոյթի միւս բոլոր մասերը ճիշտ այն դիրքով, ինչպէս որ նրանք գտնւում են երկրի վրայ։ Մի այսպիսի գունդ, որը ներկայացնում է մեր երկիրը փոքր դիրքով, կոչւում է երկրագունդ կամ գլօբուս։

60. ԻՆՉԻՑ ԵՆ ԱՌԱՋ ԳԱԼԻՍ ՑԵՐԵԿՆ ՈՒ ԳԻՇԵՐԸ

Ինչպէս յայտնի է, իւրաքանչիւր առաւօտ արեգակը ծագում է երկնքի արևելեան կողմից, մինչև կէսօր բարձրանում է դէպի վերև, իսկ կէսօրից յետոյ հետզհետէ սկսում է իջնել և վերջապէս երեկոյեան ծածկւում կամ մայր է մտնում արևմտեան կողմում։ Ուստի կարելի էր կարծել, որ ցերեկն ու գիշերը առաջ են գալիս նրանից, որ արեգակը շարժւում, շրջում է,—երբ նա բարձրանում է երկնքի երեսը, ցերեկ է լինում, իսկ երբ մայր է մտնում—գիշեր։ Առաջ մարդիկ այդպէս էլ կարծում էին։ Սակայն այդպէս չէ։ Երբ որ մենք, օրինակ, երկաթուղով ճանապարհ գնալիս դուրս ենք նայում վագոնի լուսամուտից, մեզ թւում է, թէ ճանապարհի երկու կողմերում գտնուած առարկաները—ծառերը, հեռագրի սիւները, տները և այլն,—արագ-արագ անցնում են մեր մօտով, իսկ մենք կանգնած ենք։ Ճիշտ այդպէս էլ մեզ թւում է, թէ արեգակն է շարժւում. բայց իսկապէս շարժւում է ոչ թէ արեգակը, այլ այն երկիրը, որի վրայ մենք բնակւում ենք։ Գիտնականներն ապացուցել են, որ երկրագունդը բզզանի նման անընդհատ պտըտւում է և քսանևչորս ժամուայ կամ մի օրուգիշերուայ մէջ նա մի շրջան է կատարում։ Երկրագնդի այդպէս պտըտուելու

ժամանակ արեգակը լուսաւորում է նրա երբեմն մէկ, երբեմն միւս կողմը. լուսաւորուած կողմում լինում է ցերեկ, իսկ հակառակ կողմում—գիշեր։

61. ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԵՐԸ ԵՒ ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐԸ

Երկրի մակերևոյթը բաղկացած է ցամաքից և ջրից։ Ցամաքը բաժանւում է հինգ մասի, որոնք աշխարհի մասեր են կոչւում. դրանք են՝ Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա։

Մեծութեան կողմից աշխարհի մասերի մէջ առաջին տեղը բռնում է Ասիան, երկրորդը՝ Ամերիկան, երրորդը՝ Աֆրիկան, չորրորդը՝ Եւրոպան և հինգերորդը՝ Աւստրալիան։

Եւրոպայում են գտնւում աշխարհիս ամենաքաղաքակիրթ տէրութիւնները—Անգլիան, Ֆրանսիան, Եւրոպական Ռուսիան, Գերմանիան, Իտալիան և այլն։

Կովկասը, որտեղ մենք ենք ապրում, գտնւում է Ասիայում։ Ասիայումն է նաև բոլոր քրիստոնեաների համար սրբազան երկիրը—Պաղէստինը, որտեղ ծնուել, ապրել և չարչարուել է մեր Տէր Յիսուս Քրիստոսը։ Մեր Փրկչի Ս. Գերեզմանը Պաղէստինի գլխաւոր քաղաքում—Երուսաղէմումն է։ Աֆրիկայում գտնւում է Եգիպտոսը, որտեղից Մովսէս մարգարէն դուրս բերեց հրէաներին և առաջնորդեց դէպի Աւետեաց երկիրը։

Ջրի ահագին տարածութիւնն էլ մարդիկ բաժանում են հինգ մասի, որոնք ովկիանոս են կոչւում. դրանք են՝ Հիւսիսային և Հարաւային սառուցեալ ովկիանոսներ, Մեծ կամ Խաղաղ ովկիանոս, Ատլանտեան ովկիանոս և Հնդկական ովկիանոս։ Ովկիանոսների այն մասը, որոնք մտնում են ցամաքի մէջ, ծովեր են կոչւում։ Այդպիսի ծովերից մէկը, Սև ծովը, ողողում է մեր երկրի, Կովկասի, արևմտեան ափերը. Նրա վրայով մեր երկրի բերքերը գնում են դէպի հեռաւոր աշխարհներ. միևնոյն ճանապարհով մեզ մօտ են գալիս և ուրիշ երկրների արտադրութիւններ։

62. Տ Ի Ե Զ Ե Ր Ք

Պարզ, անամպ եղանակին երկնքի վրայ ցերեկները մենք տեսնում ենք արեգակը, իսկ գիշերները—փայլուն աստղերի մի անհամար բազմութիւն և ժամանակ առ ժամանակ լուսինը։ Երբեմն էլ, տասնեակ կամ հարիւրաւոր տարին մի անգամ, երկնքի երեսին երևում են աստղեր՝ մի կամ միքանի պոչով. դրանք գիսաւոր աստղեր են կոչւում։ Արեգակը, լուսինը, աստղերը, գիսաւորները երկնային մարմիններ են։

Արեգակը մեզ երևում է՝ իբրև մի փոքրիկ փայլուն շրջան. բայց իսկապէս մի ահագին գունդ է և չափազանց մեծ մեր երկրից։ Իսկ եթէ նա մեզ այդքան փոքր է երևում, այդ միայն նրանից է, որ մեզանից շատ ու շատ հեռու է։ Նրա հեռաւորութիւնը ցոյց տալու համար բաւական է ասել, որ թնդանօթի գնդակը, որը մի րոպէում տասնևչորս վերստ է անցնում, երկրից մինչև արեգակը քսան տարուայ մէջ միայն կարող կըլինէր հասնել։

Լուսինն էլ նոյնպէս մեզ երևում է՝ իբրև մի փոքրիկ շրջան. սակայն նա էլ, արեգակի նման, գնդաձև է։ Լուսինը խաւար մարմին է և նրա տուած լոյսը ոչ թէ սեպհական է, այլ արագակից ստացած։ Լուսինը միքանի անգամ փոքր է երկրից, իսկ եթէ նա իւր մեծութեամբ մեզ համարեա արեգակի չափ է երևում, այդ միայն նրանից է, որ նա երկրին աւելի մօտ է, քանթէ արեգակը։ Դիտելով լուսինը, մենք նկատում ենք, որ նա իւր տեսքով փոփոխւում է – երբեմն երևում է եղջիւրի ձևով, երբեմն կիսաշրջանի, երբեմն ամբողջ շրջանի, իսկ երբեմն էլ ամենևին չի երևում։ Գիտնականները հաստատել են, որ լուսնի այդ փոփոխութիւնները կամ, ինչպէս ասում են, երևոյթները առաջ են գալիս նրանից, որ լուսինն անընդհատ պտըտւում է երկրի շուրջը։ Այսպէս պտըտուելիս նա արեգակի և երկրի վերաբերմամբ զանազան դիրքեր է ընդունում։ Զննենք նրա դիրքերից միայն չորսը, որոնք նկարի վրայ նշանակուած են 1, 2, 3, և 4 թուանշաններով։ Այսպէս՝ առաջին դիրքի ժամանակ, երբ լուսինը լինում է արեգակի և երկրի մէջ, դէպի երկիրը դարձած է լինում նրա խաւար կողմը և այն ժամանակ մենք լուսինը չենք տեսնում. սա կոչւում է ծընունդ լուսնի։ Այն միջոցին, երբ լուսինը շարժւում է առաջին դիրքից դէպի երկրորդը, երկրի վրայից հետզհետէ տեսանելի է դառնում լուսնի լուսաւորուած մասը – սկզբում եղջիւրի ձևով, իսկ յետոյ այդ եղջիւրն աւելի և աւելի մեծանում է. և երբ նա հասնում է երկրորդ դիրքին, այն ժամանակ արդէն երևում է նրա լու-



Լ ո ւ ս ն ի ե ր և ո յ թ ն ե ր ը

ւաւորուած մասի կէսը կամ կիսաշրջանը, որը կոչւում
առաջին քառորդ լուսնի։ Յետոյ լուսինը հետզհետէ եր-
րորդ դիրքից շարժւում է դէպի երրորդը և նրա տեսա-
ելի մասն աւելի և աւելի մեծանում է, այնպէս որ,
րբ երրորդ դիրքին է հասնում, այն ժամանակ երկրին
արձած է լինում ամբողջովին նրա լուսաւորուած մասը
ամ ամբողջ շրջանը. սա կոչւում է լրումն լուսնի։ Դրա-
ից յետոյ լուսնի տեսանելի մասն սկսում է փոքրանալ,
ուազել, իսկ երբ նա հասնում է չորրորդ դիրքին, մենք

դարձեալ տեսնում ենք նրա կիսաշրջանը, որը կոչւում է վերջին քառորդ լուսնի:

Երկնքի աստղերի մէջ կան այնպիսիները, որոնք սեպհական լոյս չունին. նրանք, ինչպէս և մեր երկիրը, խաւար մարմիններ են, լոյսն ու ջերմութիւնը ստանում են արեգակից և, երկրի նման, պտըտւում են նրա շուրջը: Այդ երկնային մարմինները կոչւում են մոլորակներ:

Գիսաւոր աստղերն էլ, մոլորակների նման, պտըտւում են արեգակի շուրջը: Սակայն նրանք իրանց այդ ճանապարհորդութեան միջոցին այնպիսի մեծ շրջան են կատարում, որ նրանցից շատերը տասնեակ կամ հարիւրաւոր տարիներ են գործ դնում դրա վրայ. այդ պատ-



Գիսաւոր աստղ

ճառով էլ գիսաւորները երկնքի երեսին երևում են ժամանակ առ ժամանակ, երբ բաւական մօտեցած են լինում արեգակին:

Երկնքի երեսին սփռուած անհամար աստղերը ճիշտ այնպիսի լուսատուներ են, ինչպէս և մեր արեգակը. բայց նրանք մեզանից անհամեմատ հեռու են, քանթէ

արեգակը, ուստի և կէտերի նման են միայն երևում մեզ. նրանցից շատերը առանձին գործիքներով միայն կարելի է տեսնել:

Արեգակը, լուսինը, մոլորակները, գիսաւոր և միւս աստղերը,--այս երկնային մարմինների անհամար բազմութիւնը, որ Ամենագէտ Արարիչը սփռել է երկնքի երեսին, կոչւում է Աշխարհ կամ Տիեզերք: Տիեզերքն անսահման է: Եւ այս ամբողջ Աշխարհն ստեղծել է Ամենակարող և Ամենագէտ Աստուած իւր մի խօսքով—ոչնչից:

63. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԻՒՏԸ

Ա.

Մեզանից չորս հարիւր տարի առաջ Ամերիկան դեռ մի անյայտ երկիր էր: Եւրոպայում ոչ ոք չգիտէր նրա գոյութեան մասին: Բայց գտնուեց մի մարդ, որը իւր ստացած գիտութիւնների շնորհիւ եկաւ այն համոզմունքին, թէ Ատլանտեան ովկիանոսի արևմտեան կողմում պէտք է որ մի ընդարձակ երկիր լինի: Այդ մարդը Քրիստափոր Կոլումբոսն էր: Նա իւր մտքումը դրեց անձամբ ճանապարհորդել դէպի այն կողմերը և գտնել այդ երկիրը: Նա շատ այս ու այն կողմն ընկաւ իւր մտադրութիւնը կատարելու համար միջոցներ ճարելու, բայց ամէն տեղ անյաջողութեան էր հանդիպում. վերջապէս նրան յաջողուեց Իսպանիայի թագաւորից և թագուհուց օգնութիւն ստանալ: Նրան տուին երեք նաւ՝ հարիւր քսան մարդով, փող և պաշարեղէն:

Կոլումբոսի փոքրիկ նաւատորմիղը ճանապարհ ընկաւ Իսպանիայից դէպի արևմուտք: Նրա ճանապարհորդակիցները համարձակ և գործունեայ մարդիկ էին, բայց ընդարձակ և անծանօթ ծովը դուրս գալով նրանց միտքը փոխուեց. միայն Կոլումբոսն էր համոզուած, որ իւր ձեռնարկութիւնը յաջողութիւն պէտք է ունենայ:

Կանարեան կղզիների մօտ քիչ հանգստանալուց յե-

տոյ՝ շուտով փչեց յաջողակ քամին, առագաստները լցուեցան և նաւերը լողացին դէպի արևմուտք։ Ծանօթ երկրները չքացան ծովագնացների յետևը. Նրանց առաջ տարածւում էր մի անսահման, անծանօթ ովկիանոս։ Լողում են մի, երկու օր՝ ոչինչ չի երևում, բացի երկնքից ու ծովից։ Վերջապէս հինգերորդ օրը թռչուններ երևացին — սպիտակ գանգրաւոր արագիլ և սպիտակ խաղտնիկ։ Ծովագնացներն ուրախացան, չգիտենալով, թէ ափից որքան հեռու կարող են թռչել այդ թռչունները։ Լողացին դարձեալ միքանի օր. ծովագնացների սրտում յոյսն հետզհետէ սկսեց նուազել։ Շարունակ փչում էր յաջողակ քամի, բայց քամու այս միօրինակութիւնը վախեցնում էր Կոլումբոսի մարդկանց։ «Ի՞նչ կըլինի մեր վիճակը,— մտածում էին նրանք,—երբ քամին այսպէս շարունակ փչէ մի կողմ։ Այսպիսով, ճիշտ է, մենք շատ կըհեռանանք մեր հայրենիքից, բայց ինչպէս պէտք է վերադառնանք»։

Քրիստափոր Կոլումբոս

Բ.

Շուտով ծովի մակերևոյթի վրայ շատ խոտեր երևացին և որքան առաջ էին լողում իսպանացիք դէպի արևմուտք, այնքան աւելի շատանում էր այդ ծովային

խոտի քանակութիւնը, այնպէս որ ծովը մի կանաչ հովտի կերպարանք ստացաւ։ Այս բոյսերից միքանիսն այնտեսակից էին, որոնք, թւում էր, թէ միայն ծովափում կարող էին բուսնել. Նրանք այնքան թարմ ու կանաչ էին, որ կարծես հէնց նոր էին բաժանուել հողից։ Շատ անգամ նաւերի մօտ թռչուններ էին երևում, իսկ թռչող ձկներն անդադար թռչկոտում էին ծովի մակերևոյթի վրայ։ Սակայն անցաւ ահա յիսուն օր նաւերի դուրս գալուց յետոյ և չնայելով եզերքի մօտաւորութեան բոլոր նշաններին, ցամաք դեռ չէր երևում։

Անցաւ դարձեալ միքանի օր և ծովային խոտերն այնքան բազմացան, որ իսպանացիք սկսեցին երկիւղ կրել, թէ մի գուցէ ստորջրեայ ժայռերի դիպչեն նաւերը։ Այդ երկիւղը փարատելու համար՝ ծովապետը հրամայեց կապարալար ձգել. ձգեցին, բայց յատակին չհասաւ։ Երեք-չորս օրից յետոյ Կոլումբոսի ստորադրեալներն սկսեցին խումբ-խումբ ժողովուել և համարեա բարձր ձայնով ցաւ յայտնել, որ իրանց վիճակը հաւատացել են մի յամառ մարդու, որը ցանկանում է, ինչ էլ որ լինի, իւր անունը հռչակել։

Անցաւ էլի միքանի օր, իսկ ափը դեռ չէր երևում։ Ծովագնացներն իրանց համբերութիւնը կորցրին և նաւերի վրայ խռովութիւններ սկսուեցան։ Բոլորը պահանջում էին, որ Կոլումբոսն յետ դառնայ. ծովապետի դրութիւնը շատ յուսահատական էր։ Բայց, բարեբաղդաբար, հետևեալ օրը ցամաքի նշաններն այնքան շատացան, որ ամենաթերահաւատներն անգամ սկսեցին հաւատալ. Ջրի երեսին երևաց պտուղներով ծածկուած մի ճիւղ, որը կարծես հէնց նոր էր պոկուած ծառից, և վերջապէս գտնուեց մի գաւազան, որի վրայի նշանները ցոյց էին տալիս, որ մարդու ձեռք էր դիպած նրան։ Նորից բոլորն սկսեցին դէպի առաջ նայել և ամեն ոք կամենում էր, որ առաջ ինքը տեսնի ցամաքը։

Գ.

Գիշերը նաւի տախտակամածի վրայ մնալով, Կոլումբոսն աչքը արևմուտքից չէր հեռացնում. նա զգում էր, որ եթէ մի օր էլ անցնի այսպէս, ինքն այլևս անկարող կըլինի հնազանդութեան մէջ պահել իւր նաւաստիներին. մի օր ևս,— և նրա ամբողջ կեանքի նախագիծը յաւիտեանս կըկործանուի։ Յանկարծ, երեկոյեան ժամը տասին, Կոլումբոսին այնպէս թուաց, թէ հեռւում մի կրակ է փայլում։ Վախենալով, թէ մի՛ գուցէ խաբուած լինի ինքը, նա կանչեց ճանապարհորդակիցներից մէկին, որը նոյնպէս հաստատեց այդ բանը։ Այնուամենայնիւ երկուսն էլ լռում էին, որովհետև կրակը երբեմն երևում, երբեմն կորչում էր։ Երկիւղի և յուսոյ մէջ գտնուելով, ծովապետը նայում էր այդ փայլփլող կրակին մինչև առաւօտեան ժամը երկուսը, երբ, վերջապէս, թնդանօթի ձայնը նաւերի մէկից յայտնեց ցամաքի երևալը, որի եզերքը պարզ որոշւում էր ծովային երկու մղոն հեռաւորութիւնից։

Այսպէս գլուխ բերեց Կոլումբոսը իւր մեծ ձեռնարկութիւնը և բացեց այն գաղտնիքը, որ երկար ժամանակ ծածկել էր ովկիանոսը։ Կոլումբոսի երազը, վերջապէս, իրագործուեց. նա իւր համար այնպիսի փառք ձեռք բերեց, որը չի ջնջուիլ և կըմնայ մինչև աշխարհի վերջը։

Դ.

1492 թուականի հոկտեմբերի 12-ին Կոլումբոսը տեսաւ Նոր-Աշխարհը։ Իսպանիացոց առաջ ընկած էր մի մեծ և գեղեցիկ կղզի՝ այն աստիճան թարմ, կանաչ և ծառապատ, որ կարծես մի ահագին այգի լինէր։ Կղզու վրայ կային և մարդիկ. նրանք վազում էին դէպի ափը և մեծ զարմանքով ու երկիւղով նայում մօտեցող նաւերին։ Ծովափին մօտենալով՝ իսպանացիք զուարճանում էին փառահեղ անտառների գեղեցկութեամբ. ծառերի վրայ

կային շատ գեղեցիկ, իսպանացոց անծանօթ ծաղիկներ ու պտուղներ։ Մաքուր և հաճելի օդը և արտասովոր կերպով վճիտ ծովն այս պատկերին մի այնպիսի հրապուրիչ գեղեցկութիւն էին տալիս, որ Կոլումբոսի զգայուն սիրտը սաստիկ յուզուեց։ Ափը դուրս գալով՝ նա ծունկ չոքեց, համբուրեց հողը և արտասուքն աչքերին գոհացաւ Աստծուց։ Բոլորը հետևեցին նրա օրինակին և ամենքի սիրտը լիքն էր գոհութեան զգացմունքով։ Կոլումբոսը վեր կացաւ, հանեց սուրը, բարձրացրեց արքայական դրօշակը և հանդիսաւոր կերպով կղզին իսպանական թագաւորների տիրապետութեան տակ ընդունեց։ Կղզին կոչեց Սան-Սալվատոր, որ նշանակում է ս. Փրկիչ։ Ապա նա պահանջեց, որ իւր ուղեկիցները հաւատարմութեան երդում անեն իրան, որպէս ծովապետի և փոխարքայի։ Բոլորն շտապում էին արտայայտել Կոլումբոսին իրանց սէրն ու անձնուիրութիւնը,— ոմանք գրկում էին նրան, միւսները համբուրում նրա ձեռները, իսկ նրանք, որոնք քիչ առաջ իրանց տրտունջներով և անվստահութեամբ վշտացրել էին նրան, այժմ արտասուքն աչքերին նրանից ներողութիւն էին խնդրում։

Ե.

Կղզու բնակիչները, առաւօտեան աղօտ լոյսի մէջ նկատելով նաւերը, սկզբում կարծեցին, թէ դրանք ծովի խորքից դուրս եկած հրէշներ են։ Նաւերի արագ ընթացքը, նրանց առագաստները, որոնք նման էին ահագին թռչունի թևերի, անպատմելի հիացումն էին պատճառում վայրենիներին։ Բայց երբ նրանք տեսան, որ նաւերից ինչ-որ անծանօթ, փայլուն հագուստներով սպիտակ մարդիկ են դուրս գալիս, սկսեցին փախչել դէպի անտառ։ Սակայն քիչ յետոյ նրանք սիրտ առան և սկսեցին քիչ-քիչ մօտենալ իսպանացիներին՝ ամենախոր յարգանք արտայայտելով. նրանք չոքում էին և ձեռքերը

տարածում դէպի նորեկները, որոնց կարծես կապոյտ երկնքից իջած աստուածներ էին համարում։

Վայրենիների արտաքինից պարզ երևում էր, որ նրանք չափազանց աղքատ էին և կրթութիւնից զուրկ։ Նրանք մերկ էին և մարմինները ներկոտած ինչ-որ փայլուն ներկերով. նրանց կաշին պղնձագոյն էր, իսկ մօրուք ամենևին չունէին. գլխի մազերը կոկ էին և երկար, դէմքի գծագրութիւնը բաւական դուրեկան։

Վայրենիները շատ պարզամիտ և բարեսիրտ էին, նրանց միակ զէնքը նիզակն էր, որի ծայրին երկաթէ գլուխների տեղ անցկացրած էին քարեր, կենդանիների ատամներ և ձկան փշեր։ Երկաթ, կարծես թէ չէին տեսած նրանք, որովհետև, երեխաների նման անզգուշաբար վերցնելով սրերը, նրանք իրանց ձեռքերը կտրատում էին։ Վայրենիները մեծ գին էին տալիս ամենահասարակ նուէրներին և մեծ հաճոյքով վերցնում էին իսպանացիներից ապակեայ հուլունքներ և գոյնզգոյն քարեր, նրանց փոխարէն տալով թութակներ և համեղ պտուղներ։

Զ.

Ջրի պաշար վեր առնելով՝ Կոլումբոսը առաջ լողաց և առանց կանգ առնելու անցաւ բազմաթիւ հրաշալի կղզիների միջով։ Վերջապէս նա մօտեցաւ Մեծ Կուբա կղզուն և մի գեղեցիկ գետի բերանի մօտ խարիսխ ձգեց։ Նաւերը մօտենալու ժամանակ կղզու բնակիչները թողին իրանց խրճիթները և ցրուեցան։ Ծովապետն այցելեց այդ խրճիթներից երկուսը և այնտեղ շատ հասարակ իրեղէններ գտաւ— արմաւենու թելերից հիւսած մի զոյգ ուռկան, ոսկրից շինած կեռեր և բացի դրանից, շներ որոնք աչքի էին ընկնում նրանով, որ ամենևին չէին հաչում։ Այդտեղից իսպանացիք առաջ լողացին և տեսան դարձեալ միքանի կղզի և նրանցից մէկի վրայ, որ Կոլումբոսը Իսպանոլիա կամ փոքրիկ Իսպանիա կոչեց, շինեցին մի ամրոց և հիմնեցին իսպանական առաջին գաղութը։

Ամրոցում իւր ուղեկիցներից երեսուն հոգի թողնելով, Կոլումբոսը ճանապարհ ընկաւ դէպի Իսպանիա։ Ճանապարհին նա մի այնպիսի փոթորկի հանդիպեց, որ ազատուելու յոյսը կտրեց, ուստի իւր գիւտի մասին մանրամասն գրեց մի մագաղաթի վրայ, որը կոխելով շշի մէջ՝ բերանը պինդ կապեց և ձգեց ծովը։ Սակայն փոթորիկը անցաւ և մարտի 14-ին Կոլումբոսի նաւատորմիղը զանգահարութեամբ մտաւ Իսպանիայի նաւահանգիստներից մէկը։ Թագաւորը և թագուհին մեծ պատուով ընդունեցին Կոլումբոսին և նրան նշանակեցին փոխարքայ նոր գտնուած երկրների, որոնք յետոյ Ամերիկա կոչուեցան։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ

64. ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Այն ժամանակները, երբ Յիսուս Քրիստոս քարոզում էր Հրէաստանում և հրաշքներ էր գործում, մեր Աբգար թագաւորը մի անբուժելի ախտով ծանր հիւանդ էր։ Լսելով Քրիստոսի հրաշագործութիւնների մասին, բժիշկների օգնութիւնից յոյսը բոլորովին կտրած՝ Նա դեսպանների ձեռքով նամակ է ուղարկում Փրկչին, թախանձագին խնդրելով, որ գայ իւր Եդեսիա քաղաքը և բժշկէ իրան։ «Ես լսել եմ,— գրել էր թագաւորը իւր նամակում, — որ դու առանց դեղի բժշկում ես հիւանդներին — կոյրերի աչքերը բաց ես անում, կաղերին ոտ ես տալիս, բորոտներին սրբում ես, դիւահարներին առողջացնում և մինչև անգամ մեռելներին կեանք ես պարգևում։ Այս ամենը լսելով, ես ինքս ինձ ասացի, որ դու կամ երկնքից իջած Աստուած ես և կամ Աստուծոյ Որդի։ Ուստի աղաչում եմ Քեզ, եկ, ինձ բժշկիր։ Բացի այդ՝ ինձ ասել են նոյնպէս, որ հրէաները հալածում են քեզ. ես ունիմ մի փոքրիկ քաղաք, որը մեզ երկուսիս էլ բաւական է և Քեզ այստեղ ոչ ոք չի անհանգստացնիլ»։ Դեսպանների հետ միասին Աբգար թագաւորը ուղարկում է նաև մի նկարիչ, որ եթէ Յիսուս ինչ-ինչ պատճառներով չկամենայ գալ, Նրա պատկերը նկարէ և իրան բերէ։

Յիսուս, ստանալով Աբգարի նամակը, ասում է,— «Երանի՜ նրան, որ դեռ ինձ չտեսած՝ հաւատում է»։ Յետոյ պատուիրում է Թովմա առաքեալին Աբգարին գրել, որ Ինքը չէ կարող գալ, բայց խոստանում է իւր

համբարձումից յետոյ աշակերտներից մէկին ուղարկել, որ նրան բժշկէ։

Նկարիչը, երբ տեսաւ՝ որ Յիսուս գալու չէ, սկսեց պատկերը նկարել, բայց որքան աշխատում էր, այդ բանը չէր յաջողւում նրան։ Յիսուս, նկատելով այդ, վեր առաւ մի կտոր մաքուր կտաւ, ծածկեց երեսին և իսկոյն նրա վրայ նկարուեց Իւր պատկերը։ Այդ ձեռագործ պատկերը, որ Դաստառակ է կոչւում, տարուեց Եդեսիա և երկար ժամանակ պահւում էր այնտեղ։

Յիսուսի համբարձումից յետոյ Նրա եօթանասուն երկու աշակերտներից մէկը, Թադէոսը, եկաւ Հայաստան, բժշկեց թագաւորին և մկրտեց թէ արքայական ընտանիքը և թէ պալատականներից ու քաղաքի բնակիչներից շատերին։ Թադէոս առաքեալը, Ադդէ անունով մի բարեպաշտ մարդու եպիսկոպոս ձեռնադրելով, իւր տեղ թողեց Եդեսիա, իսկ ինքը գնաց Հայաստանի միւս մասերում ևս քարոզելու, բայց շուտով նահատակուեց Աբգարի քրոջորդի Սանատրուկ իշխանի ձեռքով. սա թէպէտ սկզբում ընդունել էլ քրիստոնէութիւն, բայց շուտով էլի ուրացաւ։ Թադէոսի հետ Սանատրուկի հրամանով նահատակուեց և նրա հարազատ դուստրը, Սանդուխտը, որը՝ չնայելով հօր յորդորներին, չկամեցաւ թողնել քրիստոնէութիւնը և նորից կուռք պաշտել։

Թադէոսից յետոյ Հայաստան եկաւ Բարդուղիմէոս առաքեալը, քարոզեց, բազմացրեց հաւատացեալների թիւը, շինեց եկեղեցիներ և ապա նահատակուեց նոյն կռապաշտ Սանատրուկի ձեռքով։

Այսպիսով Հայաստանում հիմնւում է առաջին ***Քրիստոնէական եկեղեցի։***

Թէպէտ Աբգարի յաջորդներն ամեն կերպ աշխատում էին քրիստոնէութեան տարածման առաջն առնել, սակայն Հայաստանի առաջին լուսաւորիչների, Թադէոսի և Բարդուղիմէոսի ցանած բարի սերմերը և նրանց թափած արիւնն ապարդիւն չանցան։ Շուտով հայերի

մէջ ծնուեց մէկը, որի ջանքերով կռապաշտութիւնն իսպառ հալածուեց Հայաստանից։ Այդ մարդը—ս. Գրիգոր Լուսաւորիչն էր։

65. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Ա.

Երբ Հայոց Տրդատ թագաւորը դեռ ևս Հռոմ քաղաքումն էր, նրա մօտ ծառայում էր Գրիգոր անունով մի մարդ։ Սա այն Անակ Պահլաւունու որդին էր, որը որսի ժամանակ սպանեց Տրդատի հօրը, Խոսրով թագաւորին, և ինքը փախչելիս խեղդուեց Երասխ գետում, իսկ նրա ընտանիքն սպանուեց մահամերձ թագաւորի հրամանով։ Այս կոտորածից ազատուեց միայն Գրիգորը, որին նրա դայեակը, Սոփիան, ծածուկ փախցրեց Կեսարիա քաղաքը։ Սոփիան քրիստոնեայ էր, ուստի և Գրիգորն էլ կրթուեց քրիստոնէական ուսման մէջ։ Չափահաս դառնալով՝ նա ամուսնացաւ Մարիամ անունով մի քրիստոնեայ աղջկայ հետ և նրանից ունեցաւ երկու զաւակ—Արիստակէս և Վրթանէս։ Լսելով, որ իւր հայրն է սպանել Խոսրով թագաւորին, նա բաժանուեց կնոջից և գնաց Հռոմ, որպէսզի Խոսրովի որդու՝ Տրդատի մօտ ծառայելով, քաւէ հօր յանցանքը։ Գրիգորը մնաց Տրդատի մօտ, Հռոմում, այնքան, մինչև որ նա հռոմայեցոց կայսրից թագ ստացած՝ զօրքով վերադարձաւ Հայաստան իւր հօր գահը բարձրանալու և նրա հետ եկաւ հայրենիք (286 թ.)։ Յաջողութեամբ հասնելով Հայոց Երիզա քաղաքը՝ Տրդատը շնորհակալութեան զոհ է մատուցանում Անահիտ դիցուհուն և պատուիրում Գրիգորին, որ ծաղկէ պսակ դնէ կուռքի գլխին, բայց նա բացարձակ կերպով մերժում է այդ, յայտնելով, որ ինքը քրիստոնեայ է։ Զայրացած թագաւորը հրամայում է սարսափելի տանջանքների ենթարկել նրան. ապա տեղեկանալով, որ Գրիգորը իւր հօրն սպանող Անակի որդին է, ձգել

տուեց մահապարտների Խոր-Վիրապը. Գրիգորը Խոր-Վիրապում մնաց տասնևչորս տարի և կերակրւում էր մի պառաւ կնոջ ձեռքով, որն օրական մի կտոր հաց էր ձգում Վիրապը։

Բ.

Այդ ժամանակներն էր, որ Տրդատի հրամանով Վաղարշապատում կատարուեց Հռոմից փախած երեսուն և հինգ կոյսերի նահատակութիւնը։ Այս անիրաւ արիւնահեղութեան համար Աստուծոյ պատիժը հասաւ թագաւորին և պալատականներին։ Նրանք կորցրին իրանց բանականութիւնը և համարեա անասնական բնաւորութիւն ստացան։ Ապա Տրդատի քոյր Խոսրովադուխտի կրկնակի տեսիլքներից դրդուած՝ Խոր-Վիրապից հանեցին Գրիգորին, որին սկզբում մեռած էին համարում։ Գրիգորը նախ թաղել տուեց Վաղարշապատի փողոցներում ընկած կոյսերի մարմինները, յետոյ բժշկեց թագաւորին և պալատականներին և վաթսուն ու վեց օր շարունակ նրանց քարոզեց քրիստոնէական հաւատը։ Կարճ ժամանակից յետոյ թագաւորը՝ նախարարների և իշխանների հաւանութեամբ՝ Գրիգորին ընտրեց ընդհանուր քահանայապետ և ուղարկեց Կեսարիա, որ Ղևոնդ արքեպիսկոպոսից կաթուղիկոս ձեռնադրուի։ Կեսարիայից Հայաստան վերադառնալով՝ Ս. Գրիգորը քանդել տուեց բազմաթիւ մեհեաններ և նրանց տեղ եկեղեցիներ ու վանքեր կանգնեցրեց։ Հէնց այդ ժամանակներն էլ նա հիմնեց հռչակաւոր Ս. Կարապետի վանքը Մուշ քաղաքի մօտ, որը մինչև օրս էլ յայտնի ուխտատեղի է Հայաստանում. այստեղ ամփոփուած է ս. Յովհաննէս Մկրտչի մասունքը։ Երբ Տրդատն իմացաւ, որ ս. Գրիգորը վերադարձել է Կեսարիայից, իւր իշխաններին, զօրքը և բազմաթիւ ժողովուրդ հետն առած՝ ընդառաջ դուրս եկաւ։ Ս. Գրիգորը երեսուն օր ծոմ պահել տուեց նրանց, որից յետոյ թագաւորին, իշխաններին, զօրքը և

բազմաթիւ ժողովուրդ մկրտեց Եփրատ գետում։ Այնուհետև նա Թագաւորի հետ շրջեց Հայաստանի բոլոր կողմերը, մկրտեց ժողովրդին, շինեց բազմաթիւ եկեղեցիներ, վանքեր, կուսանոցներ և դպրոցներ բաց արեց։ Վաղարշապատ թագաւորանիստ քաղաքում, ի միջի այլոց, նա հիմնեց ս. Էջմիածնի տաճարը (303 թուականին), որը դարձաւ ամենայն Հայոց Հայրապետութեան Մայր Աթոռ։ Ս. Էջմիածինը մինչև օրս էլ կանգուն է և համայն հայերի միութեան կենդրոնն է կազմում։ Այստեղ Ամենայն Հայոց Կաթուղիկոսն օրհնում է սրբալոյս միւռոնը։ Այստեղ է կատարւում Կաթուղիկոսների օծումը և եպիսկոպոսների ձեռնադրութիւնը։ Այստեղ են գտնւում մեր ազգային սրբութիւնները—ս. Գեղարդը, որը Թադէոս առաքեալը իւր հետ բերել էր Հայաստան, ս. Գրիգոր Լուսաւորչի աջը, Կենարար Փայտը և այլն։

Այսպիսով Ս. Գրիգորն ամեն կողմ կենսատու լոյս տարածեց, որի համար և կոչուեց Լուսաւորիչ Հայոց աշխարհի։

Կեանքի վերջին տարիներում (331 թ.) Ս. Գրիգոր Լուսաւորիչը, պաշտօնն յանձնելով Արիստակէս որդուն, քաշուեց Սեպուհ լեռան վրայ գտնուած Մանեայ այրը, ուր և կնքեց իւր մահկանացուն։

66. ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԸ

Հայաստանում առաջին դպրոցները հիմնեց Գրիգոր Լուսաւորիչը, որն ամեն կերպ աշխատում էր հաստատել քրիստոնէութիւնը հայերի մէջ և լուսաւորել հայրենակիցներին։ Այդ դպրոցներում ուսումն աւանդւում էր յոյն և ասորի լեզուներով, որովհետև չկային հայոց սեպհական տառեր, չկային հայերէն գրքեր։ Ուսումնատու աշակերտները դժուարանում էին սովորել, չէին կարողանում իւրացնել օտար լեզուներով աւանդուող ուսումը։ Ժողովուրդն էլ միշտ անմխիթար էր դուրս գալիս եկեղեցուց, որտեղ ժամասացութիւնը կատարւում էր իրան

անհասկանալի լեզուով։ Ս. Գիրքը և եկեղեցական կանոնները գրուած էին յունարէն կամ ասորերէն։ Այս մեծ պակասութեան մասին առաջինը հոգս քաշեց Մեսրոպ Մաշտոցը, որ Տարօն գաւառի Հացիկ գիւղից էր։ Մեսրոպը ուսեալ մարդ էր. նա գիտէր յունարէն, ասորերէն և պարսկերէն. միքանի տարի նա ծառայել էր Թագաւորի պալատում քարտուղարի պաշտօնով։ Ուսումնական Մեսրոպը կամենում էր օգտաւէտ լինել իւր ազգին. ծառայութիւնն արքունիքում ձանձրացրել էր նրան։ Նա հեռացաւ աշխարհի վայելչութիւններից և ճգնաւոր դարձաւ։ Նա տեսնում էր, որ հայերը անուս են և տգէտ, չունին սեպհական գրքեր. տեսնում էր, որ նրանք աւելի կռապաշտ են, քանթէ քրիստոնեայ, որովհետև Քրիստոսի քարոզները չէին լսում իրանց մայրենի լեզուով։ Հաւաքելով իւր շուրջը բազմաթիւ աշակերտներ՝ նա աշխատում էր նրանց օգնութեամբ լուսաւորութիւն տարածել հայերի մէջ և հաստատել քրիստոնէութիւնը։ Ծանր էր նրա աշխատանքը, նա ստիպուած էր Ս. Գրքից կարդացածը թարգմանել մայրենի լեզուով։ Երկար այսպէս գործելով բանիմաց Մեսրոպն համոզուեց, որ այսպէս անկարելի է շարունակել լուսաւորութեան գործը, հարկաւոր է մայրենի լեզուի տառեր հնարել։

Ս. Մեսրոպ

Բ.

Մեսրոպն յայտնում է իւր խորհուրդն այն ժամանակուայ Հայոց կաթուղիկոսին, մեծն Սահակ Պարթևին,

որը՝ հասկանալով սեպհական տառերի անհրաժեշտութիւնը՝ Վաղարշապատում գումարում է հոգևորականների ժողով, խորհրդակցելու հայոց նշանագրերի մասին։ Այն ժամանակուայ մեր Վռամշապուհ թագաւորն էլ նախանձախնդիր էր այս բանին. ինքն անձամբ ժողովին ներկայ լինելով՝ նա յայտնեց, որ Ասորիքում եղած ժամանակ լսել է, թէ մի ասորի եպիսկոպոսի մօտ գտնւում են հայոց լեզուի տառերը։ Սահակ կաթուղիկոսն ու Վռամշապուհ թագաւորը դեսպան են ուղարկում այդ եպիսկոպոսի մօտ, որը և բերեց յիշեալ տառերը. Մեսրոպը փորձեց գործածել դրանք, դասաւորեց յունաց տառերի կարգով, միքանի տարի աշխատեց սովորեցնել աշակերտներին, բայց իզուր—փորձն անօգուտ եղաւ։ Բերած տառերը բաւական չէին հայոց բառերի բոլոր հնչիւններն արտայայտելու համար. պակաս էին եօթը բաղաձայն և եօթը ձայնաւոր տառ։

Ս. Սահակ

Մեսրոպը չվհատուեց. նա դիմեց շատ տեղեր իւր նպատակին հասնելու համար. գնաց Եդեսիա, Պլատօն անունով մի ուսեալի մօտ, գնաց Սամոս կղզին Հռոփանոս ճարտար գրողի մօտ, բայց նրա ջանքերը զուր եղան, —ոչ մէկից չկարողացաւ օգուտ քաղել։ Այս բոլոր փորձերից յետոյ Մեսրոպը տեսաւ, որ յոյս դնելով ուրիշների վրայ՝ ոչինչ չի կարելի անել, սկսեց գիշեր ցերեկ մտածել այդ մասին և եռանդով ուսումնասիրել մայրենի լեզուի հնչիւնները. երկար ճիգ թափելուց յետոյ՝

վերջապէս Մեսրոպը յաղթեց դժուարութիւններին և իւր հնարագէտ խելքով ստեղծեց մեր նշանագրերը (406 թ.)։

Գ.

Այս մեծ գիւտից յետոյ՝ Սահակն ու Մեսրոպը բաց են անում դպրոցներ, սովորեցնում են ուսման ծարաւ աշակերտներին նորագիւտ հայոց տառերը, թարգմանում են հին և նոր կտակարանները և ժամասացութեան բոլոր գրքերը օտար լեզուներից հայերէն։ Հեշտանում է ուսման գործը աշակերտների համար. նրանք սկսում են կարդալ մայրենի լեզուով, գրել մայրենի տառերով։ Այնուհետև ժողովուրդն էլ՝ եկեղեցի գնալով՝ հասկանում էր ամեն բան և մխիթարուած վերադառնում էր տուն։ Կամաց-կամաց լուսաւորութիւնը տարածւում է Հայաստանում, քրիստոնէութիւնը խոր արմատներ է գցում ժողովուրդի մէջ։ Սահակի և Մեսրոպի բաց արած դպրոցներումն են ստացել իրանց սկզբնական կրթութիւնն այն անուանի հեղինակները—Եղիշէն, Եզնիկը, Մովսէս Խորենացին, որոնք գրեցին մեր հին պատմութիւնը և մշակեցին, ճոխացրին մեր լեզուն։

67. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ—ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄԱԳԻՐ

Մովսէս Խորենացին, Մեսրոպ Մաշտոցի քրոջորդին, որ մեր ազգի պատմութիւնը գրողներից առաջինն եղաւ, ծնուել է չորրորդ դարի վերջերը (մօտաւորապէս 385—395 թուականներին) Տարօն գաւառի Խորնի կամ Խորօնք գիւղում և այդ պատճառով էլ «Խորենացի» է կոչւում։ Նրա մանկութեան տարիներում էր, որ Ս. Սահակի ու Մեսրոպի ջանքերով և Վռամշապուհ ուսումնասէր թագաւորի աջակցութեամբ Հայաստանում բացուեցան դպրոցներ, որտեղ հայ մանուկները սկսեցին սովորել հայոց նորագիւտ տառերը և կարդալ մայրենի լեզուով գրուած առաջին գրքերը։ Այդ դպրոցներից մէկում, իւր

մօրեղբօր ձեռքի տակ, ուրիշ ուշիմ և հանճարեղ մանուկների հետ դաստիարակուեց և Մովսէսը: Ուսումն յաջողութեամբ աւարտելով՝ նա միւս առաջադէմ աշակերտների հետ դիմեց այն ժամանակուայ լուսաւորուած երկրները՝ իւր գիտութեան ծաւալն ընդարձակելու համար և երկար տարիներ անխոնջ կերպով զանազան գիտութիւններ և գրքեր ուսումնասիրելուց յետոյ՝ հայրենիք վերադարձաւ:

Սակայն ինչ դրութեան մէջ գտաւ Մովսէսն իւր հայրենիքը: Ամէն կողմ լռութիւն և ամայութիւն, ամբողջ երկիրը պարսիկների ձեռքով կրակի և սրի է մատնուած, իսկ իւր բարերարները — Ս. Սահակն ու Մեսրոպը վախճանուած...

Վշտացած սրտով դիմեց նա Օշական գիւղը, ուր գտնւում էր իւր մօրեղբօր նուիրական գերեզմանը: Աշխարհից բոլորովին կտրուելով՝ նա փակուեց Ս. Մեսրոպի գերեզմանի վրայ շինուած շքեղ մատուռի մէջ և երկար տարիներ պասով, աղօթքով ու արտասուք թափելով՝ անդուլ ու անխոնջ մեղուի նման աշխատում էր. նա գրեց մեր ազգի պատմութիւնը՝ Հայկ Նահապետից սկսած մինչև իւր օրերը:

Իւր կեանքի վերջին տարիներում նա շատ թշուառութիւններ կրեց և մինչև անգամ չոր հացի կարօտ մնաց: Սակայն, վերջապէս, այն ժամանակուայ հայոց հայրապետը, Գիւտը, որ Մովսէս Խորենացու դասակիցն էր եղած, իւր թեմում շրջագայելիս անակնկալ կերպով Օշական գիւղում տեսաւ և ճանաչեց նրան. Նա վեր առաւ իւր հետ մեր ազգի անզուգական մշակին և եպիսկոպոս ձեռնադրելով՝ ուղարկեց Բագրևանդայ գաւառը: Այստեղ Մովսէս Խորենացին բաց արաւ ուսումնարաններ և ամէն կերպ ճիգ էր թափում լուսաւորութիւն տարածել խաւարի մէջ խարխափող հայերի մէջ:

Նա վախճանուեց մօտաւորապէս 487 թուականին

Տարօնում և թաղուեց նոյն գաւառի Ս. Առաքելոց եկեղեցում:

68. ԱՒԱՐԱՅՐԻ ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ա.

Հայ իշխանների անմիաբանութիւնը:

Հայոց Վռամշապուհ թագաւորի մահից յետոյ պարսից թագաւորներն աշխատում էին Հայաստանը բոլորովին ձուլել իրանց տէրութեան հետ: Բայց այդ նպատակին դժուար էր հասնել, քանի որ հայերը քրիստոնեայ էին, իսկ պարսիկները կրակապաշտ: Հայերն, իբրև քրիստոնեայ ազգ, իրանց աւելի մօտիկ էին զգում յոյներին, որոնց ձեռքում էր Հայաստանի արևմտեան մասը: Բայց յոյներն էլ թշնամացել էին հայերի հետ այն օրից, երբ Մեսրոպի, Սահակի և նրանց աշակերտների ջանքերով հայոց եկեղեցիներում և դպրոցներում յունաց լեզուի փոխարէն մայրենի լեզուն էր սկսել գործածուել: Հայերն այդ ժամանակ չունէին զօրեղ թագաւոր. Վրամշապուհի որդի Արտաշէսը մի գեղխ և անառակ երիտասարդ էր, որ աւելի մտածում էր զուարճութիւնների, քանթէ երկիրը կառավարելու մասին: Հայոց նախարարները, զզուելով այդ թոյլ և անառակ թագաւորից՝ որոշեցին դիմել Պարսից Վռամ արքային և խնդրել, որ նա գահից զրկէ Արտաշէսին և նրա տեղ Հայաստանում պարսիկ կուսակալ նշանակէ: Իզուր էր Սահակ կաթուղիկոսն աշխատում համոզել նրանց, որ համբերեն և մի այդպիսի ազգավնաս քայլ չանեն:

Հայոց իշխանները՝ տեսնելով, որ Սահակը չի ուզում միաբանել իրանց հետ, դիմեցին պարսից թագաւորին և գրպարտեցին թէ Արտաշէսին և թէ Սահակին, իբրև թէ այդ երկուսը միացել են յոյների հետ և ուզում են ապստամբեցնել Հայաստանի պարսից մասը: Պարսից թագաւորը հէնց այդպիսի բանի էր սպասում. Նա օգտուեց

հայոց մեծամեծների չարախօսութիւնից և կանչելով իւր մօտ հայոց թագաւորին ու կաթուղիկոսին, բանտարկեց։ Սահակի փոխարէն կաթուղիկոս նշանակեց Սուրմակ անունով մի անարժան երէցի, իսկ Արտաշէսի տեղ հայոց երկրի վրայ կուսակալ (մարզպան) կարգեց։

Բ.

Յազկերտ թագաւորի հրովարտակը եւ հայերի պատասխանը։

Դէպքերը շուտով ցոյց տուին, թէ ինչ դժբաղդութիւնների պատճառ դարձաւ հայոց իշխանների անհեռատես քայլը։ Վռամի մահից յետոյ պարսից թագաւոր եղաւ նրա որդի Յազկերտը, որը մոլեռանդ կրակապաշտ էր։ Նա վճռեց բռնի կերպով հաւատափոխ անել հայերին և այդպիսով բոլորովին ձուլել մեր երկիրը Պարսկաստանի հետ։ Ցաւալին այն էր, որ հայ նախարարների մէջ գտնուեցին փառասէր մարդիկ, որոնք միայն իրանց սեպհական շահերն աչքի առաջ ունենալով՝ ծածուկ օգնում էին Յազկերտին։ Այդպիսի նախարարներից էր և Սիւնեաց աշխարհի հզօր իշխանը, որի անունն էր Վասակ։

Յազկերտը հրովարտակ հանեց, որ իւր իշխանութեան տակ եղած բոլոր քրիստոնեաները, այսինքն հայերը, վրացիք և աղուանները, թողնեն իրանց հաւատը և երկրպագեն արեգակին ու պաշտեն կրակը։ Պարսից կրօնապետը կամ մոգպետը իւր կողմից մի թուղթ գրեց հայոց մեծամեծներին, որի մէջ պախարակում էր քրիստոնէութիւնը և գովում պարսից կրօնը։

Այդ ժամանակ՝ հայոց կաթուղիկոսն էր Սահակի և Մեսրոպի աշակերտ Յոսէփը։ Նա Արտաշատ քաղաքում հայ աշխարհական և հոգևորական մեծամեծներից մի ժողով կազմեց։ Այդ ժողովում կարդացուեց Յազկերտի և մոգպետի առաջարկութիւնը և գրուեց մի համարձակ պատասխան, որը վերջանում է այս խօսքերով. «Մեր հաւատից մեզ ոչ մի բան չի կարող հանել—ոչ մարդիկ, ոչ հուրը և ոչ սուրը»։

Գ.

Հայ իշխանների Պարսկաստան գնալը եւ նրանց վերադարձը։

Յազկերտը, ստանալով հայերի պատասխանը, շատ բարկացաւ և հրամայեց նախարարներին՝ գալ Պարսից Դուռը։ Նա կանչեց նաև հայոց զօրքի սպարապետ Վարդան Մամիկոնեանին։ Երբ որ նախարարները հասան Յազկերտի մօտ՝ սա հրամայեց նրանց բոլորին էլ բանտարկել, մինչև որ համաձայնուեն փոխել իրանց հաւատը։ Յազկերտն յայտնեց նախարարներին, որ եթէ նրանք յամառեն իրանց որոշման մէջ, մեծ զօրք կուղարկէ Հայաստան՝ բնաջինջ անելու բոլոր հայերին։

Տեսնելով, որ առանց իրանց ներկայութեան Հայաստանում շատ դժուար կլինի հայերին ընդդիմադրել պարսից զօրքին՝ նախարարները խորհեցին և վճռեցին երեսանց ընդունել կրակապաշտութիւն, որպէսզի իրաւունք ստանան վերադառնալու հայրենիք և իրանց երկիրը պաշտպանեն Յազկերտի զօրքի աւերումներից։

Երբ Յազկերտը լսեց, որ նախարարները պատրաստ են ուրանալ իրանց հաւատը, սաստիկ ուրախացաւ և պարգևներ տալով նրանց՝ յետ ուղարկեց Հայաստան, նրանց հետ դնելով մոգերի մի մեծ խումբ և պարսկական զօրք։ Նա հրաման էր տուել մոգերին և զօրքին—փակել բոլոր եկեղեցիները Հայաստանում և նրանց տեղ կրակատներ հիմնել։

Հայ ժողովուրդը, երբ լսեց նախարարների ուրացման գոյժը և մոգերի ու պարսից զօրքի գալը, ոտքի կանգնեց և պատրաստուեց զէնքով պաշտպանել իւր հաւատը։ Մոգերի հէնց առաջին փորձը—կործանել եկեղեցին՝ ցոյց տուեց, թէ որքան դժուար էր հայերին բռնութեամբ հաւատափոխ անել։ Երբ մի գիւղում մոգերն ուզում էին փակել եկեղեցին, նրա երէց Ղևոնդը ժողովրդի հետ յարձակուեց պարսիկների վրայ և ջարդելով յետ քշեց իւր սրբավայրից։

Իսկ նախարարները, երբ հասան Հայաստան, բացարձակ յայտնեցին, որ չեն ուրացել իրանց հաւատը: Վարդան Մամիկոնեանն իսկոյն նախարարների ժողով գումարեց և բոլորն Աւետարանի վրայ երդուեցին՝ չխնայել իրանց կեանքը հայրենիքի և ազգային եկեղեցու պաշտպանութեան համար: Հայերի ոգևորութիւնը և հաստատամտութիւնը այնքան զօրեղ էին, որ նոյն իսկ Վասակն ստիպուած էր միաբանել նախարարների հետ և երդուել Աւետարանի վրայ, որ հաւատարիմ կըմնայ քրիստոնէական հաւատին:

Այսպէս ահա՛ հասարակ հայ ժողովուրդը, իշխանները և հոգևորականները միաբանելով՝ թոյլ չտուին քանդել իրանց եկեղեցիները և մոգերին պարսից զօրքի հետ քշեցին Հայաստանից:

Գ.

Վ ա ս ա կ ի ո ւ ր ա ց ո ւ թ ի ւ ն ը:

Այդ քայլն անելով՝ հայերը լաւ գիտէին, որ Յազկերտն անպատիժ չի թողնիլ իրանց, ուստի սկսեցին պատրաստուել դիմադրելու Յազկերտի նոր յարձակմանը: Միևնոյն ժամանակ իշխան Ատոմ Գնունուն և Վարդան Մամիկոնեանի եղբօրը, Հմայակին, ուղարկեցին Յունաց Թէոդոս Կայսեր մօտ օգնութիւն խնդրելու: Իսկ ինքը — Վարդան Մամիկոնեանն առժամանակ իւր զօրքով դիմեց դէպի հիւսիս — օգնելու իւր փեսային, Վրաց Թագաւորին, որը նոյնպէս կռւում էր Յազկերտի դէմ:

Վասակ Սիւնին, օգտուելով Վարդան սպարապետի բացակայութիւնից, խախտեց իւր երդումը, ուրացաւ քրիստոնէութիւնը և սկսեց բացարձակ համոզել նախարարներին, որ յետ կենան իրանց մտադրութիւնից և ընդունեն Յազկերտի պահանջները: Վասակը մինչև անգամ սկսեց աւերել այն նախարարների երկիրը, որոնք չէին ուզում միաբանել իւր հետ: Բայց երբ լսեց, թէ Վարդանը՝ յաղթելով պարսիկներին՝ արդէն վերադառնում է, փախաւ և ամրացաւ Սիւնեաց աշխարհում:

Ե.

Ա ւ ա ր ա յ ր ի ճ ա կ ա տ ա մ ա ր տ ը:

451 թուականի Զատկի տօները նոր էին անցել, երբ լուր հասաւ, որ պարսից ահագին զօրքն արդէն հասել է Ուրմիա լճի արևմտեան ափը, Հեր ու Զարևանդ գաւառը: Վարդանն իսկոյն հրաւէր կարդաց հայոց բոլոր իշխաններին, որ գան, հաւաքուեն Արտաշատ քաղաքում: Իսկ պարսից բանակի դիրքը և թիւը լրտեսելու նպատակով, նա առաջ ուղարկեց Առանձար Ամատունի իշխանին 300 կտրիճ հեծեալներով:

Վարդանի հրաւէրն իսկոյն արձագանք գտաւ և հայ իշխաններն շտապեցին իրանց զօրքերով Արտաշատ, ուր ժողովուեց 66 հազար զօրք: Առանձարը տեղեկութիւն բերեց, որ պարսիկները դիմում են Արտազ գաւառը: Վարդանն, անցնելով 66 հազար զինուած հայերի գլուխը, դիմեց թշնամու բանակի դէմ: Հայոց զօրքը, հասնելով Տղմուտ գետի ափի մօտ գտնուող Աւարայր գիւղը՝ գետի միւս ափին կանգնած պարսից զօրքի հանդէպ բանակ դրեց: Յովսէփ կաթուղիկոսը, Ղևոնդ երէցը և ուրիշ մի քանի քահանաներ հայոց զօրքի մէջ էին և քաջալերում ու խրախուսում էին հայ զինուորներին:

Միւսը օրը, յունիսի 2-ին, լուսադէմին հայոց բանակից երևում էր, թէ ինչպէս պարսից զօրապետ Մուշկանն առաջ էր բերում պատերազմի փղերը, որոնց ամէն մէկի մէջքին մի-մի մարդկոց էր դրուած՝ լի սպառազինուած մարդկանցով: Այդ վիթխարի կենդանիներից իւրաքանչիւրի երկու կողմը նա կանգնեցրել էր երեք հազար զինուորներ:

Վարդանը, աղօթելով զօրքի հետ՝ ինքն էլ պատրաստուեց ճակատամարտի: Նա հայոց զօրքը բաժանեց չորս

գնդի. առաջին գունդը յանձնեց Ներշապուհ Արծրունուն, երկրորդը՝ Խորէն Խորխոռունուն, երրորդը՝ Թաթուլ Վանանդեցուն, իսկ չորրորդը պահեց իրան, օգնական ունենալով Արշաւիր Կամսարականին և իւր կրտսեր եղբօրը՝ Համազասպին։

Ճակատամարտն սկսուեց նետաձգութեամբ գետի երկու կողմերից։ Հայերն, անցնելով Տղմուտ գետը, քա-

ջութեամբ յարձակուեցան պարսից վրայ։ Քաջ Վարդանը կոտորեց պարսիկների ամենաուժեղ թևը։ Այս արիւնահեղ պատերազմը տևեց ամբողջ օրը։ Երբ Վարդանը վիրաւորուած ընկաւ իւր քաջ ընկերների հետ՝ Հայոց զօրքըն, անառաջնորդ մնալով՝ ցրուեց, պատերազմի դաշտում թողնելով 1036 հոգի, մինչդեռ պարսից [illegible] ընկել էին 3544 մարդ։

Զ.

Հայաստանի վիճակը պատերազմից յետոյ։

Աւարայրի ճակատամարտից յետոյ հայերը ցր[illegible]

և ամրացան Հայաստանի զանազան բերդերում ու անմատչելի լեռներում և դեռ երկար ժամանակ շարունակում էին կռուել պարսիկների դէմ։ Վարդանի եղբայր Հմայակը, յոյներից օգնութիւն չստանալով՝ հասաւ Հայաստան Աւարայրի պատերազմից յետոյ։ Նա իւր խմբերով ամրացաւ Պարխար լեռներում և անդադար յարձակւում էր պարսից վրայ ու կոտորում նրանց։ Նա այդպէս երկար կռուեց Հայրենիքի թշնամիների դէմ, մինչև որ դիւցազն եղբօր նման ինքն էլ ընկաւ կռուի դաշտում։

Յազկերտը՝ տեսնելով, որ չի կարողանում կոտրել հայերի կամակորութիւնը, հրամայեց Մուշկանին դադարեցնել պատերազմական գործողութիւնները հայոց երկրում։ Նա մեծամեծ խոստումներ անելով, կենդանի մնացած նախարարներին իւր մօտ կանչեց. իսկ Յովսէփ կաթուղիկոսին, Ղևոնդ երէցին և միքանի ուրիշ հոգևորականների, իբրև ապստամբութեան դրդիչների, հրամայեց կալանաւորել և ջորիների վրայ կապած՝ ուղարկել Պարսկաստան։ Երբ նախարարները հասան Պարսից Դուռը՝ Յազկերտը, հակառակ իւր երդման, բանդարկեց նրանց բոլորին, իսկ կաթուղիկոսին, Ղևոնդին և միւս հոգևորականներին սաստիկ տանջանքների ենթարկելով՝ սպանել տուեց։

ՎԵՑԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Ը. ԱՌԱԿՆԵՐ

69. ԱՔԱՂԱՂ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

Մի աքաղաղ, քրքրելով աղբի դէզը,
Անսպասելի մի մարգարիտ գտաւ մէջը.
Դառնայ իւր գիւտին, ինչ ասէ, գիտէ՞ք.
—Չը՛, ինչպէս անպէտք, փուչ բան, նայեցէք,
Ո՛րքան անխելք են և թեթև մարդիկ,
Մեծ գին են տալիս այս բանին մանրիկ.
Թէ որ կուզէք, ասեմ ես ձեզ ճշմարիտ,—
Մի հատ գարին լաւ է՝ քան այս մարգարիտ։
Իրա՛ւ, գարին տեսքով չէ,
Բայց փոր կըկշտացնէ։

---

70. ԿԱՐԱՊԸ, ՁՈՒԿԸ ԵՒ ԽԵՉԱՓԱՐԸ

Մի օր կարապը, ձուկն ու խեչափար,
Զգիտեմ, ինչպէս որ գտան իրար.
Մի բեռնաբարձ սայլ տանել կուզէին,
Երեքը մէկէն լծուեցան սայլին,
Երեքն էլ արիւն-քրտինք են մտնում,
Սակայն իւր տեղից սայլը չի շարժւում։

—Զարմա՛նք,—ասում են նրանք մէկ-մէկու,—
Չգիտենք ինչո՞ւ
Չենք կարողանում շարժել այս սայլը.
Ոչ ճամպան է վատ, ոչ ծանր բեռը»։



Հապա չէ՞ս ասում՝
Կարապը միշտ դէպի վեր էր քաշում,
Խեչափարը միշտ յետույետ,
Ձուկն իւր կողմից դէպի գետ։
Ծուռն ո՞վ էր, կամ թէ ո՞ւմն էր իրաւունք,—
Այդ թողունք.
Բայց բանն այս է որ՝
Հէնց մինչև այսօր
Սայլն այնտեղ է բեռնովը,—
Այսպէս կ՚ասէ Կրիլովը։

---

71. ՀՈՎԻՒ ԵՒ ՄՈԾԱԿ

Հովուի մէկը, յոյսը դրած շներուն,
Ստուերի մէջ հանգիստ, անուշ քնեցաւ.
Մի օձ, պարկած թփերի մէջ գալարուն,

Տեսաւ հեռուից, ծածուկ սողաց, մօտ եկաւ.
Թոյնը բերնի մէջ լցրել էր,
Քիչ էր մնում՝ խայթէր, կծէր, մեռցնէր։
Մոծակը այս որ տեսաւ,
Խղճաց վրան, թռաւ-հասաւ,
Բոլոր ոյժովը կծեց,
Հովուին քնից զարթեցրեց։
Հովիւն ելաւ, օձին սպանեց,
Բայց դրանից առաջ՝ կէս քուն,
Կէս արթուն,
Խեղճ մոծակին էլ զարկեց, տրորեց։

---

72. ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ՕՁԸ

Մի օր օձը սողալով
Մի գիւղացու մօտ եկաւ
Եւ անուշիկ իւր լեզուով
Այսպէս խօսել սկսաւ.

—Բարի՛ դրացի, ապրենք եղբօր պէս.
Էլ պէտք չէ ինձնից զգուշութիւն անես։
Դու էլ կըտեսնես,
Որ փոխուել եմ ես.

Բնաւ առաջուայ խարդախ օձը չեմ.
Գարնան սկզբից կաշիս փոխել եմ։

Բայց գիւղացին օձի խօսքին չհաւատաց,
Առաւ ձեռքին հաստ մահակն ու ասաց.

—Թէպէտ քո կաշին նոր է,
Բայց սիրտդ միևնոյնն է։

Եւ մէկ հարուածով գլորեց գետին
Խարդախ դրացու անկենդան մարմին։

---

72. ՀԱՅԵԼԻ ԵՒ ԿԱՊԻԿ

Հայելու մէջ կապիկն, իրան տեսնելով,
Խթեց արջին շատ կամացուկ թաթիկով.
—Քեռի՛, ասաց, նայի՛ր դու այս անճոռնուն,
Ի՞նչ խաղուն դունչ, ի՛նչ կնճիռներ կան երեսին.
Ես անպատճառ սրտի ցաւից կըմեռնէի,
Թէ որ մի քիչ դրա նման լինէի.
Բայց հաւատա՛, հինգ-վեց դրացի ես ճիշտ ունիմ
Սրա նման ծամածռուող. մի-մի համրե՞մ։
—Կապիկ եղբայր, ասաց արջը, զուր մի կրիր աշխատանք։
Քան դրացիքդ այդպէս ծաղրես՝
Լաւ չի՞ լինիլ վրադ նայես։
Բայց մեր արջի այս խրատը չունեցաւ մի հետևանք։

---

74. ԿԱՊԻԿ ԵՒ ԱԿՆՈՑ

Կապիկի մէկը ծերացել, աչքի ոյժը պակսել էր,
Բայց մարդկանցից լսել էր,
Թէ այդ ցաւն էլ ունի ճար.
Ճարն էր՝ ակնոց դնել աչքին անպատճառ։
Ուստի գնում, հինգ-վեց ակնոց է առնում,
Այս ու այն կողմ պտըտում,
Մէկը առնում, գլխի վրայ է դնում,
Ցետոյ տանում, պոչի վրայ հագցնում.
Հոտոտում է և լիզում է ապակին,
Բայց ակնոցից շահ չէ տեսնում իւր աչքին։
—Գետինն անցնի, գոռաց յանկարծ զայրագին։
Խենթ է, ով որ լսէ մարդկանց ասածին.
Ահա ինչ որ գովեստ արին ակնոցի,—
Սուտ է եղել. ես էլ, խենթս, հաւատացի։
Վշտացած կապիկն սրտի խոր ցաւով
Ակնոցը ուժգին տալիս է քարով
Եւ ջարդ ու փշուր
Անում՝ ինչպէս ջուր։

---

75. ԱՂՈՒԷՍ ԵՒ ԽԱՂՈՂ

Քաղցած աղուէսը՝ ինչ արաւ-չարաւ,
Մի այգի մտաւ.
Տեսնում է, որ խաղողները
Կուզ-կուզ կախուած են, փայլում։
Մեր սանամօր ոչ թէ միայն աչքերը,
Ատամներն էլ կրակ են առնում։
Կուզերն՝ որ ասես, իրարուց հասուն,
Մի մի յակինթի նման պսպղուն։
Ինչ էր, գիտե՞ս, ցաւալին,—
Կուզերը խիստ բարձր էին։
Մեր խեղճ աղուէսը շատ աշխատեցաւ,
Ցատկեց-ցատկոտեց, չորս կողմ ման եկաւ,
Մի ճար չգտաւ,
Մի կուզ էլ փրցնել անկարող եղաւ.
Աչքերը լաւ էին տեսնում,
Ատամները չէին հասնում.
Ամբողջ մի ժամ չարչարուեց,
Իզուր տեղը խիստ յոգնեց,
Թողեց-գնաց՝ ասելով՝.
—Էհ, ինչ կայ, տեսքին նայես, նա վատ չէ,
Բայց դեռ չէ հասած, խակ ու կանաչ է.
Գիտեմ, բերանդ որ դրուեն,
Ատամներդ կըհարուեն.

---

76. ՀԵՏԱՔՐՔԻՐ

—Բարե՛ եկար, հազար բարի, բարեկամ,
Ո՞ւր էիր, տեսնամ։
—Թանգարանիցն է գալս.
Զորս ժամ եղաւ ման գալս.
Ամեն մի կողմ պտըտեցի, պըրպըտացի,

Բոլորը տեսայ, ոչինչ չթողի,
Աշխարհումս ինչեր են եղեր.
Իրաւ՝ խելքից-մտքից վեր։
Որ կողմ նայես, արմանք, զարմանք, հրաշալիք,
Որն էլ դիտես, մէկը միւսից գեղեցիկ.
Ի՜նչ գազաններ, ինչ թռչուններ,
Թիթեռնիկներ, բզէզներ,
Ի՜նչ զատիկներ, ինչ կերպ ճանճեր,
Որքան ոսկի եզնակներ,
Որը կանաչ՝ զմրուխտի պէս.
Որը կարմիր՝ բուստի պէս.
Հապա մանրիկ բոտոտները, հաւատա,
Գնդասեղի գլխից էլ փոքրը կայ։
—Հապա փղի՞ն ինչ ասիր,
Ի՞նչ ահագին վիթխարի.
Անշուշտ այնպէս կարծեցիր,
Թէ մի լեռն է սոսկալի։
—Մի՞թէ փիղը այնտեղ էր։
—Այնտեղ էր. ի՞նչ, չտեսա՞ր։
—Ափսո՜ս, ինչ ասեմ, եղբայր,
Փիղն աչքովս չէ ընկել։

77. ՋՐՎԷԺ ԵՒ ԱՌՈՒԱԿ

Լեռան տակից մի աղբիւրիկ կըվազէր,
Բայց ջուրն այնքան նուազ էր,
Որ անցնող-դարձողի աչքին հազիւ կերեւար.
Միայն թէ շատ անուանի էր նրա ջուրն առողջարար։
Աղբիւրի մօտի բարձր ժայռերից
Փրփրած, կատաղի մի ջրվէժ կիջնէր.
Սա հպարտ-հպարտ՝ գոռմամբ ահագին
Ասաց առուակին.
—Տես, ինչ կասեմ քեզ.

Դու խեղճ ջրիկ ես,
Բայց ինչո՞ւ այնքան
Քեզ հիւրեր կըգան։
Ինձ մօտ թէ գան, իրաւն ասած, զարմանք չէ.

Հիանալի մի տեսք ունիմ, աննման.
Ասա, տեսնեմ, յատկութիւնդ ի՞նչ է,
Ինչո՞ւ մարդիկ միշտ գունդագունդ քեզ կըգան»։
Առուակն ասաց խպնելով՝
Հեզիկ ու քաղցր ձայնով.
—Գիտե՞ս ինչու.
Բժշկուելու»։

78. ԱՌԻՒԾԻ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Առիւծն ու շունը, գայլն ու աղուէս
Իրար հետ ապրում էին եղբօր պէս.
Միմեանց ազնիւ խօսք են տալիս՝
Մէկտեղ լինել միշտ որսալիս.
Ինչ որ ընկնի ձեռքերին,

Հաւասար անեն փայ-բաժին։
Զգիտեմ՝ ինչ կերպով
Կամ թէ ինչ հնարքով,
Առաջ աղուէսն եղնիկ է որսում.
Իսկոյն այդ մասին բոլորին յայտնում,
Որ գան բաժանեն այդ ընտիր որսը,
Չորս բաժին անեն և առնեն չորսը։

Եկան ամենքը։ Առիւծն էլ եկաւ
Ու այսպէս խօսեց.—«Բերէք, ես բաժնեմ.
Մենք չորս ենք. եղբա՛րք, չորս կտոր կանեմ։
Ահա՛ նայեցէք. այս է իմ բաժին,
Ինչպէս խօսք դրած էինք մեր միջին.
Այս փայն էլ իմն է, զի ես առիւծ եմ.
Սա էլ՝ որ ձեր մէջ ուժեղը ես եմ.
Իսկ սա,—թող մէկն ապա՛ թաթը մեկնէ,
Տեսա, թէ իւր գլխին ինչ ձիւն կբերէ»։



79. ԱՌԻՒԾՆ ՈՒ ՄՈԾԱԿԸ

Խեղճի վրայ մի ծիծաղէր,
Անճարին մի վիրաւորէր.
Խեղճ մարդն էլ շատ անգամ քեզ այնպէս
Կըխայթէ, որ կըմնաս սևերես։
Քո գլխին շատ էլ մի հաւատար,
Լսիր այս առակը, ականջդ առ։
Այնպէս պատահեց, որ առիւծը հզօր
Մոծակի սիրտը խիստ խոցեց մէկ օր։
Մոծակն այդ բանից շատ վիրաւորուեց,
Առիւծ արքային պատերազմ յայտնեց։
Կռուողն էլ ինքն էր, փողահարն էլ ինքը,
Վրան էր բոլոր զրահն ու զէնքը.
Բզզալով ընկաւ թշնամու վրայ,
Որ մէկ հարուածով մահացու վէրք տայ։
Առիւծն սկզբում մի հանաք կարծեց,
Բայց երբ մոծակը նրան մէկ լաւ խայթեց,
Տեղից վեր թռաւ մեր առիւծ արքան,
Սկսեց զարկել պոչովն ինքն իրան։
Բայց քաջ մոծակն արնի համն առած,

Սիրտն էլ նեղացած, ինքը բարկացած,
Ձու՜ արաւ, թռաւ, ճակատին նստեց,
Տզրուկի նման արիւնը ծծեց։
    Անճար առիւծը շատ էլ զոռ արեց,
Բաշը թափ տուաւ, գլուխն օրօրեց,
Բայց դու ո՛չ մեռնես, մոծակն իւր քեփին
Մէկ քթին էր զարկում ու մէկ ականջին։
Առիւծի ճարը հէնց որ կտրուեց,
Տեսաւ՝ մոծակն իւր հոգին հանեց,
Ընկաւ գետնի վրայ և այնպէս գոռաց,
Որ նրա ձայնից սար ու ձոր դողաց.
Մէկ ժանիքներն էր կրճտացնում
Ու մէկ գետինը ճանկռտում, պոկում։
Ամբողջ անտառում էլ շունչ չմնաց,
Նրա գոռոցից փախան սարսափած.
Կարծես սար ու ձոր կրակ էր ընկել,
Կամ կարկուտ եկել, ջրհեղեղ արել։
Եւ այսքան շփոթ, այսքան աղմուկը
Հնարել կարաց փոքրիկ մոծակը։
Երբոր առիւծը խպառ թուլացաւ,
Գետնի վրայ չոքեց ու մեղայ եկաւ.
Խնդրեց մոծակից, որ իրան ների,
Եւ այնուհետև էլ կռիւ չանի։
Մոծակն էլ իրան վրէժը հանած,
Թշնամուն այսպէս քարովը տուած,
Մեր Թագաւորի յանցանքը ներեց
Եւ լաւ պայմանով նրա հետ հաշտուեց։

80. ԱՐԾԻՒՆ ՈՒ ՃԻՃՈՒՆ

Հսկայ թևերը լայն-լայն տարածած,
Հզօր արծիւը ուղղեց իւր թռիչք
Դէպի բարձրաբերձ լեռներ սեպացած,

Դէպի անսահման կապուտակ երկինք։
Երկա՛ր սաւառնեց նա խիտ ամպերում,
Քանի ոյժ ունէր զօրեղ թևերում.
Եւ վերջ ի վերջոյ, յոգնած ու դադրած,
Նա նստեց հսկայ մի լեռան կրծքին,
Որի գագաթը մի՜նչ երկինք հասած,
Սարսափ էր ազդում վերև նայողին։
Նստեց նա հանգիստ, անվախ, անվրդով
Եւ շուրջը գոռոզ հայեացք ձգելով,
Իւր արքայական ձայնովը ահեղ
Որոտաց ուժգին. «Մենակ եմ այստեղ,
Մենակ ու ազատ այս լեռան վրայ,
Որպէս քաջայաղթ լիազօր արքայ.
Իմ գահն է անհուն այս երկնակամար,
Որոտ ու ամպեր—ոտքիս պատուանդան.
Ո՞վ կայ աշխարհում փառքիս հաւասար,
Ո՞վ կարէ համնել գահիս բարձրութեան»։
    —Ես…
Լսուեց յանկարծ մի ձայն թոյլ, բարակ,
Մեծապանծ թռչնի հէնց ոտների տակ.
—Ես՝ անձրևային ճիճուս աննշան»։
—«Ի՞նչպէս, դու այստե՞ղ, իմ դէմ յանդիմա՞ն։
Ասա́ ինձ շուտով, ճիճո՛ւ անպատկառ,
Ո՞րտեղից դու այս ամպերին հասար…
—«Այն նեխուած ճահճից, արծիւ ինքնագով,
Ուր դու ծնուած ես քո այդ վեհ փառքով.
Այն նախուած ճահճից, որտեղ այժմ դու
Զզւում ես անգամ հայեացք ձգելու»։
—Բայց ինչ հնարքով դու, միջա՛տ չնչին,
Հասար իմ անհաս ամպագարդ գահին.
Ասա́, պատմի՛ր ինձ, ի՞նչպէս, ի՞նչ կերպով…»։
—Ինչպէ՞ս,—սողալո՜վ, արծիւ, սողալո՜վ»։

81. ԱՐԾԻՒՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

(Չին զրոյց)

Եղաւ՝ մի անգամ արծիւն ու կաղնին
Մի անտառի մէջ վէճի բռնուեցին,
Թէ ո՛րն իրանցից շատ տարի կապրի,
Ո՛րն է դիմացկուն ու պինդ աւելի։
Արծիւն ասաց՝ ես, կաղնին էլ՝ թէ ես։
Երկուսն էլ յամառ ու հպարտ այսպէս
Մեծ մեծ պարծենցան, սաստիկ վիճեցին,
Վերջը այս տեսակ պայման կապեցին.
Ժամանակ դրին հինգ հարիւր տարի,
Արքան հաւքերի, արքան անտառի,
Որ թէ որոշած այն օրին հասնին,
Այն օրը դարձեալ մէկ մէկու տեսնին։
Ու արծիւն իսկոյն կաղնուցն հեռացաւ,
Հզօր թեւերը շարժեց, վերացաւ
Դէպի ամպերը, դէպի ժայռերը,
Ուր անց է կացնում իւր լաւ օրերը։
Կաղնին էլ փռեց ճիւղերն երկաթի,
Խո՛ր ու խոր մխեց ճանկերն արմատի,
Ու այնպէս հուժկու կանգնեց անտառում,
Որ վայր չընկնի էլ հինգ հարիւր տարում։
Դարե՛ր անցկացան։
Եւ ահա մի օր
Արծիւն եկաւ՝ ծերացած, անզօր,
Ծրվոցը կորած, տկար, հեւալով,
Թոյլ-թոյլ թեւերը հազիւ քարշ տալով,
Տեղ հասաւ մի կերպ, նայեց դէս ու դէն,
Տեսաւ, որ կաղնին ընկել էր արդէն,
Ընկել էր ահեղ փոթորկի առաջ,
Ճիւղերը թէեւ դեռ թարմ ու կանաչ։
—Հէ՜յ, կանչեց, գոռաց, պարծենկոտ կաղնի,

Դէ լաւ ճանաչիր ինձ ու քեզ հիմի.
Հինգ հարիւր տարուց մի ժամ էլ դեռ կայ,
Ընկել ես արդէն, անկոտրում հսկայ։
— Հինգ հարիւր տարի ապրել եմ կանգնած,
Այդքան էլ կապրեմ այսպէս թեք ընկած,
Մինչեւ լրանայ մի հազար տարին,—
Պատասխան տուաւ ընկած վիթխարին։

---

82. ԳԻՒՂԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿ

Գեղջուկ ծերուկն, իւր մշակը հետն առած,
Իրիկուան դէմ տուն էր դառնում դաշտերից։
Մի արջ ելաւ ծերի դիմացը յանկարծ,
Երբ անցնում էր մութ անտառի նա միջից։
Ծերուկն էլ «ուհ—վա՜յ» կանչելը չկարաց,
Արջը նրան տակը կոխեց ու գոռաց,
Նստեց վրան, շուռ-մուռ տուեց, քաշքշեց,
Ամէն կողմից զարհուրելի կծոտեց։
Խեղճ ծերուկի բանը վատ էր, ինչ անէր։
—Մրտո՛ եղբայր, հասի՛ր, հասի՛ր, կանչում էր։
Մրտօն կացինը ձեռքին
Կայծակի պէս մօտ վազեց,
Արջի գլխին մոլեգին
Կացնի բերնով հարուածեց.
Եւ երկաթէ եղանը
Կռնատակից ներս ցցեց
Ու ահռելի գազանի
Թոքն ու սիրտը խոցոտեց։
Արջը ոռնաց ու վայր ընկաւ կիսամեռ,
Արիւնի մէջ տապալելով հեծում էր։
Փորձանքը անցաւ.
Ծերուկն ոտք ելաւ
Ու խեղճ Մրտոյին

Քրքրել սկսաւ։
Մեր քաջ Մրտօն ապշեցաւ,
Դարձաւ ծերուկին ասաւ։
—Ինչո՞ւ ես քրքրում դու ինձ, մահտեսի։
—Ինչու եմ քրքրո՞ւմ, ա՛յ յիմար քեզի,
Իմ սիրտս այրւում է, դու ուրախացիր.
Չե՞ս տեսնում,—արջի մորթը փչացրիր։

---

83. ԲԱԶԷՆ ԵՒ ԱՂԱՒՆԻՆ

Գիշատիչ բազէն իւր սուր ճանկերում
Բռնած աղաւնուն, պատառոտում էր։
—Հը՛մ, ճանկս ընկար. զուր ես աշխատում
Պրծնել իմ ձեռքից, զո՛ւր այդ հնարքներ։
Խաբեբայք, ես ձեզ լաւ եմ ճանաչում.
Հայհոյիչներ էք, խորամանկ օձեր.
Ձեր ցեղը միշտ մեր արիւնն է խմում,
Դուք էք մշտական մեր թշնամիներ։
Բայց կան աստուածներ վրէժխնդրութեան,
Նրանք ամենքին կանեն դատաստան։
—Ա՛խ, ո՞ւր էր՝ թէ այդպէս լինէր,
Այդ հէնց իմ սրտի ուզածն էր,—
Հազիւ հառաչեց աղաւնին մարած,
Սուր-սուր ճանկերում սաստիկ ճնշուած։
—Ինչպէ՞ս, ինչպէ՞ս, այդ ինչ ասացի՞ր,
Ա՛յ դու անհաւատ, մի մէկ էլ կրկնի՛ր։
Դու չես հաւատում, հա՞, աստուածներին,
Նախախնամութեան այն հզօր ոյժին։
Է՜հ, ուզում էի ազատել ես քեզ,
Բայց չէ, տեսնում եմ, որ արժանի չես.
Դէհ, մեռի՛ր, զուր է, զուր քո փրկութիւն.
Անաստուածներին չկայ թողութիւն։

---

84. ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋԻՒՆԸ

Ցատքըտան ու շատզրուց ճպուռը
Ծըռծըռալով անցուց բոլոր ամառը,
Այնպէս որ՝ ինքն էլ գրեթէ չիմացաւ,
Թէ ձմեռը յանկարծ ինչպէս վրայ հասաւ։
Դեղնեցան ու թօշնեցան դալարագեղ դաշտերը.
Ո՞ւր մնացին ամառուան տաք ու պայծառ օրերը,
Երբ ամեն մի տերեւի ներքեւիկ,
Պատրաստ էր ճպուռի թէ՛ հաց, թէ՛ բարձիկ։
Վաղուց անցան-գնացին այն բաները.
Ցուրտը կոխեց, սովը մեկնեց ճանկերը.
Լուիկ նստեց ճպուռը, ձայն չէր հանում,
Քաղցած փորին երգն էր միայն պակասում։
Խեղճը նեղն ընկած՝ հոգին բերանը,
Սողալով գնաց մրջիւնի տունը։
—Սանամայր, ասաց, սիրուն դըրացիս,
Ձեռքից մի՛ թողնիլ ինձ նեղ օրերիս.
Մի ճար, մի ճարակ, քաղցած չմեռնեմ.
Մինչեւ որ գարնան օրերին հասնեմ,
Փոքրիկ մի ապրուստ, տաքիկ մի տեղ տուր։
—Զարմանք չէ՞ միթէ, կնքամա՛յր, իմ քոյր,—
Ասաց մրջիւնիկն,—ի՞նչ է պատճառը,
Ի՞նչ արիր հապա բոլոր ամառը։
—Ա՛խ, հոգիս, ասաց, միջո՞ց ունէի,
Ես ամբողջ օրը խաղ կանչելու հետ էի.
Պարտէզներում, այգիներում անդադար քէֆ կանէի,
Այնպէս որ մինչեւ հիմա դեռ գլուխս կըպտըտի։
—Ա՛, ուրեմն դու...— Ես ամառն ի բուն
Խաղեր կանչեցի մէկ մէկից սիրուն։
—Խաղ կանչեցիր, հա՞, այդ էլ վատ բան չէ.
Ուրեմն այժմ էլ պարէ ու ցատկէ։

85. ԳԱՌՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Գառնուկի մէկը, ամառուայ տաք օրին,
Մի առուակի մօտ կերթայ, որ ջուր խմէ.
Բայց ի՞նչ կասես գլխին եկած փորձանքին.
Նոյն տեղերից դիմացը մի գայլ կելնէ:
«Ի՞նչ լաւ որս գտայ», մտքում ասելով
Գառնուկի վրայ գնաց մռռալով:
Եւ օրինաւոր ձև տալ ուզելով անօրէն գործին,
Կանչում է վերից.—Այդ ի՞նչ լրբութիւն, ի՞նչ յանդգնութիւն,
Որ գաս իմ ջուրը քո պիղծ դնչովդ պղտորես:
Նայի՛ր, ի՞նչ արիր,—բոլոր ցեխ, աւազ. ի՞նչպէս խմեմ ես:
Հիմա չար գլուխդ կըջախջախեմ
Եւ ոսկորներդ իրար կանցընեմ:
—Ամա՛ն, աղա՛, ծառադ եմ,
Թէ հրաման տաք՝ միայն այսքանը կասեմ,
Որ ձեր գերազանցութեան կանգնած տեղից հարիւր քայլ
Ցած եմ կանգնած ողորմելիս. ջուր տեղը միք նեղանալ.
Ի՞նչպէս կարող եմ պղտորել ձեր ջուրը»:
—Ուրեմն սուտ եմ խօսում ես. տեսա՞ր կերած ապուրը.
Հապա գուցէ միտդ չէ, հերու չէ՝ մէկել տարի
Դու կրկին այս տեղերում ինչ քիւֆիւր արիր ինձի:
Թէ դու մոռացել ես,
Ես չեմ մոռացած դեռ, գիտե՞ս:
—Գլխիդ մատաղ, ծառադ եմ,

Հազիւ մէկ տարուայ լինեմ,—
Ասաց գառը զարմանալով: Նա դարձաւ՝
—Թէ դու չէիր, եղբայրդ էր:—Եղբայր չունիմ ես, ասաւ:
—Տօ, անիրաւ, թէ նա քո եղբայրդ չէր,
Դէհ, ո՛վ գիտէ, սանահէրդ կամ խնամիդ էր.
Վերջապէս, ինչ ես երկարացնում,
Ով էլ լինի, ձեզնից մէկն էր, ես չե՞մ իմանում:
Դուք ամենքդ էլ, ա՛յ անպիտաններ,
Ոչխարներ, շներ ու չար հովիւներ,
Անիծից արմատը, ինձ թշնամի էք,
Ձեռներիցդ գայ, արիւնս կըխմէք,
Ես էլ ոխս քեզնից հանեմ, որ սիրտս քիչ հովցնեմ:
—Վա՛յ ինձ, յանցանքս ի՞նչ է, աղա՛, ի՞նչ անեմ:
—Ձայնդ կտրի՛ր, փուչ կենդանի,
Հիմա նստեմ, յանցանքնե՞րդ համրեմ պիտի.
Քո յանցանքիդ մէկը ո՞րն է՝ գիտնա՞լ կուզես.
Այս է ահա՛, որ քէֆս կուզէ ուտել, լափել քեզ:
Այս ասաց ու խեղճ գառնուկին քաշեց—տարաւ,
Անտառի մէջ պատառոտեց ու կերաւ:

86. ԷՇՆ ՈՒ ԳԻՒՂԱՑԻՆ

Գիւղացու մէկը մի պարտէզ ունէր,
Զգիտէր՝ ինչպէս պահէր, պահպանէր
Անիրաւ ագռաւներից
Ու սրիկայ ճնճղուկներից:
Մի էշ բռնեց,
Վարձը կտրեց,
Դրեց նրան պահապան իւր պարտէզին:
Ծիշտը ասած՝ խօսք չկար խեղճ իշուկին.
Կաշառ ուտել, գողնալ, զրկել դուռ դրացի,
Քա՛ւ լիցի.
բոջը մի տերևի չափ երբեք վնաս չէր տուած,
չուններին բան կերցնել—այդպիսի բան չէր արած:

Բայց արի, տես, որ գիւղացին
Իւր պարտիզից շահ չունեցաւ այն տարին։
Գիտէք ինչու. բարի էշը,
Չգիտենալով գործի լաւն ու գէշը,
Թռչունների յետևից վազվզելով անդադար,
Կոխոտել էր պարտիզի բոլոր բաներն իշաբար,
Այնպէս որ չէր մնացել ամենևին բոյս դալար,
Ո՛չ կաղամբ, և ո՛չ բանջար։
Մարդը տեսաւ, որ զուրկ մնաց տարուայ բոլոր արդիւնքից,
Փայտը առաւ, ոխը հանեց տխմար իշու կռնակից։
Դրացիներն որ տեսան, ամենքն էլ՝ «Օ՜խ, օ՛խ, ասին,
Արժանի էր իշուկը այդ ծեծին ու պատուհասին.
Նրա խելքի բանն էր այդպիսի մեծ պաշտօնը.
Բեռ կրել տիրոջ տունը,—այդ է նրա փեշակը»։

---

87. ՍՈԽԱԿՆԵՐ

Մի ճարպիկ Թռչնորս գարնան օրերում
Անտառների մէջ սոխակ էր որսում։
Խեղճ սոխակները, վանդակում փակուած,
Ծռուողում էին, ճարները կտրած.
Թէև, իհարկէ, նրանք կուզէին,
Որ անտառներում ազատ ման գային.
Բանդում փակուածը ի՞նչ սիրտ կունենայ
Որ դեռ երգի էլ, կամ զուարճանայ։
Բայց էլ ի՞նչ անէին,
Որ գոնէ չերգէին
Եւ իրանց սև օրը
Միասին չողբային։
Նրանցից միայն մէկը չէր երգում.
Նա իւր սիրելու կարոտն էր քաշում։
Արտասուաթոր աչքերով
Նա դաշտերին էր նայում,
Գիշեր-ցերեկ տանջուելով՝

Ընկերուհուն էր յիշում։
Իւր ընկերուհուց խեղճը անջատուած՝
Հալւում, մաշւում էր, վանդակում փակուած։
Անբաղդ սոխակը վերջը մտածեց.
—Այսպէս չի լինիլ,—ինքն իրան ասեց.—
Անխելք մարդիկն են շարունակ տխրում,
Իսկ խելօքները հնար են փնտրում,
Որ դժբաղդութեան
Մի կերպով վերջ տան։
Կարծեմ ես ինքս էլ, եթէ աշխատեմ,
Իմ թշուառութեան մի ճար կըգտնեմ.
Մեզ խօմ չեն բռնել, որ մեր միսն ուտեն,
Այլ որ մենք երգենք, իրանք էլ լսեն։
Մեր այս պարոնը, ինչպէս կերևի,
Երգեր լսելու սաստիկ սէր ունի.
Եթէ իմ ձայնով ես նրան դուր գամ,
Փոխարէնն անշուշտ պարգև կըստանամ
Եւ նա վերջ կըտայ իմ ստրկութեան։
Այսպէս սիրտ տուեց սոխակն ինքն իրան
Եւ ոգևորուեց,
Երգել սկսեց,
Իւր անուշ ձայնով,
Սիրուն երգերով
Նա իւր պարոնին զմայլեցրեց։
Պարոնն էլ միայն նրան հաւանեց
Եւ լաւ խնամեց,
Իսկ միւսներին—
Վատ երգողներին
Իսկոյն արձակեց։
Եւ այնուհետև մեր խեղճ սոխակին
Աւելի ամուր ու պինդ փակեցին։

88. ԷՇՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

Բացուել էր գարուն, սար ու ձոր ծաղկել,
Անուշ հոտն ու հովը ամեն տեղ բռնել.

Ամէն աշխարհից, հեռու տեղերից
Փախած թռչուններն իրանց բներից
Չ'կան ողջունել գալուստը գարնան՝
Մայր ու ձագ նստած թփերի վրան։
Պարկեշտ սոխակն էլ իւր այրուած սրտի,
Իւր սիրուն վարդի սէրն ու իւր մտքի
Կարօտն ու աշխոյժ բերան բերելով,
Խոր ձորում նստած, վշտերը լալով
Նայում էր ջրին, իւր վարդի թփին,
Սպասում էր, որ բացուի սիրելին։
Բայց վարդն անիրաւ մնացել էր փակ,
Սոխակի սիրտը դարձել էր կրակ։
Այդ դառն րոպէին սատանի քամին
Ո՞րտեղից հանեց մեր կորած իշին.
Քունն էր հատել, թէ կերը պակսել,
Գայլն էր յետ ածել, թէ տէրը գնքսել,—
Ականջները խլշած,
Սարն ի վեր ընկած՝
Վազեց ու հասաւ, դունչը վրայ բերեց.
Անմեղ վարդի թուփն ու կոկոնն բռնեց,
Փշրեց ու ջարդեց, արաւ կտոր-կտոր
Ու ինքը վայր ի ձոր
Գլուխն առաւ գնաց։
Սոխակն այս բանը որ տեսաւ,
Եկաւ,
Վարդի վրայ կանգնեց,
Իւր սուգն սկսեց.
—Աննման իմ վարդ, ցանկալի հոգոյս,
Սրտիս բերկրանքի ապաւէն ու յոյս.
Ինչի՞ դառն օրահաս հանեց քեզ աշխարհ,
Երբ ոչ ոք գինդ պէտք է չիմանար։
Երկինքն է տեղդ, ինչի՞ ես մնում
Իշի կերակուր այս փշի միջում.
Քանի փուշ ու էշ երկրից չեն պակաս,

Մտածում եմ, որ անտէր կըմնաս.
Կամ այրիր դու ինձ, որ մի օր պրծնեմ,
Կամ թև ա՛ռ, թռչենք, երեսիդ մեռնեմ։
—Ի՞մ սիրուն սոխակ, մի՛ այդքան ցաւիր,
Կա՛ց մեր միջումը, քո վարդը գովիր։
Էշն աղբի մէջ է առել իւր ծնունդ,
Նրա հոտոփն էլ առնում է սնունդ.
Քեզ ծառ ու ծաղիկ, քեզ վարդ, մանուշակ
Պարգևել է Տէրն, իմ ազնիւ սոխակ։

89. ԷՇՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

Իշուկը մի սոխակ տեսաւ։
—Մէկ ինձ նայիր, նրան ասաւ.
Ասում են՝ դու լաւ ես երգում,
Բայց չգիտեմ, ճի՞շտ են ասում։
Ես ականջներ ունիմ լայն-լայն,
Լաւ եմ լսում ամէն մի ձայն.
Բայց քո երգը ես չեմ լսած,
Թէև լսել շատ եմ ուզած։
Այս լաւ եղաւ, որ քեզ գտայ,
Դէ, մէկ երգիր, մէկ բլբլա՛,
Տեսնեմ՝ ուղի՞ղ լաւ ես երգում,
Թէ՞ իզուր են այդքան գովում։
Անմեղ սոխակը նազ չարաւ,
Սիրուն կտուցը բաց արաւ,
Ուզեց ցոյց տալ աւանակին,
Որ զուր չեն գովում սոխակին։
Ձայնը լարեց ու սկսեց...
Սոխակի ձա՛յն, ինչե՛ր չասեց.—
Մէկ խօսում էր ու մէկ երգում,
Հազա՛ր խաղով խաղացնում.
Մէկ դայլայլում, դըլդըլցնում,
Մէկ գեղգեղում, կըլկըլցնում,
Այնպէս շվվում, սրնգում էր,

Որ սար ու ձոր գլվգլում էր·
Լեռ քարերն էլ դարձրին ուշ·
Այնքան քաղցր էր, այնքան անույշ·
Ամեն մի շունչ և արարած
Լսում էր լուռ՝ ապուշ կտրած։
Քամին կտրեց իւր վզզոցը,
Աղբիւրն իրա քըչքըչոցը·
Ո՛չ մի տերև չէր սլսլըլում,
Ո՛չ մի Թռչուն չէր ծըլվըլում։
Տաւարներն էլ չարածեցին,
Այլ նստեցան, ականջ դրին.
Տաւարածն էլ՝ շունչը քաշած՝
Սոխակին էր լսում ապշած։
Անմեղ ժպիտը բերանին,
Ձեռքով էր անում ընկերին։
    Վերջապէս սոխակը լռեց,
Իշի վճռին ականջ դրեց·
—Է՛հ, էշն ասաց, վատ չես երգում,
Լաւ ես ծըլվում, ծըլծըլվում.
Բայց ես շատ եմ ափսոսում քեզ,
Որ չես երգում աքլարի պէս։
Եթէ մեր աքլորին տեսնես,
Նրա երգին ականջ դնես,
Այնուհետև նրա նման
Դու էլ կերգես շատ աննման։
    Այս վճիռը որ իմացաւ,
Մեր սոխակը շատ նեղացաւ.
Նա չգիտէր, որ իւր դիմաց
Մի անճաշակ էշ էր կանգնած.
Թևին խփեց, Թռաւ-գնաց
Դէպ աշխարհն երանելեաց։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Բ. ԲՆՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

90. ԱՌԱՒՕՏ

Գիշերն անցաւ. առաւօտեան
Մէգը փռուեց դաշտի վրայ·
Շուտով արտոյտն էլ վաղորդեան
Աւետիքը պիտի տայ·—
«Արշալոյսը բացուեցաւ,
«Քնած երկիրն արԹնացաւ»։

Դեռ նիրհում են դաշտ ու անտառ,
Բայց զեփիւռը արտերին,
Գուրգուրալով երգ սիրավառ՝
Շշնչում է մեղմագին.
«Արշալոյսը բացուեցաւ,
«Համ-արարած արԹնացաւ»։

---

91. ԱԼԻՔ

Քամին փչեց հիւսիսից,
Ծովի ջուրը խռովեց·
Փրփուր-փրփուր ալիքներ
Միմեանց յետքից գլորեց։

Գլորւում են գոռալով,
Բերում աւազ, խիճ ու քար·
Այստեղ խոտն է կտանում,
Այնտեղ մացառ, Թուփ ու ծառ։

Նրա փրփրած ալեաց մէջ
Տատանւում են նաւ, նաւակ.
Մերթ լեռնացած բարձրանում
Եւ մերթ իջնում խոր յատակ։

Բայց տես այն ժայռ սեպացած,
Որ կանգնած է քո դիմաց.
Ինչպէս հպարտ նայում է
Ծովի ահեղ այդ ալեաց։

Նրան ծեծում են ալիք,
Զարդւում, փշրւում, յետ փախչում,
Իսկ նա հանգիստ կանգնած է,
Նրան ոչինչ չէ շարժում։

---

92. ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳ

Արի, գութա՛ն, վարի, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել.
Առը շո՛ւռ տուր, խոփիդ ղուրպան,
Օրհնեա՛լ է Աստուած. հօռովէ՜լ։

Քաշի՛ր, եզը, ուսիդ մատաղ,
Քաշիր, քաշենք, վար անենք.
Ծիպտին արա՛, քշի՛ր, հօտաղ,
Մեր սև օրին ճար անենք։

Պարտատէրը գանգատ գնաց,
Քեօխվէն կըգայ կըծեծի.
Տէրտէրն օրհնեց, անվարձ մնաց,
Կըբարկանայ՝ կանիծի։

Դէ՛հ, քաշեցէ՛ք, դէ՛հ, քշեցէ՛ք,
Է՛լ մեր դառը քրտինքը.
Զարչարուեցէք, աշխատեցէք, —
Ողորմած է երկինքը։

Արի, գութան, վարի, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել.
Առը շուռ տուր, խոփիդ ղուրպան,
Օրհնեալ է Աստուած. հօռովէլ...

93. ԵՐԿՐԱԳՈՐԾ

Ո՛հ, երկրագործ, երկրագործ
Որքա՜ն սիրո՜ւն է քո գործ։
Արևը չելած՝ մաճն է քո ձեռքիդ,
Եօթ զոյգ եզ, զոմէշ լծած գութանիդ,
Ծրում ես, պատռում դու կոշտ ու խոպան,
Լեռներ ու ձորեր, հանդ ու արդաստան։
Ցանում ես ցորեն, կորեկ ու գարի,
Բամբակ ու բրինձ ամենայն տարի։
Ծլում են, ծաղկում ճակտիդ քրտինքով
Քո վարած դաշտեր, որ լի էր փշով։
Անցնում է գարուն։ Ոսկեզօծ հասկեր
Լցւում, ծածկում են քո սիրուն արտեր.
Քամին փչում է, արտը տատանում,
Կարծես նոր հարս է, հօրանց է գնում։
Ո՛հ երկրագործ, երկրագո՜րծ,
Որքա՜ն սիրո՜ւն է քո գործ։

Հասնում է ամառ։ Մանգաղը ձեռքիդ
Հնձում ես, հնձում, խուրձեր կապոտում.
Խուրձերը բարդ-բարդ՝ սայլով ու ձիով
Կրում ես, տանում, կալը հասցնում։
Այնտեղ կալսում ես, թեղում ու քամում,
Մաքուր ցորենը քո տունը կրում,
Իսկ չոր դարմանը անասնոց համար
Ձմեռուան պաշար՝ մարագը լցնում։
Եւ երբ փչում է դառնաշունչ ձմեռ,
Խրճիթում նստած՝ քո խոփն ես սրում,
Սարքում, պատրաստում արօր ու գութան
Եւ գարնան գալուն նորից սպասում։
Ո՛հ, երկրագո՜րծ, երկրագո՜րծ,
Որքա՜ն սիրո՜ւն է քո գործ։

---

94. ԵՐԿՐԻ ՄՇԱԿՆԵՐ

Օ՜, ծանր հոգսերի խղճուկ զաւակներ,
Որքա՜ն համբերող, քաջ է ձեր հոգին.
Տանջւում էք անվերջ, օրեր, տարիներ,
Կարծես, տանջանքն է միայն ձեր բաժին...

Մանուկ օրերից ձեր մէջ ապրելով,
Վկայ եմ եղել ձեր շատ ցաւերին.
Տեսել եմ, ինչպէս տանջանքի գնով
Դուք հաց էք տալիս հայրենի երկրին։

Տեսել եմ, ինչպէս յուսալից, զուարթ
Դուք մշակում էք անմշակ դաշտեր.
Ինչպէս տանջանքում անլաց, անվհատ
Դուք երգ էք երգում—վաստակի՜ երգեր։

Տեսել եմ, ինչպէս ամառուայ շոգին,
Երբ կրակ է թափում արևառ երկինք,
Ոսկեշող արտում, մանգաղը ձեռքին,
Դուք մէջք խոնարհած՝ թափում էք քրտինք։

Տեսել եմ, ինչպէս գունաթափ աշնան
Հայրենի երկրի կուրծքը պատռելով,
Այնտեղ թաղում էք, գանձերի նման,
Ոսկի՜ հատիկներ, ոսկի՜ յոյսերով...

Տեսել եմ՝ գարնան սիրուն օրերին,
Պայծառ արևը դեռ նոր ծագելիս,
Կանաչ, ալեծուփ արտերի մօտին
Ձեզ ծունկ խոնարհած ջերմ աղօթելիս։

Տեսել եմ, ինչպէս և՛ ցուրտ, տաղտկալի
Ձմրան գիշերներ նստած խրճիթում,
Յոգնած ձեռքերից դադար չէք տալի—
Խոփն էք նորոգում, մանգաղը սրում...

Եւ այդպէս՝ազնիւ գործին անձնուէր
Ապրում, տանջւում էք անբաւ հոգսերում.
Եւ ձեր տանջանքում, հերո՜ս-մշակներ,
Արդար վաստակն է ձեզ ոգևորում։

Օ՜, հայրենիքիս քրտնաջան որդիք,
Որքա՜ն համբերող, քաջ է ձեր հոգին.
Ձեզնո՛վ է միայն կանգուն հայրենիք.
Համբոյր ու օրհնանք ձեր սուրբ վաստակին։

---

95. ՍԵՐՄՆԱՑԱՆ

Փա՜ռք և երանի՜ քեզ, քա՜ջ սերմնացան,
Որ դաշտն հայրենի չես թողնում խոպան,
Որ ջերմ յոյսերով դու նրա գրկում
Ապրում ես սիրով և սիրով տանջւում։
Փա՜ռք քեզ, որ հզօր, անվհատ հոգով
Թափում ես, մշա՛կ, դու առատ քրտինք.
Քո սուրբ քրտինքով բազո՜ւմ—բիւրաւո՜ր
Ապրում են մարդիկ խաղա՜ղ, երջանի՜կ։
Անխոնջ, ժրաջան դու մեղուի նման,
Հանգիստ չգիտես հայրենի երկրում.
Վի՜շտ, ցաւ ես կրում դու նրա կրծքում,
Մի՜շտ ուրախերես, մի՜շտ զուարթագին։

Դու երգ ես երգում վաստակի ժամին,
Ոգելի՜ց երգեր, սրտառո՜ւչ երգեր,
Եւ քամին նրանց տանում է, տանում
Սարեր ու ձորեր, անտառի խորքեր...
Ծիծաղ ու հրճուանք, կեանքի վայելքներ,
Լաց ու տառապանք, դառն զրկանքներ,
Օրհնանք ու աղօթք, զայրոյթ ու բողոք,
Բոլո՜րն էլ երգով, վառ զգացմունքով
Պատմում ես միայն դու մայր-բնութեան...

Եւ նա ձայնակից, ո՜վ ժիր սերմնցան,
Սրտաբուղխ երգիդ, քո ջերմ զգացման,
Իւր սրտի խորքից տալիս է քեզ միշտ
Քաղցր արձագանք, սիրող մօր նման։

Վաղ առաւօտեան, վառ արշալոյսին,
Օրը բացուելիս, արևը գարնան
Քեզ է առաջին ողջոյնը տալիս.
Իրիկնադէմին, երկրի երեսին
Երբ մութ է իջնում, քեզ է նա նորից
Լեռան յետևից «մնաս բարև» ասում.
Քեզ է համբուրում, քո դէմքը շոյում
Իւր հեզիկ շնչով զեփիւռն հովասուն,
Քեզ է կախարդում, քո ուշքը խլում
Անուշ կարկաչով անհանգիստ առուն.
Գետակը ձորում, թռչունը օդում—
Բոլո՛րն էլ սիրով քեզ են ողջունում,
Քո վաստակն օրհնում ներդաշնակ ձայնով...

---

96. ԱՄՊԵՐ

Հայոց երկնքով ամպեր են վազում
Խիստ քամու ձեռքից։
Սև-սև ամպերը սարերի նման
Անցնում արտերից։
«Կացէք, ո՛վ ամպեր, ինչո՞ւ էք փախչում,
«Անձրև չէք թափում.
«Մեր ծարաւ արտեր օրեր են համրում,
«Ու ձեզ սպասում։
«Քամի՛, դու քամի՛, խղճա՛ արտերին,
«Թո՛ղ այդ ամպերին,
«Կանգնեն ու թափեն անձրևի շիթեր,
«Ջրեն մեր արտեր»։

Քամին հանդարտուեց, մեղմ անձրև թափուեց,
Արտերը ջրեց.
Արտը բարձրացաւ, ցօղուն արձակեց
Ու հասկեր բռնեց։
Գիւղացին գնաց, տեսաւ ու խնդաց,
Խնդաց ու ասաց.
«Փա՜ռք Քեզ, ո՛վ Աստուած, որ տուիր մեզ հաց,
«Չենք մնալ քաղցած»։

---

97. ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՒ

Ե՛կ, գարնան անձրև, թափուի՛ր յորդառատ
Ցրտացած երկրի սառ կրծքի վրայ.
Թո՛ղ նորից երկիրն շունչ քաշէ ազատ,
Թո՛ղ նրա կրծքին ջերմ կեանքը եռայ։

Երկա՜ր նա տանջուեց դառնաշունչ ձմրան
Ցուրտ կապանքներում, քեզ սպասելով.
Նա շա՜տ համբերեց, կենսատու գարնան
Քաղցր կարօտը ջերմ փայփայելով։

Թափուի՛ր, ո՛վ անձրև, իբրև մարգարիտ,
Ինչպէս երկնառաք ցօղը կենսաբեր,
Ոռոգի՛ր դաշտեր, անտառ ու հովիտ,
Կանաչով պատի՛ր լեռներ ու ձորեր։

Թո՛ղ յորդանալով աղբիւր ու գետակ
Սառցէ շղթաներ անահ խորտակեն,
Դուրս գան ափերից, վազեն համարձակ,
Ազատ խոխոջան, ազատ կարկաչեն։

Թո՛ղ քեզ լոյս-արև ժպտայ սիրավառ
Եւ՝ որպէս երկնից հաշտութեան նշան՝
Քո կաթիլներում փայլուն ու պայծառ
Նա սիրով կապէ կարմիր ծիածան...

Ե՛կ, գարնան անձրև, թափուի՛ր յորդառատ
Ցրտացած երկրի սառ կրծքի վրայ.
Թո՛ղ նորից երկիրն շունչ քաշէ ազատ,
Թո՛ղ նրա կրծքին ջերմ կեանքը եռայ։

---

98. ԳԻՒՂՈՒՄ

Գիւղից վերև, ճամպի վրայ,
Տերևախիտ մի ծառ կայ,
Անտառիցը նա զատուած,
Մարդու կացնից ազատուած՝
Դեռ կանգնած է,--և շոգին
Հով է տալիս մշակին։
Իսկ նրանից ո՛չ հեռու
Մի լեռնային պարզ առու՝
Դուրս գալով մութ ծմակից,
Խոխոջում է փրփրալից։
Սակայն նա չէ շատ խորին.
Այն առուակում, կէսօրին,
Երբ որ տապից նեղանում,
Գնում էինք, լողանում,
Խաղում էինք վազվզում
Գոյն-գոյն մանրիկ աւազում։
Եւ մեր ճիչը մանկական՝
Միանալով մի առ ժամ
Այն վտակի աղմուկին՝
Խաղաղ, հանգիստ հովիտին
Կենդանութիւն էր տալիս։
Ա՛խ, որքան էր դիւր գալիս,
Երբ ակլոր խումբը մեր
Աղաղակով վազում էր
Թիթեռնիկի յետևից,
Որ թռչում էր թփերից.

Եւ միշտ յոգնած ժամանակ
Հանգչում էինք ծառի տակ...

---

99. ԳԻՒՂԻ ԺԱՄԸ

Տա՛ն-դօ, տա՛ն-դօ... Նազլո՛ւ, վե՛ր կաց,
Արևն արդէն մայր է մտնում.
Տես, Խաթունն էլ՝ գործը պրծած՝
Փողոցումն է, ժամ է գնում։

Ժամը տուին,—տա՛ն-դօ, տա՛ն-դօ.
Տէ՛ր, փառքդ շատ,—տա՛ն-դօ, տա՛ն-դօ։

Շուտով նախիրն հանդից կըգայ.
Գնանք, որ էլի շուտ յետ գանք,
Կովը կթենք, թը՛ռ-թը՛ռ կաթ տայ,
Կովը կթենք, մեր ցաւն հոգանք։

Ա՛խ, Նա՛զլու ջան, չե՞ս իմանում,
Էգուց էլի աղան կըգայ.
Նրա սիրտը միշտ անկշտում
Էլի ամպի պէս պիտ գոռայ։

«Շուտով, Գրի՛գոր, փողերը բեր...
Էլի՞ չկայ,—կովդ հանի՛ր»...
Ա՛խ, Նա՛զլու ջան, այն ի՞նչ բան էր,
Մի՞տդ է հերու... Տէ՛ր, Դու փրկի՛ր։

Հայրիկդ արդէն գնացել է,
Որ փող ճարէ. երբ պիտի գայ.
Տեսնենք՝ մէկը խղճացե՞լ է...
Ա՛խ, սև օրը Աստուած չտայ։

Շուտով, Նա՛զլու, գնանք ժամը,
Աղօթք անենք. քո ձայնն Աստուած
Շուտ կըլսէ,—այս անգամը
Մեզ չի՛ թողնիլ անկով, անհաց...

100. ՁՄԵՌ

Մեր դաշտն ու հովիտ ձիւնի մէջ թաղուած՝
Ծածկուած են սպիտակ, սառը սաւանով.
Մէգ մառախուղով երկինքն է պատած,
Գետը շղթայուած սառը կապանքով։

Սև-սև ամպերի թանձր ծալքերից
Արևի շողերն էլ չեն թափանցում.
Դառնաշունչ հողմը մռայլ հիւսիսից
Փչում է կատղած և տխուր սուլում։

101. ՄԱՅՐ

Մայր ունէի, մայր նազելի,
Մի փափկասիրտ արարած.
Բուռն սիրով նրան էի
Սիրտս ու հոգիս նուիրած։

Նա էր միակ իմ պաշտելին,
Միակ ծաղիկն իմ հոգոյս.
Նա էր իմ թոյլ, մանուկ կեանքին
Միակ նեցուկ, միակ յոյս։

Եւ ես ուրախ, ես երջանիկ,
Որպէս անհոգ մի թռչնակ՝
Նետւում էի միշտ մօրս գիրկ,
Վայելում սէր ու գգուանք։

Սակայն, աւա՜ղ, մահն անիրաւ,
Մահն անողոք ու դաժան
Ազիզ մօրս խլեց—տարաւ,
Տարաւ անդարձ, յաւիտեան։

Ո՜հ, էլ չունիմ ես մայր անգին,
Որ ինձ սիրէր, փայփայէր,
Որ իմ խղճուկ, անտէր կեանքին
Թև ու թիկունք նա լինէր։

102. ՈՐԲԻԿ

Մերկ ու թուլակազմ եկար այս աշխարհ
Եւ մօրդ գրկում կառնէիր հանգիստ.
Ի՞նչ էր դառնութիւն, չարչարանք ու վիշտ,
Քեզ ծանօթ չէին,—խաղաղ էր հոգիդ։

Բայց միայն, աւա՜ղ, մահը տարաժամ
Տառապեալ մօրդ դրաւ գերեզման.
Եւ քեզ, խե՜ղճ գառնուկ, որբ, անօգնական
Թողեց օտարի մշտափակ դռան։

103. ՄԱՆԿԱՆԸ

Ուրախութիւն քեզ անպակաս,
Ով դու մանուկ սիրելի.
Ծլիր, ծաղկիր ու զօրանաս,
Տալով պտուղ արժանի։

Որպէս ծաղիկ, մանո՛ւկ, քաղցր ես
Եւ շնորհագեղ, որպէս օր։
Մանո՛ւկ, մանո՛ւկ, ինձ չխաբես,
Միշտ կա՛ց այդպէս լուսաւոր։

Նայի՛ր վերև, տես՝ ինչ սիրուն
Այնտեղ փայլում են աստղեր.
Ե՛ւ անթիւ են, և շողշողուն,
Որպէս երկու քո աչեր։

Այնտեղ, հոգեակ, բնակւում է
Մեր սուրբ Հայրը երկնքի.
Նա է, որ մեզ ուղարկում է
Ե՛ւ կեանք, և՛ սէր, և՛ հոգի։

---

104. ԱՒԵՏԱՐԱՆ

Ամէն անգամ, երբ թերթում եմ
Ես էջերը Սուրբ Գրքի,
Միշտ վշտացած մտածում եմ—
Ո՞ւր է սէրը մարդերի,

Որ Փրկիչը սուրբ կտակով
Մարդկութեանը աւանդեց,
Խաչի վրայ իւր արիւնով
Գիր կենդանի դրոշմեց։

Մարդիկ վաղուց մոռացել են
Խաչ ու քարոզ կենդանի.
Աւետարանն ուրացել են,
Էլ Սուրբ Գիրքը գին չունի։

Ամենայն գիրք միշտ կարդում են,
Սիրոյ գիրքը չկամին.
Ո՞ւր, չգիտեմ, որոնում են
Բաղդը իրանց խեղճ կեանքին։

---

105. ԲԵԹՂԵՀԷՄԻ ԱՅՐԻ Ս. ՄԱՆՈՒԿԸ

Անլոյս խաւարը, չարութեան ոգին
Տիրել էր աշխարհ, և վաղուց մարդիկ
Ապառաժ սրտով կործանել էին

Խանդավառ զգացման պատկեր գեղեցիկ.
Անցած օրերի մաքուր պարզութիւն
Ապականութեան ասպարէզ դարձած,
Էլ չէր կարմրում նենգամտութիւն,
Առաքինութեան փառքն էր շիջած…
Բայց հասաւ օրը մի նորոգ կեանքի,
Եւ Բեթղեհէմից նոր արև ծագեց,
Այրից առաջին ճիչը Մանուկի
Փրկութեան ժամը մարդկանց աւետեց։
Նրա ժպիտն էր, որ անհուն սիրով
Սրտերի սառոյցն պիտ հալեցնէր,
Եւ մարդկութիւնը սրա շրթունքով
Ճշմարտութիւնը պիտի ուսանէր։

---

106. ՄԻ՛ ՀԱՒԱՏԱՐ

Չհաւատաս դու, եթէ քեզ ասեն՝
Հանգիստ դու նստիր և յուսով եղիր,—
Օրեր, տարիներ անհոգ թող անցնեն,
Քեզ համար գործը կըգայ ինքն իրեն։

Դու մի՛ հաւատար, թէ որ քեզ ասեն՝
Ձեռքդ մի՛ շարժիր, նստի՛ր՝ ինչպէս կուռ,
Արծիւն ու առիւծ ոսկի կըբերեն,
Քեզ համար օտարք անդուլ կըգործեն։

Դու մի՛ հաւատար այլոց խօսքերին,
Աչքդ մի՛ ձգիր այլոց ձեռքերին.
Միայն հաւատա՛ քո իսկ ույժերին
Եւ քո խելացի, առողջ մտքերին։

---

107. ԵՐԿՈՒ ՀՍԿԱՅ

(Հին զրոյց)

Ա,

—Ո՞վ է այդ հսկան, ի՞նչ ույժի տէր է,
Որ ամբողջ աշխարհ իւր ձեռքն է առել.
Երկրի մի ծայրում ինքը նստել է,
Չորս ծայրն աշխարհի իւր ստրուկ դարձրել:

Ո՞վ է, ո՞վ դա, որ թագաւորների
Վրայ տուգանք ու հարկեր է դնում
Ինչո՞ւ չի գալիս այց իմ աշխարհի,
Ինչո՞ւ չի գալիս Ռոստոմիս տեսնում,—

Իմ սարի նման Ռոստոմին տեսնում,—
Թէ՞ սիրտ չի անում նրա հետ կռուել.
Հապա ինչո՞ւ է հեռուից սպառնում,
Հապա ինչո՞ւ է ողջ երկրին տիրել:

«Ո՛չ, նա թոյլ մարդ չէ, նա էլ է հսկայ.
Պիտի անպատճառ տեսնեմ ես նրան.
Տեսնեմ՝ Ռոստոմիս չափ ույժ նրա մէջ կա՞յ,
Տեսնեմ՝ ի՞նչ մարդ է, ո՞վ է այդ հսկան»:

Բ.

Այս ասաց Զալը, նժոյգը հեծաւ,
Մնաս բարև ասաց իրա աշխարհին,
Ձիուն մտրակեց, սար ու ձոր ընկաւ,
Գնաց պըտրելու հսկայ Սալմանին:

Է՛հ, Աստուած գիտէ շատ գնաց թէ քիչ,
Յոգնած էր, իջաւ, ծառի տակ նստեց,
Տեսաւ, հեռւում մի ինչ որ տեղից
Ծուխ է բարձրանում, ձին այն կողմ քշեց:

Տեսա՜ւ ինչ տեսաւ, ո՛հ, դու ոչ տեսնես,
Տեսաւ, ինչ տեսաւ, էն ինչ էր, Աստուած.
Տեսաւ մի հսկայ, հսկայ լեռան պէս,
Մի իրան յարմար ձիու վրայ նստած:

Բերանն էր դրել չիբուխ ահագին,
Չիբուխի բերանը,—ինչպէս մաղարա,
Դուրս փչած ծուխը նման թուխ ամպին.
(Լուլէն ինչ կըլինէր, էն էլ դու ասա):

Բայց չվախեցաւ Զալ փահլևանը.
Մօտեցաւ, բարև հսկային տուաւ.
Հսկան չընդունեց նրա բարևը,
Ոչ էլ Զալի կողմ երես դարձրաւ:

Սիրտը կոտրուեց Զալ փահլևանի.
«Ես Զալը լինիմ, Ռոստոմն իմ որդին,
Ու սա ինձ վրայ ուշք չդարձնի».
Եւ հսկայի վրայ քշեց նա իւր ձին:

Քշեց նա իւր ձին և ուժգին գոռաց,
Հսկայի մէջքին մզրախը զարկեց.
Հսկան յետ նայեց հիմա ու ժպտաց,
Ապա նա Զալի վզիցը բռնեց.

Բռնեց ու հաւի վառեկի նման
Ոլորեց, ձիու փորի տակ կապեց,—
Իբր թէ ոչինչ,—կրկին իւր ճամպան
Անհոգ ու հանդարտ նա շարունակեց:

Գնաց աղբիւրի մօտ մի վրան տեսաւ,
Տեսաւ մի վրան և այնտեղ իջաւ,
Զալի ականջը մի սիւնից մեխեց,
Որ չփախչի նա, ու ինքը քնեց:

Արթնացաւ: «Ով ես, ո՞վ դու, փահլևան,
Որ յանդգնեցիր խիզախել իմ դէմ»:

—Այմ, քո ղուլն եմ, արևիդ մեռնեմ,
Զալի երկրից եմ,—խեղճ օտարական։

«Զալի երկրի՞ց»... Հսկան ազատեց
Զալ փահլևանին.—«ազատ ես, գնա՛,
Գնա՛, Զալի տղայ Ռոստոմին ասա՝
Սալմանը քեզի կռուի հրաւիրեց։

«Գնա՛, Զալի տղայ Ռոստոմին ասա,
Բաւ է, ինչ հեռուից իրար սպառնացինք,
Եկ, այժմ կռուենք, հերիք է, հերիք,
Աշխարհն երկու տէր պիտի չունենայ։

«Գնա՛, Զալի տղայ Ռոստոմին ասա,
Որ դուրս գայ շուտով, կռուենք իրար դէմ,
Կամ նա կըյաղթէ, կամ ես կըյաղթեմ,
Թող աշխարհի տէր յաղթողը դառնայ։

«Գնա՛, Զալի տղայ Ռոստոմին ասա՛,
Որ դուրս գայ շուտով, իրան եմ սպասում.—
Գնա՛, քեզ իբրև դեսպան եմ ղրկում,
Քեզ ազատում եմ, դէհ, շուտով գնա՛։

Գ.

—Հայրի՛կ, ինձ պատմիր, ինչո՞ւ ես տխուր,
Ի՞նչդ է ցաւում, ո՞վ է վշտացրել։
—«Որդի՛, ցաւերս, աւա՜ղ, շատ են խոր—
Զալ փահլևանին մարդ է անպատուել»։

—Բա՛, դու Զալն ըլես, Ռոստոմ քո որդին,
Եւ մարդ անպատուել քեզ համարձակուե՞ց։
—«Այո՛, ես Զալն եմ, Ռոստոմ իմ որդին,
Բայց կայ մի Սալման, և նա այդ արեց։

«Այո՛, կայ Սալման, որ Ռոստոմի հօր
Տուած բարևին չպատասխանեց.

Այո՛, կայ Սալման, որ Ռոստոմի հօր
Ծամն էլ անվայել կերպով շղթայեց։

«Դէհ, գնա՛, գնա՛, էլ մի՛ սպասիր,
Գնա՛, անպատուած հօրդ վրէժն ա՛ռ,
Գնա՛, թէ մարդ ես, Սալմանին յաղթիր,
Ապա եթէ ոչ՝ էլ յետ մի դառնար։

«Գնա՛, Սալմանը քեզ կռուի կանչեց,
Գնա՛, անպատուած հօրդ վրէժն առ.
Ցոյց տո՛ւր Սալմանին, որ դու Ռոստոմն ես,
Ապա եթէ ոչ՝ էլ յետ մի դառնար։

«Գնա՛, քաջ կացի՛ր, բայց ազնիւ վարուի՛ր,
Գնա՛ որդեակ իմ, հօրդ վրէժն ա՛ռ,
Գնա՛, Ռոստո՛մ ջան, քաջի պէս կռուի՛ր,
Ապա եթէ ոչ, ո՛հ, յետ մի դառնար...»

Դ

Ռոստոմն ախոռից կանչեց իւր ձիուն,
Մօտեցաւ նրան ձին խրխնջալով
«Հէյ, Նշխեբալաք, հեռու եմ գնում,
Քեզնից բաժնուում եմ, դէհ, մնաս բարով։

«Դէհ, մնաս բարով, բայց չմոռանաս,
Մէկ ճանապարհ, հազար նեղութիւն...
Երբ նեղ տեղն ընկնեմ, ինքդ կիմանաս,—
Թռի՛ր սար ու ձոր, հասի՛ր ինձ իսկոյն»։

Ապա կենդանու ջուխտ աչքից պաչեց,
Բայց Նշխեբալաքն աշխոյժը կորցրեց,
Պաչած աչերից ջուխտ արցունք թափեց
Եւ տխուր դէմքով Ռոստոմին նայեց...

Ե.

«Հա՛յր, մնաս բարով, ահա գնում եմ,
Ընկած պատիւդ պիտի յետ բերեմ.

Թէ որ ինձ տեսար, յաղթող կըտեմնես,
Ապա եթէ ոչ՝ ինձ տեմնելու չես։

«Մ՛ի յուսահատուիր, դեռ դու չես ընկել,
Ողջ է Ռոստոմը, դեռ նա չի մեռել.
Թէ որ ինձ տեսար, յաղթող կըտեմնես,
Ապա եթէ ոչ՝ ինձ տեմնելու չես։

«Դէհ, մնաս բարով, սիրտդ մի կոտրիր,
Կռուի եմ գնում, մի յուսահատուիր,
Թէ որ ինձ տեսար, յաղթող կըտեմնես,
Ապա եթէ ոչ, ինձ տեմնելու չես։

«Բայց նայիր ձիուս, նա կըգգայ իսկոյն,
Երբ հասնի չարիք ինձ կամ նեղութիւն.
Կիմանայ, ոտքով գետին կըդոփի,
Սանձը կըկտրի, դէս ու դէն կընկնի.

«Իմացիր, որ ես նեղ տեղն եմ ընկել.
Առ այն ժամանակ իմ բոլոր զէնքեր,
Կապիր ձիուս վրայ, թող արձակ դաշտում,
Կըգայ, ուր լինիմ, կըգտնի իսկոյն»։

Ապա նա առաւ իւր քեռու տղան՝
Սրտոտ ու ձայնեղ, անունն էր Վըժան.
Մէկ որ գոռում էր, թռչունն ու գեռունն
Սարսափում էին մարդ և անասուն։

Երկուսն էլ հագան դէրվիշի շորեր,
Ուսին ձգեցին մի-մի թմբուկ էլ
Ու ճամպայ ընկան թմբուկ զարկելով,
Դէրվիշի նման խաղեր կանչելով։

Զ.

Շատ չար ու բարու ճամպին ռաստ եկան,
Շատ անծանօթ տեղ, ոգիներ տեսան,
Տեսան նրանք ջիններ, դևեր, զանգիներ,
Հուրի-փերիներ, քաջքեր ու չարեր։

Բայց ով խիզախեց կտրել նրանց առաջ,
Նա իւր արևին մնաս բարև ասաց,—
Նրա մէկ կէսը ընկաւ Հնդկաստան,
Մէկը Չինամաչին, մէկը Փռանգստան։

Բայց խմբով դևեր կարկտի նման
Յարձակւում էին և կտրում ճամպան,
Մէկ դևի ոտից բռնում էր Ռոստոմ,
Նրանով միւսների գլխները ջարդում։

Այդպիսով նրանք բաւական գնացին,
Է՛հ, ղարիբ էին, ցաւեր քաշեցին,
Շատ քաղց ու ծարաւ, շատ ցրտեր կերան,
Բայց ամենևին չվհատուեցան։

Է.

Մի օր նրանք տեսան, որ ամպերի մէջ
Մի ինչ որ սև բան արագ թռչում էր.
Թռչուն չէր լինիլ—թւում էր շատ մեծ,
Մարդ էլ չէր լինիլ—նա թևեր ունէր։

Երկար նայեցին, տեսան, որ դև էր,
Մի թևաւոր դև, զարհուրելի բան,
Ոտքերով բռնած մի աղջիկ ունէր—
Մի հրեղէն աղջիկ,—փախցնում էր նրան։

«Է, հէյ», որոտաց Վըժանը ուժգին,
Դևը սարսըռած, բայց դեռ թռչում էր,—
Ռոստոմը վերցրեց մի լեառ ահագին
Եւ այն է՝ նրան ուզում էր խփել,

Յանկարծ աղջկան դևը վայր ձգեց,
Ինքն էլ թուլացած ընկնում էր հեռը,
Բայց ուշքի եկաւ, ոյժը հաւաքեց
Եւ ապա թափով ճեղքեց ամպերը։

Ը.

«Ո՞վ ես դու, ո՞վ ես, ի՞նչ տեղից, ասա,
Ո՞վ է քո հայրը, աննման խաթուն։
—Աստուած քո բազկին աւելի ոյժ տայ,
Հայրս է թագաւոր այս ինչ աշխարհում։

«Ո՞ւր էր զզուելի դևը փախցնում քեզ,
Զօռո՞վ էր տանում, թէ քո կամքով էր։
—Ուր էր տանում ինձ, այդ ես չգիտեմ,
Դևն ինձ մեր տանից ոյժով փախցրել էր։

«Դէհ, գնանք, գտնենք սրա հօրը, Վըժան,
Կորած աղջիկը իւր տիրոջ դարձնենք,
Ապա մենք բռնենք կրկին մեր ճամպան,
Հսկայ Սալմանին գնաք, որոնենք

Աղջկայ հօրը գտան նրանք շուտով,
Հայրը մեծ պատուով նրանց ընդունեց.
Յոյսը աղջկանից կտրել էր վաղուց,
Գտաւ կորուստը և նա արտասուեց։

Եւ յետոյ նստան մի ճոխ խնճոյքի,
Ուրախանում էին երկար ու խնդում,
Ապա խոնջացած, յոգնած Ռոստոմի
Աչքը քուն առաւ, քաղցր և անուշ քուն։

Թ.

Յանկարծ մի ահեղ որոտ լսուեցաւ,
Թնդացին ուժգին սարեր ու ձորեր,
Մարդիկ վայր ընկան, ձայնը գոռում էր.
«Ռոստոմ, հասիր շուտ, Սալմանն ինձ տարաւ»։

Վեր թռաւ քնից շփոթուած Ռոստոմ,
Նայեց իւր կողքին, բայց չկար Վըժան,

Նրա տեղ կանգնած իւր ձին աննման՝
Նշխերալաքն էր տիրոջը նայում։

Արիւն և քրտինք կտրած փրփրում,
Ոտքով դոփում էր գետինն անհամբեր.
Թամբի վրայ առած Ռոստոմի զէնքեր,
Տիրոջ հրամանին պատրաստ սպասում։

Եւ ձիու մէջքին Ռոստոմը թռաւ.
«Դէհ, գնա, թռիր,
«Դէհ, գնա, վազիր,
«Սալմանին գտիր,
«Սալմանին հասիր»։

Ժ.

Սալմանը տարաւ Վըժանին կապեց,
Մութը գնդանում ամուր շղթայեց,
Ապա յետ դարձաւ, տեսաւ, որ հեռւում
Ռոստոմ կրակի պէս իրան է վազում։

Հեծաւ կրկին ձի, ընդառաջ անցաւ,
Ռոստոմ Սալմանին ահա մօտեցաւ.
Հսկաներն իրար խոր ողջունեցին,
Ապա ձիաներն յետ-յետ քշեցին։

Զէնքերն աջ ձեռին, վահաններ ձախին,
Հրապարակի վրայ նրանք պըտտեցին.
Ապա լախտերը ձեռքներին առած,
Իրար վրայ ընկան՝ վառուած, կատաղած։

Յանկարծ երկիրը դողալ սկսեց,
Լեռներ քանդուեցին հովիտների մէջ,
Դաշտը ծովի պէս ալեկոծւում էր,
Իսկ մութ գնդանում Վըժան գոռում էր։

Բայց հսկաները կռւում են կրկին,
Գուրզերը առան, լախտը ձգեցին,
Բայց գուրզն էլ ջարդուեց, վահանն էլ ճայթեց,
Սրերն էլ կոտրուեց, բայց ոչ ոք չյաղթեց։

Կրկին ձիաներն յետ ու յետ տարան,
Ապա հսկաներն հանգչելու իջան։
Մէկ տարի անցաւ, թէ երկու, կրկին
Հսկաներն իրար վրայ արշաւեցին։

Կրկին երկիրը դողալ սկսեց,
Լեռներ քանդուեցին հովիտների մէջ,
Դաշտը ծովի պէս ալեկոծւում էր,
Իսկ մութ գնդանում Վրժանը գոռում էր…

Այսպէս անցկացան երկար տարիներ,
Բայց նրանց կռիւը դեռ չի վերջացել.
Ռոստոմն ու Սալման աշխարհի ծայրում
Դեռ մինչև հիմա կռւում են, կռւում…

ԺԱ.

Ահա դրանից է, որ երբեմնապէս
Տարին կամ երկու տարին մի անգամ
Երկիր շարժւում է ծովի ջրի պէս,
Շատ տեղ ճեղքւում է, լսւում է խուլ ձայն.—

Այն հին կռիւն են Ռոստոմ ու Սալման
Կրկին ու կրկին վերանորոգում,
Ջարդում են իրար զէնքեր ու վահան,
Իսկ մութ գնդանում Վրժանն է գոռում։

ՑԱՆԿ

№ — երես.

1. Քոյր և եղբայր 3
2. Ստահակ որդին, Մամուրեան 4
3. Բարեկամութիւն 5
4. Երեք բարեկամ . . . . —
5. Եղբայրասիրութիւն, Նազարեան 6
6. Հարազատ մայրը, Ս. գիրք 7
7. Ծնողասէր աղջիկը . . . 8
8. Որդիական սէր, Մամուրեան 9
9. Անձնազոհ ընկեր, Ս. Յակովբեան 10
10. Առողջութիւն և երկրակեցութիւն, Թ. Ն. ք. Նիկողոս. 11
11. Բաղդ և հասրտութիւն Թ. Ն. 12
12. Քար 13
13. Մուրացկան, Տուրգենև . . 14
14. Օտարականը 15
15. Երկու մոմ, Մամուրեան . —
16. Աղբիւր 16
17. Թանկագին մատանի . . 17
18. Ագահութեան հետևանքը, Նազարեան 18
19. Ծնծղուկ, Տուրգենև . . . —
20. Սպանուած լորը, Նոյն . 19
21. Կարմիր լապտեր, Վուչետիչ 22
22. Ամենապէտք. բանը աշխարհում, Ա. Իսահակեան . . 25
23. Երգի հրապոյրը, Նոյն . . 28
24. Արցունք, Ա. Ծատուրեան . 30
25. Փշուր մը հաց, Ահարոնեան 34

Բ. ԲԱԺԻՆ.

26. Սասուն, Սրվանձտեան. . 41
27. Գարնան սկիզբը, Րաֆֆի . 42

№ — Երես.

28. Գարնանը, Պռօշեան . . . 43
29. Գիւղ. ընտանիքի պարապմունքը, Րաֆֆի 46
30. Սերմնացան, Արարատեան . 47
31. Սար գնալը, Աբովեան . . 48
32. Մայիսուայ փոթորիկը. Լէօ 49
33. Փոթորկից յետոյ, Լէօ . . 50
34. Անտառի գեղեցկութիւնը . . —
35. Անտառի երաժիշտները, Աղայեան 51
36. Ամպ, Րաֆֆի 52
37. Կարկուտ, Կ. Մել. Շահնազ. 55
38. Ամառն անտառում, Րաֆֆի 57
39. Հունձ 59
40. Այգեքաղ, Աղայեան . . . —
41. Ձմեռը հայ գիւղերում, Աբովեան 60

Գ ԲԱԺԻՆ

42. Ձի 64
43. Հաւատարիմ շունը . . . 65
44. Վանայ կատուն, Փափազեան 67
45. Ուղտ 69
46. Գայլ, Մուչայեան 70
47. Արջ, Նոյն 74
48. Առիւծ և վագր 79
49. Առիւծն ու շունը . . . 82
50. Երախտագէտ առիւծը . . 83
51. Կետ 84
52. Փիղ 86
53. Կրծողներ, Մուչայեան . . 88
54. Ինչպէս են պաշտպան. կենդանին. ու բոյսերը, Նոյն. . 91
55. Աղաւնիներ, Րաֆֆ ի .

56. Թուխսըկան, Բարկաս . . 98
57. Արծիւ, Տ. Հրանոյշ . . 99
. Անձնազոհ հովիւ, նոյն . 103

Դ. ԲԱԺԻՆ

59. Երկիրը ծայր ունի՞, թէ ոչ 105
60 Ինչից են առաջ գալիս ցերեկն ու գիշերը 106
61. Աշխարհի մասերը և ովկիանոսները 107
62. Տիեզերք 108
63. Ամերիկայի գիւտը . . . 111

Ե. ԲԱԺԻՆ

64. Քրիստոնէութեան սկիզբը Հայերի մէջ 118
65. Ս. Գրիգոր Լուսաւորիչ . . 120
66. Հայոց տառերի գիւտը, Կ. Կ. 122
67. Մովսէս Խորենացի . . . 125
68. Աւարայրի կրօն պատերազմը, Կ. Կ. . . . . —
ա, Հայ իշխան. անմիաբան. 127
բ. Յազկերտ Թագ. Հրովարտակը և Հայերի պատասխ. 128
գ. Հայ իշխանների Պարսկաստան գնալը և նրանց վեր. 129
դ. Վասակի ուրացութիւնը 130
ե. Աւարայրի ճակատամ. 131
զ. Հայաստանի վիճակը պատերազմից յետոյ . . . 132

Զ. ԲԱԺԻՆ

69. Աքաղաղ և մարգար, Կրիլով 134
70. Կարապը ձուկը և խեչափառը, նոյն . . . . —
71. Հովիւ և մոծակ, նոյն . . 135
72. Գիւղական և օձ, նոյն. . 136
73. Հայելի և կապիկ, նոյն . . 137
74. Կապիկ և ակնոց, նոյն . . 138
75. Աղուէս և խաղող, նոյն . . 139
76. Հետաքրքիր, նոյն . . . —
77. Ջրվէժ և առուակ, նոյն . 140
78. Առիւծի որսորդութ, նոյն . 141
79. Առիւծն ու մոծակը, նոյն . 143
80. Առիւծն ու ճիճուն, Ծատ. 144
81. Առիւծն ու կաղնին, Թում. . 146
82 Գիւղական և մշակ, Կրիլով 147
83. Բազէն և աղաւնին, Ժուկով 148
84. Ճպուռ. ու մրջիւն, Կրիլով . 149
85. Գառն ու գայլը, նոյն . . 150
86. Էշն ու գիւղացին, նոյն . . 151
87. Սոխակներ, նոյն, Թ. Աղ. . 152
88. Էշն ու սոխակը, Աբովեան . 153
89. Էշն ու սոխակը, Թ. Աղ. . . 155

Է. ԲԱԺԻՆ.

90. Առաւօտ, Յովհաննիսեան . 157
91. Ալիք, Կ. Մել-Շահնազ . —
92. Գութանի երգ, Թումանեան . . 158
93 Երկրագործ, Կ. Մել-Շահ. . 159
94. Երկրի մշակներ, Ծատ. . . 160
95. Սերմնացան, նոյն 161
96. Ամպեր, Կ. Մել-Շահնազ . 162
97. Գարնան անձրև, Ծատ . . 163
98 Գիւղում, Թումանեան . . 164
99. Գիւղի ժամը, Յովհան. . . 165
100. Ձմեռ, Բարխուդարեան . . 166
101. Մայր, Ծատուրեան . . . —
102. Որբիկ, նոյն 167
103. Մանկանը, Շահազիզ . . —
104. Աւետարան, Յովհաննիս. . 168
105. Բեթ. այրի Ս. Մանուկը, նոյն —
106. Մի հաւատար, Մանուէլեան 169
107. Երկու հսկայ. Գ. Աստուածատրեան 170

73.

ՀՀ Ազգային գրադարան
NL0242065

7948